

ԷԹՆՈՍՏԻՈԼՈԳԻԱԿԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ



ОТДЕЛ ИССЛЕДОВАНИЙ ДИАСПОРЫ
ИНСТИТУТА АХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
ЦЕНТР ИССЛЕДОВАНИЙ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ УНИВЕРСИТЕТА АЙКАЗЯН
ЛИВАНСКАЯ РЕСПУБЛИКА

ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
АРМЕНИИ И ДИАСПОРЫ

11

ЛИВАНСКИЕ АРМЯНЕ СЕГОДНЯ
ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

DEPARTMENT OF DIASPORA STUDIES
INSTITUT OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA
ARMENIAN DIASPORA RESEARCH CENTER
HAIGAZIAN UNIVERSITY
LEBANON

ETHNO-SOCIOLOGICAL STUDIES
OF ARMENIA AND THE DIASPORA

11

LEBANESE-ARMENIANS TODAY
ETHNO-SOCIOLOGICAL STUDIES

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
ЕРЕВАН-БЕЙРУТ 2019

PUBLISHING INSTITUTE ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA
YEREVAN-BEIRUT 2019

ՀՀ ԳԱԱ ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրակազմ՝

Ռուբեն Կարապետյան (պատրաստման արտ խմբագիր)
Անդրանիկ Տազևեան, Սյուզաննա Բարսեղյան

Գրախոսներ՝

այ. գ. դ., պրոֆ. Ս. Մկրտչյան

այ. գ. դ. Մ. Գալստյան

L 501 Լիբանանահայերն այսօր. էթնոսոցիոլոգիական հետազոտություն-
ներ. — Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2019, 176 էջ

Ներկայացված աշխատությունը Հայաստանի և սփյուռքի հայ գիտնականների համատեղ հրատարակությունների շարքի երրորդ և ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի և Հայկազեան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի համագործակցության երկրորդ փորձն է: Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջինը ներկայացնում է լիբանանահայ գիտնականների հետազոտությունները՝ նվիրված համայնքի պատմությանը և լիբանանահայերի սոցիալ-մշակութային ինտեգրման խնդիրներին: Երկրորդ մասում զետեղված են հայաստանցի գիտնականների հոդվածները: Առաջինում տրված է լիբանանահայերի ուսումնասիրության ծրագրի և դրված խնդիրների պարզաբանումը: Իսկ երկրորդ հոդվածում ներկայացվում են Լիբանանի հայերի շրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքները: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից՝ Բեյրութի Հայկազեան համալսարանի Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի աջակցությամբ: Գրքի վերլուծական նյութերը ներկայացնում են լիբանանահայերի ազգային դիմագծի պահպանման ու զարգացման պատմությունը և ներկա իրավիճակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան <i>Ռուբեն Կարապետյան</i>	8
ՄԱՍ Ա	
Լիբանանը՝ Իրայատուկ իր Տարածաշրջանին մեջ (Լիբանանահայության Ակնարկային Նկարագրական) <i>Վեր. Փոլ Հայրությունս</i>	22
Լիբանանահայ Համարկումին Առանձնայատկությունները <i>Անդրանիկ Տազևեսան</i>	32
Լիբանանահայ Մշակոյթի Իրայատկությունները <i>Սևակ Յակոբեան</i>	48
ՄԱՍ Բ	
Լիբանանահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության նպատակները և մեթոդաբանությունը <i>Ռուբեն Կարապետյան</i>	66
Լիբանանի հայ բնակչության էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները <i>Ռուբեն Կարապետյան, Լուսինե Տանաջյան, Սոնա Ներսիսյան, Կարինե Նալբանդյան, Սյուզաննա Բարսեղյան</i>	91
Էթնոսոցիալական գործընթացներ	92
Էթնոմշակութային միջավայր	132
Վերջաբան <i>Ռուբեն Կարապետյան</i>	161
Հավելված	174

СОДЕРЖАНИЕ

Предисловие <i>Рубен Карапетян</i>	13
ЧАСТЬ А	
Ливан в особенном регионе (Очерк описания ливанских армян) <i>Преп. Пол Айдосян</i>	22
Особенности интеграции ливанских армян <i>Андраник Дакесян</i>	32
Культурная жизнь ливанских армян <i>Севак Акобян</i>	48
ЧАСТЬ Б	
Цели и методика этносоциологического исследования армян Ливана <i>Рубен Карапетян</i>	66
Результаты этносоциологического исследования армянского населения Ливана <i>Рубен Карапетян, Лусине Танаджян, Сона Нерсисян, Карине Налбандян, Сюзанна Барсегян</i>	91
Этносоциальные процессы	92
Этнокультурная среда	132
Заключение <i>Рубен Карапетян</i>	166
Приложение	174

CONTENTS

Introduction <i>Ruben Karapetyan</i>	17
PART A	
Lebanon's uniqueness in its region: a descriptive overview of the armenians of Lebanon <i>Rev. Paul Haytostian</i>	22
Features of Lebanese Armenian integration <i>Andranik Dakessian</i>	32
The characteristics of Lebanese Armenian culture <i>Sevak Hagopian</i>	48
PART B	
Methodology and aims of the ethno-sociological study of the Lebanese Armenians <i>Ruben Karapetyan</i>	66
The results of the ethno-sociological survey of the Armenian population of Lebanon <i>Ruben Karapetyan, Lusine Tanajyan, Sona Nersisyan, Karine Nalbandyan, Syuzanna Barseghyan</i>	91
Ethno-social processes in Lebanon	92
Ethno Cultural Environment	132
Conclusion <i>Ruben Karapetyan</i>	170
Appendix	174

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայացվող գիրքը երրորդն է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտական հրատարակությունների շարքում՝ նվիրված ժամանակակից հայկական սփյուռքին: Հայաստանի գիտնականներից գատ՝ առանձին բաժինների և հողվածների հեղինակներ են նաև սփյուռքի գիտնականները: Ժամանակակից հայկական սփյուռքի հիմնահարցերի վերաբերյալ գիտական աշխատությունների այս շարքը կոչված է ինչպես ամփոփելու հայկական գաղթօջախների հետազոտությունները, այնպես էլ սփյուռքի մեր գործընկերներին հնարավորին չափ ներգրավելու համատեղ հետազոտական աշխատանքներում: Ենթադրվում է, որ այդպիսի համատեղ գործունեությունը հնարավորություն է տալիս, մի կողմից, խորապես հասկանալու այլազգի միջավայրում հայերի էթնիկության վերարտադրման վիճակը և հեռանկարները, մյուս կողմից էլ նպաստում է էթնոսի մտավոր ներուժի ներառմանը՝ սփյուռքի մասին համակարգված գիտելիքների և Հայաստան-սփյուռք գիտական հարթակի ձևավորման նպատակով:

Առաջին աշխատությունը՝ «Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ»¹, իրականություն դարձավ Հայաստանի և սփյուռքի հետազոտողների թիմի ջանքերով: Հիմնվելով համանուն ծրագրի² շրջանակներում Մոսկվայի, Լոս Անջելեսի և Թեհրանի հայերի հետազոտությունների նյութերի վրա՝ այդ թիմային մենագրության մեջ

1 *Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ*, (պատ. խմբ. Կարապետյան Ռ.), Երևան, 2014, «Գիտություն» հրատարակչություն, 183 էջ:

2 Կարապետյան Ռ., *Հայ համայնքներն այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն*, Երևան, 2018, ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, էջ 10–22:

ՀՀ և վերոնշյալ համայնքների հետազոտողները ներկայացրել են հայերի շրջանում տեղի ունեցող ժամանակակից էթնոսոցիալական գործընթացների վերլուծությունը:

Երկրորդ հրատարակությունը՝ «Հայկական սփյուռքը հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների համատեքստում»³, դարձավ հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների տնտեսական բաղադրիչի ուսումնասիրման ոլորտում մշակումների արդյունքը: Մոսկվայի և Երևանի գիտնականների՝ փիլիսոփաների, ժողովրդագիրների, տնտեսագետների, էթնոսոցիոլոգների համատեղ ջանքերով վերլուծվել է այդ փոխհարաբերությունների փորձը, և սահմանվել են հնարավոր հեռանկարները: Ընդ որում, աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձվել այդ գործընթացների զարգացման գործոնների վերլուծությանը և հետազոտության կիրառական ելքերին:

Ներկայացվող գրքի գաղափարը ծնվել է լիբանանահայերի ուսումնասիրության ընթացքում, որն իրականացրել են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժնի աշխատակիցները՝ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ, վերապատվելի, դոկտոր Փօլ Հայտօսթեանի և նույն համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, դոկտոր Անդրանիկ Տագեսեանի օժանդակությամբ: Այդ համագործակցության հաջորդ քայլը Լիբանանի հայերի վերաբերյալ համատեղ աշխատությունն էր:

Սույն գրքում հետազոտության առարկան Լիբանանի հայերն են: Սփյուռքում հայերի ազգային կյանքի կազմակերպման ողջ բազմազանության մեջ հետազոտության նման օբյեկտի առանձնացումը պայմանավորված էր էթնոհավաք տեղաբաշխման և առանձնահատուկ իրավաքաղաքական կարգավիճակի պայմաններում էթնիկ խմբի պահպանման և զարգացման գործընթացների վերաբերյալ գիտելիքների ստացման անհրաժեշտությամբ: Դա հատկապես կարևորվում է, եթե նկատի առնենք, որ հայերի էթնիկ «գոյապահպանման» գործընթացը պայմանավորվում է երկու բևեռային պայմանով՝ «հավաք» և «ցրիվ» բնակեցմամբ: Տեղաբաշխման բնույթը, էթնո-

3 *Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей*, (под. ред. Аветисян А., Григорьян Э., Карапетян Р.), Москва, 2013, 246 ст.

կրոնական միջավայրը, բնակության երկրի սոցիալ-քաղաքական կառուցվածքը և շատ այլ գործոններ ձևավորում են հատկանիշների ամբողջություն, որոնք որոշում են էթնոսի յուրաքանչյուր խմբի հարաբերակցումն այդ հակադրականության առաջին կամ երկրորդ անդամին: Եվ այդ բազմազանության մեջ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հետազոտական փնտրտուք՝ տրամաբանական հաջորդականությամբ ճանաչելու յուրաքանչյուր առանձին դեպքի համար համընդհանուրը և առանձնահատուկը՝ համեմատական և համադրական ուսումնասիրությունների լայն հենքի վրա: Ըստ էության, դրանք կարող են կրել միջմշակութային բնույթ, քանի որ համադրում և ուսումնասիրում են ոչ միայն բազմազան սոցիալ-մշակութային միջավայրերը, այլև այդ միջավայրերի հետ նշանակալիորեն ինտեգրված հայերին: Այսպիսով, հատկանիշներ գտնելու դժվարությունը, որը թույլ է տալիս իրականացնել միջմշակութային հետազոտություններին բնորոշ համեմատական վերլուծություն, զգալիորեն բարդացնում է հայերի տարբեր խմբերի ուսումնասիրությունը սփյուռքում: Հենց այդ պատճառով անհրաժեշտ է հաշվարկի համակարգի փնտրտուք, որ կծառայի որպես խնդիրների մշակման և լուծման առանցք: Այդ խնդիրները կոչված են, առաջին հերթին, բացահայտելու հայերի յուրաքանչյուր խմբի նշանակալի ընդհանուր էթնիկ գծերը, երկրորդ՝ առանձնացնելու էթնոսոցիալական ցուցանիշների փոփոխության օրինաչափությունները՝ ըստ միջավայրի բնութագրիչների, և երրորդ՝ ուսումնասիրելու տվյալ միջավայրում ձեռք բերած ինտեգրալ գծերի ցուցիչները և դրանց դրսևորման առանձնահատկությունները:

Ինչպես ցույց տվեց մեր նախկին հետազոտությունների փորձը, տարբեր էթնոսոցիալական միջավայրերում էթնոսի տարբեր խմբերի համեմատումը և համադրումը կարելի է իրականացնել առանձին թեմատիկ մշակումների շրջանակներում, սակայն բավական դժվար է տալ առավել լայն հետազոտական ընդգրկմամբ համեմատական վերլուծություն: Ելնելով այդ փորձից՝ հետազոտական խումբը նպատակադրվեց համակողմանի ուսումնասիրել հայերի առանձին խմբերում տեղի ունեցող գործընթացները մի երկրում, որ-

տեղ նրանք տեղաբաշխված են հոծ, և իշխանության կառուցվածքն ու իրավական կարգավիճակը թույլ են տալիս օրինականացնելու էթնիկ խմբին որպես երկրի պետական կառուցվածքի հիմնական օղակ: Ակնհայտ է, որ հայերի միաէթնիկ խմբի մենագրական ուսումնասիրությունը, մի կողմից, հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնելու այն խնդիրների վրա, որոնք ընդգրկում են հարցերի լայն շրջանակ, հետևաբար՝ դրանց վերլուծությունը առավել խորքային է: Մյուս կողմից՝ նման հետազոտությունը կարող է դառնալ հայերի առանձին համեմատական (հետևաբար՝ միջմշակութային) ուսումնասիրությունների մեթոդաբանության մշակման «փորձադաշտ»՝ դրանով իսկ դառնալով հետագա ուսումնասիրությունների հաշվարկի համակարգ:

«Լիբանանահայերն այսօր. էթնոսոցիոլոգիական հետազոտություն» աշխատությունը կազմված է երկու բաժնից: Առաջինում ներկայացված են համայնքի գիտնականների հոդվածները: Բաժինը սկսվում է վերապատվելի դոկտոր Փոլ Հայտօսթեանի հոդվածով, որն անդրադառնում է լիբանանահայերի ընդհանուր նկարագրությանը: Հաջորդիվ դոկտոր Անդրանիկ Տագետեանի հոդվածն է, որում վերլուծվել են Լիբանանի հասարակության մեջ հայերի ինտեգրման առանձնահատկությունները: Բաժինը եզրափակում է Լիբանանի հայկական «Զարթօնք» թերթի գլխավոր խմբագիր, սոցիոլոգ Սևակ Յակոբեանի հոդվածը, որտեղ նկարագրվում է լիբանանահայերի մշակութային կյանքը:

Երկրորդ բաժինը ներառում է երկու հոդված, որոնց հեղինակները ներկայացնում են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժինը: Առաջին հոդվածի հեղինակը՝ Սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ, դոկտոր Ռուբեն Կարապետյանը, շարադրել է սեփական և այլազգի միջավայրում հայերի հետազոտության ծրագրի հիմնադրույթները, ցույց է տրվել լիբանանահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության նպատակները և մեթոդաբանությունը: Երկրորդ հոդվածն ամբողջությամբ ներկայացնում է Սփյուռքի հետազոտությունների բաժնի աշխատակիցների (Ռուբեն Կարապետյան, Կարինե Նալբանդյան, Սյուզաննա Բարսեղյան, Սոնա

Ներսիսյան և Լուսինե Տանաջյան) իրականացրած՝ լիբանանահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունը: Հոդվածում բացահայտվում են ժամանակակից լիբանանահայերի կենսագործունեության սոցիալական և էթնոմշակութային բնութագրերը:

ПРЕДИСЛОВИЕ

Представленная книга - третья из серии научных публикаций отдела исследований диаспор ИАЭ НАН РА, посвященная современной армянской диаспоре, в которой помимо ученых Армении, авторами отдельных глав и статей являются ученые из диаспоры. Эта серия научных трудов по проблемам современной армянской диаспоры призвана как подытожить исследования армянских переселенческих очагов, так и, по возможности, привлечь наших коллег из диаспоры к совместной исследовательской работе. Представляется, что подобная совместная деятельность позволит с одной стороны глубже осмыслить состояние и перспективы воспроизводства этничности армян в инациональном окружении, с другой - поспособствует привлечению интеллектуального потенциала этноса с целью формирования систематизированного знания о диаспоре и сложению научной платформы Армения - диаспора.

Первая публикация «Армяне в своей и инациональной среде. Сравнительные этносоциологические исследования»¹ стала реальностью благодаря усилиям команды исследователей из Армении и диаспоры. Основываясь на материалах конкретных исследований по одноименной программе армян-жителей Москвы, Лос-Анжелеса и Тегерана², в этой коллективной монографии исследователи из армянских общин РА, РФ, США и Ирана представили сравнительный анализ современных этносоциальных процессов, происходящих в среде армян.

- 1 Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, (պատ. խմբ. Կարապետյան Ռ.), Երևան, 2014, «Գիտություն» հրատարակչություն, 183 էջ:
- 2 Կարապետյան Ռ., Հայ համայնքներն այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Երևան, 2018, ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, էջ 10–22:

Вторая публикация «Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей»³ стала итогом разработок в области изучения экономической составляющей взаимосвязей родина-диаспора. Совместными усилиями ученых Москвы и Еревана – философов, демографов, экономистов, этносоциологов был дан анализ опыта этих взаимосвязей и определены возможные перспективы. В работе было обращено особое внимание на анализ факторов развития этих процессов и были даны практические выходы исследования.

Идея подготовки этого издания возникла в ходе исследования ливанских армян, которое проводилось сотрудниками отдела ИАЭ НАН РА, при содействии ректора университета Айказян г. Бейрута, доктора, Преподобного Пола Айдосяна и директора Центра исследований армянской диаспоры того же университета - доктора Андраника Дакесяна. Следующим шагом этого сотрудничества стало издание совместной работы.

Объектом исследования, результаты которого представлены в данной книге, являются армяне Ливана. Выделение, из всего многообразия примеров организации национальной жизни армян в диаспоре, подобного объекта исследования, было продиктовано необходимостью получения знаний о процессах развития этнической группы в условиях этнокомпактного расселения и политико-правового регламентирования ее статуса.

Это особенно важно, если учесть, что процесс этнического «выживания» армян обуславливается двумя полярными друг к другу условиями «компактного и дисперсного» расселения. Характер дислокации, этноконфессиональное окружение, социально-политическое устройство страны пребывания и множество других факторов, образуют совокупность признаков, определяющих соотносимость каждой группы этноса к первой или второй составляющей этой оппозиции. И для того чтобы разобраться в этом разнообразии, в каждой отдельной ситуации, необходим исследовательский поиск в логической последо-

3 *Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей*, (под. ред. Аветисян А., Григорьян Э., Карапетян Р.), Москва, 2013, 246 ст.

вательности распознавания общего и особенного в каждом отдельном случае на широком полигоне сравнительных и сопоставительных исследований. Они, по сути, могут носить кросскультурный характер, так как сопоставляются и изучаются не только разнообразные социокультурные среды, но и в значительной мере, интегрированные с этими средами этнические группы армян. Таким образом, сложность нахождения признаков, позволяющих проводить, присущий кросскультурным исследованиям сравнительный анализ, весьма затрудняет исследование этнических групп армян на базе огромной диаспоры. Именно поэтому необходим поиск системы отсчета, служащей осью разработки и решения задач, призванных, во-первых, выявить общетнически значимые черты каждой отдельной группы армян, во-вторых, выделить закономерности изменения этносоциальных параметров в соотносимости с характеристиками среды, и в третьих – исследовать признаки приобретаемых в данной среде интегрированных черт и особенных их проявлений.

Как показал опыт предыдущих наших исследований сравнение и сопоставление отдельных групп этноса, расселенных в разных этносоциальных средах можно проводить в рамках отдельных тематических разработок, но дать сравнительный анализ в более широком исследовательском диапазоне весьма сложно. Исходя из этого опыта, исследовательская группа нацелилась на всестороннее исследование процессов происходящей в отдельной группе армян, компактно расселенной в стране, где правовые положения и структура власти позволяют легитимизировать этническую группу в качестве составного звена его государственного устройства.

Очевидно, что монографическое исследование одной этнической группы армян с одной стороны позволяет концентрировать внимание на задачи, охватывающие возможно широкий круг проблем, следовательно, их анализ имеет более глубокий характер. С другой стороны, подобного рода исследование может стать «опытным полигоном» разработки методик сравнительных (следовательно, кросскультурных) исследований диаспоральных групп и тем самым стать системой отчета в дальнейших изысканиях.

Работа «Ливанские армяне сегодня. Этносоциологическое исследование» состоит из двух разделов. В первом разделе представлены статьи представителей общины. Раздел предваряется статьей преподающего доктора Пола Айдосяна, в которой дан очерк общего описания ливанских армян. Затем следует статья директора Центра исследований армянской диаспоры, доктора Андраника Дакесяна, в которой автор анализирует особенности интеграции ливанских армян в ливанское общество. Раздел завершается статьей главного редактора армянской газеты «Зартонк» Ливана, социолога Севака Акобяна, описывающей культурную жизнь ливанских армян.

Второй раздел состоит из двух статей, авторы которых представляют отдел исследований диаспор ИАЭ НАН РА. В первой статье заведующего отдела исследований диаспоры ИАЭ НАН РА доктора Рубена Карапетяна изложены основные положения программы исследований армян в своей и инонациональной среде, показаны цели и методика этносоциологического исследования ливанских армян. Вторая статья целиком представлена анализом материалов, полученных на базе этносоциологических исследований среди армян Ливана, проведенных сотрудниками отдела исследований диаспоры ИАЭ НАН РА. В ней, на материалах конкретных эмпирических исследований, авторами (Рубен Карапетян, Сюзанна Барсегян, Карине Налбандян, Сона Нерсисян и Лусине Танаджян) раскрываются социальные и этнокультурные характеристики жизнедеятельности современных ливанских армян.

INTRODUCTION

This is the third publication of the Department of Diaspora Studies (DDS) of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia. It is dedicated to current Armenian Diaspora issues. Scientists from both Armenia and the Diaspora have contributed to various sections of these books. These joint research studies, related to basic contemporary issues of the Armenian Diaspora, aim at combining research conducted in different Armenian Diasporic communities and incorporating as many Armenian Diaspora partners as possible. Indeed, such joint activities enable us to deeply understand how Armenian ethnicity is reproduced in a foreign environment and project its future directions. Likewise they contribute to inclusion of the scholarly energy of the ethnos in shaping a coordinated knowledge on the Diaspora and the formation of a Diaspora-Armenia scientific platform.

The first research publication, entitled *The Armenians in Their Own and Foreign Milieu: Comparative Ethno-sociological Studies*¹, was realized through the efforts of a team of researchers from Armenia and the Diaspora. It was based on the research material of a project² involving Armenians of Moscow, Los Angeles and Tehran. In this collective monographic book researchers of both Armenia and the said communities presented an analysis of current ethno-sociological processes taking place in those communities.

The second publication, *The Armenian Diaspora in the Context of Armenian-Russian Economic Relations*³, was the result of research on the

-
- 1 Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, (պատ. խմբ. Կարապետյան Ռ.), Երևան, 2014, «Գիտություն» հրատարակչություն, 183 էջ:
 - 2 Կարապետյան Ռ., Հայ համայնքներն այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թրիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Երևան, 2018, ԳԱԱ ՀԱԻ հրատարակչություն, էջ 10–22:
 - 3 *Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей*, (под. ред. Аветисян А., Григорьян Э., Карапетян Р.), Москва, 2013, 246 ст.

economic factor in Fatherland-Diaspora relations. In this project Moscow and Yerevan scientists, philosophers, demographers, economists, and ethno-sociologists joined in analyzing these relations and defining their likely prospects. The researchers paid special attention to the development of various factors in those processes and the applicability of the results.

The idea for the current volume, the third in the series, was conceived during research conducted on the Lebanese Armenian community by DDS field-researchers and with the assistance of the President of Haigazian University, Rev. Dr. Paul Haidostian, and the Director of the HU-based Armenian Diaspora Research Center, Dr. Antranik Dakessian. This volume is the result of this collaboration.

The volume contains research on the Lebanese Armenians. The study of an organized national life within the multiplicity of a Diasporic context was undertaken because of the importance of gathering knowledge about the processes of preservation and the development of a compact ethnic group with legitimate political rights. Such studies are essential if we consider that the process of ethnic preservation of Armenians is conditioned by the two opposing poles of compact and dispersed living conditions. The nature and specifics of the dispersion, the ethno-religious milieu, the socio-political system of the hostland and many other features frame a set of factors, which weather and decide the relation and encounter of each member of the in-group with members of the out-group. In order to observe the multiplicity of these relations, one needs to conduct research in order to recognize a logical sequence of the unique and the general in each case, based on broad comparative and analytical studies.

In fact these relations could assume an intercultural nature, as they synthesise and study not only multiple sociocultural environments, but Armenians who have been significantly integrated in those very milieus. Accordingly, the difficulty in looking for identifiers through intercultural research and comparative analysis complicates the study of Armenians in various out-groups of the Diaspora. For this very reason, it is important to look for a systematic approach which can serve as an axis for generating/developing as well as resolving issues. These issues are to: a) highlight the

general outstanding ethnic characteristics of each Armenian subgroup, b) outline the rhythmic changes of ethno-sociological indicators due to environmental factors, c) study the integrative indicators of a given milieu and the characteristics of their expressions.

Previous research has taught us that the synthesis and comparison of ethnic subgroups in diverse ethno-sociological environments is possible within specific thematic research. A comparative study with broader inclusions, however, turns out to be very difficult. Accordingly, the group researching Lebanese Armenians aimed at a holistic study of the processes of diverse Armenian subgroups in a country where they have relatively dense population, and both the state and the legal system legitimize the ethnic group as a basic constituent of the state structure. Obviously such a monographic study of an ethnic group enables us to concentrate on issues which have a broad scope and produce deeper analysis. On the other hand, such research can help develop a methodology for a comparative field case study of Armenians (and in this regard it becomes an intercultural study), which in turn may be used as a template for similar future studies.

The book, *The Lebanese Armenians Today: An Ethno-sociological Study* has two sections. The first section includes articles written by experts and scientists from the community. The section starts with the paper of Rev. Dr. Paul Haidostian, a general description of Lebanese Armenians. It is followed by a paper on the characteristics of the integration of the Lebanese Armenians in the Lebanese milieu, written by Dr. Antranik Dakessian. The section ends with a paper by Sevag Hagopian, sociologist and editor-in-chief of the Lebanese Armenian daily *Zartonk*. It describes the cultural life of the Lebanese Armenians.

The second section of the book includes two papers by researchers from the DDS of the Archeology and Ethnography Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia. The first paper, authored by the head of the DRS, Dr. Rouben Karabetyan, highlights the framework and basic parameters of the research project "Armenians in Their Own and Foreign Milieu." Dr. Karabetyan underlines the aims and

methodology of such an ethno-sociological study. In the second paper, DRS researchers Rouben Karabetyan, Karine Nalbandian, Sousanna Barseghyan, Sona Nersissyan and Lousine Tanadjian analyze the result of the ethno-sociological research conducted. The paper highlights social and ethno-cultural features and characteristics of contemporary Lebanese Armenians.

ԽԱՍ
Ա

Վերապատուելի դոկտոր Փօլ Հայտօւթեան
Հայկազեան Համալսարանի նախագահ

ԼԻՔԱՆԱՆԸ՝ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԻՐ ՏԱՐԱՃԱՃՐՁԱՆԻՆ ՄԷՋ

(Լիբանանահայութեան Ակնարկային Նկարագրական)

Քսանմէկերորդ դարու առաջին քառորդին արդէն անկարելի է ներկայացնել Լիբանանը առանց հաշուի առնելու անոր հիմնաւորումը և հիմնարար հայկական համայնքը:

Լիբանան, որպէս միաժամանակ լեռնային ու ծովեզերեայ երկիր, ճանչցուած է իբրև ուրոյն բնօրրան անելի քան եօթը հազար տարիներէ իվեր. իր քանաանական նախապատմական օրերէն մինչև ներկայի պատմամշակութային ու բնական գանձերով՝ ան իր մէջ կ'ամփոփէ անսահման հմայք: Լիբանան – կամ *ձիւնի նման ճերմակ* – անունն իսկ իր փինիկեան լեզուական արմատներովը իր շուրջի ընդհանրապէս դաշտային, չոր կամ անապատային տարածաշրջանին մէջ զինք կը դարձնէ իւրայատուկ:

Համաշխարհային քաղաքակրթութեան և նամանաւանդ կրօնի պատմութեան մէջ Լիբանանը կը սեպուի աստուածաշնչական կամ պիպլիական երկիր այն առումով որ Աստուածաշունչ մատեանի մէջ արձանագրուած դրուագներէն և վայրերէն կարևոր թիւ մը կը գտնուի ներկայ Լիբանանի տարածքին վրայ: Անոնց մէջ են Լիբանանի հարաւային շրջանի Սիդոն, Տիւրոս և Սարեմիթա քաղաքները, հնայիչ մայրիի ծառերն ու Լիբանանի ձիւնածածկ լեռները, անոր պտղատու դաշտերն ու զուլալ ջուրերը, ինչպէս նաև Լիբանանի գինին, և նշանաւոր Հերմոն Լեռան կարևոր մէկ մասը:

Լիբանանի բնակչութիւնը բնութագրուած է իբրև բազմամշակութային, բազմալեզու և բազմակրօն: Այսպէս, Լիբանանի պատմութիւնը միատարրութենէ հեռու եղած է ի սկզբանէ:

Լիբանանի աշխարհագրական դիրքը, այլ խօսքով իր Միջերկրական Ծովու արևելեան աուզանի կեդրոնը գտնուիլը, ապահոված է երկրին ու մշակոյթին շարունակականութիւն, կենսունակութիւն և առևտրական ու ռազմական գրաւիչ երթևեկութիւն: Անոր կլիման յատկանշուած է չորս եղանակներու զանազանութեամբ, և - նկատի առած երկրի համեմատական փոքր տարածքը - նոյն ժամանակին մէջ երկու տարբեր կլիմաներ վայելելու հնարաւորութիւնը:

Լիբանանի ինքնութեան ու պատմութեան կորիզը եղած է յատկապէս Լեռնալիբանանը զոր շրջապատող արևելեան, հիւսիսային ու հարաւային տարածքները տարբեր ժամանակներու մէջ միացած են անոր կամ՝ անջատուած անկէ: Ուստի, այսօրուան մայրաքաղաքն ու երկրի կարգ մը այլ կեդրոնները ընդհանրապէս գտնուած են դրացի երկիրներու կամ նուաճող օտար ուժերու ազդեցութեան տակ, մինչ Լեռնալիբանանը միշտ մնացած է այն կորիզը, որ երաշխաւորած է երկրին ինքնութիւնը:

Լիբանանը յատուկ դարձնող գործօններէն եղած է անոր նպաստաւոր և հիւրասէր երթուղի ըլլալու հանգամանքը: Արդարև, ան դէպի միջինարևելեան ներքնաշխարհ, ինչպէս նաև իր արևելքն ու արևմուտքը կամրջելու աշխարհագրական ու մշակութային դեր ստանձնած է: Այս մէկը Լիբանանը կատարած է յատկապէս առևտրական մարզին մէջ՝ պատմութեան հնագոյն օրերէն իվեր:

Լիբանանը եղած է հալածուած կրօնական փոքրամասնութիւններու թէ՛ հալածուած ժողովուրդներու ապաստան-երկիր: Այդպիսի փոքրամասնութիւններու՝ Լիբանան ապաստանելու օրինակներ կարելի է գտնել քրիստոնէական առաջին դարերէն սկսեալ: Մակայն, Սուրիոյ մէջ ծնունդ առած մարոնիթ շարժման, ապա և մարոնիթ վանականներու և համայնքին հաստատումը Լիբանան՝ կը սեպուի Լիբանանի վերջին 1500 տարիներու ինքնութեան հիմնական մէկ ակունքը:

Լիբանանի իւրայատուկ ինքնութեան կերտման նպաստող ազդակներէն եղած է անոր սպասարկման ու կենսական ծառայութիւններու երկիր ըլլալու հանգամանքը երկար դարեր շարունակ: Հնագոյն օրերէն իվեր, անոր նաւահանգիստները, ինչպէս՝ Պիպլոսը,

Թրիփոլին, Սիդոնը և Տիրոսը, անոր ուսման կեդրոնները (ինչպիսին էր Պեյրոսի Իրաւաբանական Դպրոցը Ք.է. Յրդ դարուն), իսկ յետագային Լիբանանի դրամատնային ու բժշկական հաստատութիւնները, անոր հանգստավայրերը և ուրիշ այլատեսակ հանգամանքներ ծառայած են Լիբանանի մօտակայ երկիրներուն:

Լիբանանը ծանօթ եղած է որպէս գիրի, գրականութեան, թուղթի և տպագրութեան երկիր: Այս առումով, ամէնէն ծանօթ օրինակը Պիպլոս, կամ այսօրուան Ճիպէյլ քաղաքն է, ուրկէ կը ծագի *պիպլիս* բառին գործածութիւնը և papyrusի արտադրութիւնը, ուր և կատարուած է փինիկեան գիրերու գիտը:

Լիբանանի ժողովուրդի, ուրեմն լիբանանցի անհատի, յատկանիշերուն մէջ հին ժամանակներէն յիշուած են անոր ուժեղ, կարող, ճկուն, բանակցող, ճամփորդող ու գիտակ ըլլալը, նաև՝ լեզուական կարողութիւնները: Կարգ մը գիտական սերտողութիւններ գտած են թէ Միջերկրական Ծովու շուրջ ապրող քաղաքներու ժողովուրդներու 6 առ հարիւրը կը սեռի փինիկեան ազգէն: Հետևաբար, Լիբանանի նման փոքր երկիր մը կը գտնէ իր ծինային շարունակականութիւնը միջինարևելեան լայն աշխարհագրական տարածքներու վրայ: Կարելի է այս բոլորին վրայ նկատի առնել նաև այն որ Լիբանանի ազդու սփիտքը թիով կը հաշուէ երկրին մօտաւորապէս հինգ միլիոն բնակչութեան կրկինէն աւելին՝ հիւսիսամերիկեան, հարաւամերիկեան, ասիական, ևրոպական, ասիական և աստորալիական ցամաքամասերուն վրայ: Լիբանանեան յատկութիւններն ու մշակութային հարստութիւնը անոնցմով կը տարածուին աշխարհով մէկ, միաժամանակ նպաստելով երկրի հետ կապերու ամրապնդման:

ԱՐԴԻ ԼԻԲԱՆԱՆԸ

Վերոյիշեալ բազմաթիւ նկատումներուն պատճառով, Լիբանանի վերջին հարիւրամեակներու ինքնութիւնը կազմուած է արտաքին – մերձաւոր թէ հեռաւոր – ազդեցութիւններով ու կապուածութիւններով, ինչպէս նաև ներքին – ընտանեկան, մարզային, կրօնական, քաղաքական, տնտեսական – բնորոշիչ ազդակներով: Այս բոլորէն բխած են ու կը բխին ազգային պատկանելիութեան ու միութեան,

ինչպես նաև ինքնութենական հարցեր: Այս հարցերուն առաջանին մէջ, երկիրը շարունակած է որոնել հաւասարակշռութիւն, անկախութիւն և խաղաղութիւն: Լիբանանը մնացած է որպէս դաշտ, մէկ կողմէն՝ մնայուն շարժման, կենսունակութեան և զարգացման, և միւս կողմէն՝ կեդրոն այլազան պայքարներու և նոյնիսկ պատերազմներու և քաղաքացիական լարուածութեան: Քրիստոնէական և իսլամական կրօնական համայնքներու և խմբակցութիւններու գոյակցութեան պատմութիւնը ունեցած է հարուստ ու օրինակելի շրջաններ և համերաշխութեան դրսևորումները տարածուած են լիբանանեան հաստատութիւններու, պետականութեան և ընկերային կեանքին վրայ: Լիբանանեան համակարգին մէջ ապահովուած են կրօնական համայնքներու իրաւունքներն ու իրաւասութիւնները, դերերը, դիրքերն ու համաչափութիւնները՝ բարձր յստակութեամբ ճշտուած: Այս բոլորը յաճախ կը բանան էջը նաև լարուածութեան և քաղաքական թէ կրօնական արմատական մտածողութեան՝ Լիբանանի կարգ մը զանգուածներու մօտ:

Այսպէս՝ լիբանանեան ինքնութեան հարցը կը մնայ մնայուն քննարկման և բանակցութեան առարկայ, իր առաւելութիւններովն ու անբարենպաստ պայմաններովը:

ՀԱՅՑԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՁ

Լիբանանեան գունատր ու դարատր խճանկարը ևս ճոխացաւ վերջին հարիւր տարիներուն ընթացքին հայկական նրբերանգով:

Յեղասպանութեան պատճառած տեղահանութեան ու գաղթի հետևանքով, մեծաթիւ հայ ընտանիքներ հաստատուեցան Լիբանանի զանազան ծովեզերեայ շրջաններուն՝ նամանաւանդ մայրաքաղաք Պէյրութի մէջ և շատ շուտով հանդիսացան որակական մեծ կշիռ ու շարունակեցին այդպէս ըլլալ մինչև օրս՝ թէև տարբեր տարողութիւններով:

Այդուամենայնիւ, հայկական ներկայութիւնը Լիբանանի մէջ բացարձակ նորութիւն չէր, նկատի առնելով այն որ Տիգրան Մեծի իշխանութեան թևերը հասած էին Լիբանան և Սուրիա՝ առաջին դարուն ընթացքին նախքան Քրիստոս: Մինչ Քրիստոսէ ետք կանուխ

դարերին սկսեալ Երուսաղէմի քրիստոնէական ուխտագնացութեան ճանապարհներին մէկը եղած էր լիբանանեան հողը:

18րդ դարին սկսեալ հայ կաթողիկէներու եկեղեցական ներկայութիւնը յատկապէս Զմմառի վանքով, Օսմանեան Կայսրութեան երկար դարերու ընթացքին կարգ մը հայ ընտանիքներու գաղթը դէպի Լիբանան, 1861ին հաստատուած Լեռնալիբանանի կառավարչութեան՝ օսմանեան դրութեամբ կառավարիչ-մութասարըէֆ նշանակուած հայ կաթողիկէ Տաուտ փաշայի դերակատարութիւնը, քսաներորդ դարու սկիզբին Մանուկ Աւետիսեան (Պշարա Էֆենտի) նշանաւոր ճարտարապետի Պէյրութ քաղաքի փլանաւորում-յատակագծումը փայլուն օրինակներ են հայկական որակական արհեստավարժ ներդրումին:

Յետ-եղեռնեան մեծաթիւ հայերու հոսքը դէպի հարուստ ու դարաւոր մշակութային ու առևտրական լիբանանեան նոր հայրենիք, անպայման պիտի յատկանշուէր երկկողմանի պատուաստումի բնական և երկարամեայ գործընթացով: Եւ այս երևոյթը արդէն իր ծաղկած վիճակին հասած էր 1950-60ականներու կազմակերպուած լիբանանահայութեամբ մը, որ պիտի տանէր հայկական և սփիւռքեան առաջնորդողի դեր՝ մշակութային (արուեստի կեդրոններ, ազդու արուեստագէտներ, թատրոններ, միութիւններ, փառատօներ, հայրենակցական միութիւններ), լեզուական (բառարաններ, գիրքեր, դասագիրքեր, հայագիտական կեդրոններ, հրատարակչատուններ, տպարաններ), եկեղեցական (Հայ Առաքելական, Կաթողիկէ, Աւետարանական համաշխարհային կեդրոններ), կրթական (դպրոցական ցանցեր, համալսարան, դպրեվանքեր և աստուածաբանական ճեմարան), քաղաքական (հայկական ասանդական կուսակցութիւններ, պետական ու կառավարական ներկայացուցչութիւն), տնտեսական (շուկաներ, գործարաններ, արհեստավարժութիւն, ճարտարարուեստ), լրատուական (օրաթերթեր, պարբերականներ, ապա՝ ռատիօժամեր) և ընկերային (թաղամասեր, ընտանեկան մթնոլորտ, ծերանոցներ, անկարներու տուններ, բժշկական կեդրոններ) հարուստ բնագաւառներուն մէջ: Լիբանանահայութիւնը, ուրեմն, կը սատարէր Լիբանանի յաւելեալ զբաւչութեան ու բազմակողմանի զարգացու-

մին, մինչ լիբանանեան ընդհանուր յատկութիւնները յաւելեալ մղիչ ուժ կը դառնային լիբանանահայութեան ճկունութեան, համարձակութեան, և ամրապնդման: Վերոյիշեալները տեղական ու միջազգային լուրջ կշիռ ու հմայքով նշանաւորեցին լիբանանահայութիւնը. Իրավիճակ մը ուր համալիբանանահայ ներգործակցութեան և արդար մրցակցութեան դաշտ մը կը զարգանար և հայկական ամբողջութիւնը կը զարգացնէր, միաժամանակ ծառայելով հայոս բարի վկայութեան և լիբանանեան հայրենիքի կայուն զարգացման:

Հաւանաբար այս բոլորին մէջ թոյլ կը մնար լիբանանեան ինքնութեան բնորոշիչներու հարցը, բան մը որ կը նկատուէր լիբանանահայուն համար գրաւիչ ազդակ՝ իր հայկականութեան երկարատև պահպանման համար: Ո՞վ է լիբանանցին հարցումին պատասխանը այնքան բարդ ու բազմաշերտ էր (ու տակաւին է), որ լիբանանահայը կը զգար թէ ինք բաւարարաչափ հաւասար էր ուրիշ քաղաքացիներու հետ և կը միանար անոնց ազգային ինքնութեան ճշտումի անաւարտելի պայքարին: Այսինքն, լիբանանահայը ներլիբանանեան հաւասարակշռութիւններ ստեղծելու բարդ հարցին մէջ կ'ունենար դրական դեր, կը զգար ապահով՝ բազմաշերտ ու բազմալեզու իրականութեան մը մէջ:

Դժբախտաբար թոյլ կը մնար նաև միջինարևելեան ընդհանուր անկայուն ու պայթուցիկ իրավիճակը, ինչ որ ունեցաւ տարբեր ժամանակներու մէջ իր աղէտալի ազդեցութիւնը բոլորին վրայ, մինչ լիբանանեան բեմահարթակին վրայ արտաքին ու ներքին պայքարները կը գտնէին բաց տարածք:

Լիբանանահայութիւնը անպայմանօրէն պիտի ազդուէր այդ իրավիճակներէն և վճարէր սուղ գին: Այսպիսի օրինակներ են 1958ի և 1975ի քաղաքացիական պատերազմները, որոնց մէջ լայն տարածաշրջանային ու համաշխարհային ազդակներն ու միջամտութիւնները յստակ են:

Տակաւին, հայկական հարազատ զգացում մը կար ու կայ Լիբանանի մէջ: Հալածուած ժողովուրդներու հոգեբանութեան հարցերն ու սփոփանքը, լեզուն պահպանելու ու հնարաւորութիւնը, լայն աշխարհին հետ առնչուելու և հաղորդակցելու անխափան ճամփան,

որպէս ինքնուրոյն համայնք ճանչցուելու և ապրելու առիթը, ազատ շուկայի մէջ գործելու իրականութիւնը, կիլիկեան հողերու աշխարհագրական մերձատրոյթիւնը, առաջին ու երկրորդ հայրենիքի գաղափարներու համերաշխութեան ստեղծման հնարատրոյթիւնը, քաղաքական անկախ մտածողութեան առիթները, պատերազմներու և արդի օրերու տեղահանութիւններու ընթացքին միջինարևելեան այլ երկիրներու հայ համայնքներու աջակից զանգուած ըլլալը, ու տակաւին շատ աւելին լիբանանահայ հաստատութիւններով ու կեանքով:

Յստակ է որ ներկայ օրերու Լիբանանն ու լիբանանահայութիւնը կորսնցուցած են անցեալի փառքերէն ու դիրտութիւններէն շատերը, այսինքն՝ մեծ թիւերը, տնտեսական կայունութիւնը, հաստատութենական կազմակերպութիւնը, սփիւռքը առաջնորդողի դերը, մշակութային ինքնութեան մեքենայի ամրութիւնը ևն.: Այդ չի նշանակեր, սակայն, որ այն դերը որ կը վերագրուէր լիբանանահայութեան փոխարինուած է այլ գաղութներով: Լիբանանի ընձեռած հնարատրութիւններն ու յատկութիւնները կարելի էր մասամբ փոխադրել բայց ոչ զանոնք փոխարինել: Համաշխարհայնացումի սլացքը ունեցաւ նաև իր ազդեցութիւնը բոլորին վրայ՝ Լիբանանի մէջ և այլուր, ինչ որ առաջնորդեց համահայկական հաղորդակցութեան նոր առաւելութեանց, մտածողութեանց արդիականացման և բնական պատշաճեցումներու, միաժամանակ խախտելով հայկական ինքնութեան և պատմական ասանդոյթներու դարաւոր հիմքերը:

Լիբանանահայութեան հմայքը տակաւին առկայ է: Աւելի քան երբեք կը գտնենք ընդհանուր լիբանանեան թղթածրարներու մէջ հայկական ներգրաւուածութիւն, հայկականութեան զգացումի զարգացման լայն առիթներ, կիլիկեան աւանդի, Հայաստանի Հանրապետութեան և երկրորդ հայրենիքներու իրականութիւններու միջև համադրութեան գործիքներ: Վերջին տարիները ցոյց կուտան նաև լիբանանահայութեան և ընդհանրապէս լիբանանցիներու անմիջական ու զարգացող կապերու սահուն ընթացքը Հայաստանի Հանրապետութեան, անոր ժողովուրդին և շուկաներուն հետ, որպէս պտուղ՝ լիբանանահայութեան դրական ու աշխուժ փորձին:

Չիրդ դարու լիբանանահայութիւնը կը դիմագրաւէ ինքնութեան, լեզուի, թիւերու, տնտեսութեան, հաւաքական մթնոլորտի, կազ-

մակերուածութեան և ռազմավարութեան զանազան հարցեր: Նոյնը կը դիմագրաւեն նաև մեծաթիւ սփիւտքեան գաղութներ, իրականութեան մէջ՝ ընդհանրապէս աշխարհի բոլոր ժողովուրդներն ու պատմական և էթնիք ազգային ինքնութիւնները:

Կը մնայ որ լիբանանահայութիւնը գտնէ կերպը նորոգելու ինքզինք ու իր հաստատութիւնները, ճշտելով նոր հաւասարակշռոյթներ ու նորոգուած ու նորոգող զարգացման առիթներ որոնք հարազատ են անցեալին և բաց են ապագային:

Վերապատուելի դոկտոր Փօլ Հայտօսթեան
Հայկազեան Համալսարանի նախագահ

ԼԻԲԱՆԱՆԸ՝ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԻՐ ՏԱՐԱԾԱԾՐՁԱՆԻՆ ՄԷՋ
(Լիբանանահայության Ակնարկային Նկարագրական)

Ամփոփում

Լիբանանահայության քսաներորդ դարու կազմակերպում, աչքառու և աշխուժ դերակատարության գաղտնիքները մեծ մասամբ կ'առնչուին Լիբանանի ժողովուրդի բազմամշակութային և բազմալեզու ինքնության, անոր աշխարհագրական ու դարաւոր պատմական հարուստ դիրքին և Լիբանանի ու հայության միջև ստեղծուած յաջողակ պատուաստումին:

Լիբանանահայութիւնը բնականաբար ազդուած է միջինարևելեան և ներլիբանանեան կրկնուող տագնապներէն, սակայն կրցած է պահել իր բարձրորակ ու դրական կեցուածքը և կրթական, եկեղեցական, մշակութային ու ազգային հաստատութիւններու գործունէութիւնը:

Ներկայ օրերու լիբանանահայութիւնը չի ներկայացներ անցեալի շուքը, սակայն կարելի չէ ըսել որ ան փոխարինուած է այլ գաղութներով: Համաշխարհայնացած նոր օրերու մէջ՝ պատմական ու էթնիք ազգային ինքնութիւնները նօսրացած են և կարիքը կայ գտնելու նոր հաւասարակշռոյթներ ու զարգացման աղիթներ:

Преп. Д-р Пол Айдосян

Президент университета Айказян

ЛИВАН В ОСОБЕННОМ РЕГИОНЕ
(обзорный очерк ливанских-армян)

Резюме

Являясь ярким примером успешной интеграции, ливанские армяне в двадцатом столетии сыграли значительную роль в сложении многообразной культуры и многоязычной идентичности народа Ливана. Несмотря на то, что ливанские армяне не остались в стороне от повторяющихся на Ближнем Востоке и в самом Ливане тревожных событий, они, все же, сохраняют высокое качество своего положения, в стране, а также активную деятельность своих образовательных,

церковных, культурных и национальных учреждений. В условиях глобализации, когда в новых исторических условиях происходит ослабление этнической идентичности, необходимо найти новые возможности этнического развития.

Rev.-Dr. Paul Haidostian
President of Haigazian University

LEBANON'S UNIQUENESS IN ITS REGION: A Descriptive Overview of the Armenians of Lebanon

Resume

The secret behind the most organized, outspoken and active Lebanese Armenian community of the 20th century lies in the multicultural and multilingual identity of the Lebanese nation, its geographic and historical location, and the successful cross-fertilization of Lebanon as a whole with its Armenian community.

Naturally, the Lebanese Armenian community has been influenced by crises in the Middle East as well as recurring domestic Lebanese crises. Nevertheless, the community has been able to maintain its high quality and positive stance alongside its prominent educational, ecclesiastical, cultural and national institutions.

Currently, the Lebanese Armenian community does not have its previous weight. This is not to say that it has been replaced by any other Diaspora Armenian community. In this globalized era, historical and ethnic identities have dwindled and what is urgently needed is to find a new balance and new opportunities for development.

Դոկտ. Անդրանիկ Տազխետան
Հայկազյան Համալսարանի սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն

ԼԻՔԱՆԱՆԱՅԱՅ ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄՈՒՏՔ

Ջեկոյցս կը վերաբերի Լիբանանի հայօճախին համարկումի առանձնայատկություններուն: Լիբանանահայութիւնը ծնունդը չէ Հայոց Յեղասպանութեան: Լիբանանի մէջ հայկական շօշափելի հետքերը կ'երթան առնուազն մինչև 18րդ դարու սկիզբները՝ Հայ Կաթողիկէ Եկեղեցիին հաստատումը Լեռնալիբանանի մէջ¹: Այդուհանդերձ հայոց զանգուածային ներկայութիւնը Լիբանանի մէջ կը սկսի 20րդ դարասկիզբին և կ'առնչուի Հայոց Յեղասպանութեան, երբ մագապուրծ իլեակներ 1920ականներու սկիզբը կայք հաստատեցին Լիբանան:

Ջեկոյցս պիտի անդրադառնայ վերջին հարիւրամեակի Լիբանանի հայօճախին համարկումի առանձնայատկություններուն: Պիտի ջանամ սահմանել համարկումի տեղայնացուած ըմբռնումը, տալ տեսական երեսակներ, ապա և նիւթը տեղաւորել տեսական այդ սահմանումներուն մէջ ու պարզել համապատասխան իրավիճակը:

ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ

Հակառակ անոր որ համարկումին գլխաւոր դերակատարը մարդն է, այդուհանդերձ համարկումը հաւաքական երևոյթ է: Չենք կրնար խօսիլ անհատի համարկումին մասին. համարկումի ծիրին մէջ անհատը կը գործէ իբրև ենթախումբի ինքնութիւնը կրող: Այլ

1 Նկատի ունինք Զմմառու Հայ Կաթողիկէ վանքը (տես՝ Մեսրոպ Վրդ. Թերզեան, *Զմմառու Հայ Վանքը. 1749–1949*, Պէյրութ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1949):

խօսքով համարկումին համար նախապայման է կենսագործող ենթախումբի մը գոյությունը և անիմաստ է խօսիլ անհատ-ընտանիքի համարկումին մասին: Համարկումին միւս դերակատարը հանդիպակաց անհատ/ներն են, որոնց հաւաքական պատկերը կը մարմնաւորուի միւս ենթախումբ/երով և կը դրսևորուի անոնց յառաջացուցած միջավայրով:

Համարկումը ենթախումբի մը գիտակցեալ, զգօն, նաև – պարագաներու բերմամբ ինքնըստինքեան, ինքնեկ – առնչումն է՝ իր ազգային-քաղաքական-լեզուական-մշակութային-ընկերային-տնտեսական-կրօնական-կենցաղային-հոգևոր համակարգերու ծիրէն դուրս գտնուող ուրիշ հաւաքականութիւններու համապատասխան համակարգերու և այդ համակարգերը կրողներու: Այս առնչումով ենթախումբը ընտրովի, շարունակուող ընթացքով, տակաւ կը շփուի, կ'ընտելանայ, կ'ընդգրկէ, կը ներկրէ, կ'որդեգրէ, կ'իրացնէ² այլ հաւաքականութիւններու վերոյիշեալ համակարգերուն կարգ մը երեսակները, գերակշռութիւն վերապահելով իր սեփական համակարգ/երուն: Համարկումի ընթացքին ենթախումբերուն վերոյիշեալ համակարգերու բաղադրիչները կրնան գտնուիլ փոխշփումի, փոխառնչումի, փոխընդգրկումի և փոխազդեցութեան տարբեր հանգրուաններու, բնոյթներու, կշռոյթներու վրայ: Համարկումը միատարր, միաբնոյթ, միօրինակ, միուղի, միաշերտ չէ. ենթախումբի իւրաքանչիւր անդամ տարբեր տարողութեամբ կրնայ առնչուիլ և հակադարձել վերոյիշեալ համակարգերուն: Անհատական այս առնչումներու կացութիւն-իրավիճակներուն համապատկերը կը հանդիսանայ ենթախումբի համարկումին ամէնէն արտաքին շրջագիծը: Իսկ անհատական այս առնչումներու ընդհանրական (հասարակ) յայտարարը կը հանդիսանայ ենթախումբին համարկումի ամէնէն ներքին և կեդրոնական շրջագիծը:

Համարկումը առողջ կ'ըլլայ երբ փոխադարձ է ան՝ ենթախումբին և միւս հաւաքականութիւն/ներու վերոյիշեալ համակարգերուն միջև: Ընդհանրապէս և գրեթէ միշտ՝ ենթախումբին և միւս հաւաքա-

2 Այլ խօսքով, ուրիշ ենթախումբի համակարգին առնչուիլը երկար գործընթաց է, ուր էական ելակէտ կը հանդիսանայ ընդառաջումի գործընթացը:

կանություն/ներու վերոյիշեալ համակարգերը հաւասար չեն ըլլար՝ ըստ բովանդակութեան և գորութեան:

Այս համակարգերու գորութիւնը կախեալ է առարկայական և ենթակայական, տեղայնական թէ արտաքին պատճառներէ, գործոններէ, պարագայական ազդակներէ (այս մասին՝ աւելի ետք):

Կարելի է հաստատել, որ համարկումին գործընթացը սկիզբ կ'առնէ շուկայական միջավայրին մէջ և կը թափանցէ ենթախումբին համակարգի այն ոլորտը որ տկար, խոցելի կամ չգոյ օղակ է ենթախումբին սեփական համակարգերուն մէջ, որով առիթ կը յառաջանայ տուեալ 'օտար' ոլորտին կամ, աւելի մանր ('բացակայ') միատրին թափանցումին ապա և որդեգրումին՝ ենթախումբին կողմէ: Հուսկ, այս միատրը կը վերածուի 'փունջ'ի և տակաւ կը ծաւալի³:

Համարկումը քարացած վիճակ չէ. ան չընդհատող, երբեմն տարբեր, հակադիր ուղղութիւններով ընթացող, չդադրող գործընթաց է: Համարկումին յառաջացեալ կամ խորացեալ հանգրուանը (երբ ներկրող տարբերը կը դառնան գերակշիռ ի հեճուկս ենթախումբի վերոյիշեալ համակարգերու սեփական տարբերուն) կու տայ նախանշանները ենթախումբի տարբեր շերտերու ձուլման ընթացքին: Համարկումին մակերեսային և սկզբնական հանգրուանը կ'արտացոլացնէ սեփական պատեանի մէջ կծկուած հաւաքականութիւն մը⁴: Համարկումի գործընթացը կրնայ վերաճիլ այլասերումի, ձուլումի և մերումի: Կրնայ յարաբերական տեղքայլ ապրիլ, կամ կրնայ հակառակ ուղղութեամբ ընթանալ:

Այլասերումը յառաջացեալ համարկումն է, երբ ենթախումբին վերոյիշեալ համակարգերուն ոչ-բոլորը տարբադադրուած կամ փոխարինուած են այլևայլ հաւաքականութիւններու համապատասխան համակարգերով:

3 Համարկումը աւելի զօրատր է այն ոլորտին մէջ, ուր կողմերէն մէկը չունի անոր դրսևորումը (մշակութային որոշակի դրսևորում մը, հեռատեսիլային յայտագիր. երբեմն մրցակցութիւնը կը սրի գրաւիչի ու աւելի գրաւիչին միջև):

4 Տագէսեան Ա., Լիբանանի հայօճախը. Գիրք Ա., *Համարկումին իսաշողիները (1920–2005)*, Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոն, Հայկազեան համալսարանի հրատարակչութիւն, Պէյրութ, Տպ. Անտոնեան, 2015, էջ 9-10:

Ձույումը խորացեալ համարկումն է, երբ ենթախումբը կը տարբաղադրուի այլևայլ հաւաքականութիւններու մէջ իր վերոյիշեալ բոլոր համակարգերով:

Մերումը խորացեալ հաւասարագօր տարբաղադրում-միախառնումն է թէ՛ ենթախումբին և թէ՛ հանդիպակաց խումբին/երուն, որուն արդիւնքով յառաջացած է նոր բաղադրիչներով, վերափոխեալ համակարգերով հաւաքականութիւն մը, որ միայն մասնակիօրէն կը յիշեցնէ իւրաքանչիւր ենթախումբի սկզբնական վիճակներու համակարգերը:

ՀԱՄԱՐԿՈՒՄԻՆ ԱՉԴՈՂ ԳՈՐԾՕՆՆԵՐ

Ենթախումբերու առնչումին արդիւնքը կախեալ է բազմատարր և բազմաբնոյթ գործօններէ: Թուենք միքանին.

- ա) Ժամանակային գործօն.- եթէ առնչումին տևողութիւնը կարճատև է (երկարատև, յարաբերաբար մնայուն բնոյթ չի կրեր), ապա դժուար թէ համարկումը սկզբնական հանգրուանէն անդին անցնի:
- բ) Ծիրի գործօն. Եթէ ենթախումբերը իրար կ'առնչուին վերոյիշեալ համակարգերէն միայն մէկնումէկի շրջանագիծին մէջ, ապա դժուար թէ համարկումը սկզբնական հանգրուանէն անդին անցնի:
- գ) Ուժային գործօններ. առնչուող ենթախումբերէն մէկուն գերիշխող, կամ պետականակիր ենթախումբ ըլլալը, թուային մեծամասնութեամբ գերակշռումը, մշակութային տիրակալութիւնը..., միւս կողմէն՝ հանդիպակաց ենթախումբին յարաբերաբար նորեկ, եկուոր, տկար, փոքրամասնութիւն ըլլալը...:
- դ) Հասարակաց յայտարարներ. առնչուող խումբերու նոյնակրօնութիւնը (սրբավայրերու, յարանուանական), նոյնակեզուութիւնը, ֆիզիքական նմանութիւններ-տարբերութիւնները (մորթի գոյն, դիմագիծ, աչքեր, հասակ ևն.), տօներու, սովորոյթներու նոյնութիւն-նմանութիւն-տարբերութիւններ:

- ե) Ինքնութենական կառչածություն. ենթախումբերու կառչածութեան խորությունը, տարողությունը, աստիճանը՝ իրենց վերոյիշեալ համակարգերուն: Անոնց խորացեալ իմացումը, քաջատեղեակությունը վերոյիշեալ սեփական համակարգերուն:
- զ) Պատմական անցեալ. ենթախումբերուն հասարակաց անցեալի յարաբերութիւններուն թշնամական-բարեկամական բնոյթը:
- է) Համակարգերու այժմեականությունը. ենթախումբերու վերոյիշեալ համակարգերը որքանո՞վ ժամանակակից են, կը համընկնին-կը բաւարարեն ժամանակակից պահանջքները՝ երնթախումբին: Ասկէ կը յառաջանայ կարիքը պահպանելու, բարեփոխելու կամ հրաժարելու սեփական համակարգերէն:
- ը) Եթէ ենթախումբերէն մին սփիւռք է, ապա՝ անոր կապուածությունը մայր հայրենիքին, վերջինիս հետ կապերու խորությունը, բնոյթը, տեսականին: Այս առումով կարևոր գործօն է տուեալ սփիւռքին (նոյնինքն ենթախումբին) պատմական հայրենիքին տեղը, քաղաքական-տնտեսական-մշակութային կարգավիճակը՝ համաշխարհային համակարգին մէջ, անոր սոֆթ փատուրին (փափուկ ուժ) հասողությունը, ազդեցությունը:
- թ) Տուեալ երկրին պետական-քաղաքական համակարգը. այլամերժական, թէ՛ ընդգրկողական, ժողովրդավարական, թէ՛ բռնատիրականէ ան: Պետություն-քաղաքացի յարաբերութեան քաղաքական փիլիսոփայությունը հիմնուած է անհատի՞, թէ՛ համայնքի ըմբռնումի գաղափարախօսութեան վրայ:
- ժ) Երկրին հասարակութեան բաղադրատարրերու ինքնութենական բնոյթը (Էթնիք, կրօնական, լեզուական): Կարևոր է նաև այդ բաղադրատարրերուն քանակը՝ բազմաթիւ, ատելի քան երկու, թէ՛ ընդամէնը երկու ենթախումբերէ գոյացած է երկրին հասարակությունը:

- ժա) Երկրին բնակչության քաղաքական մշակոյթը, ժողովրդավարական որակը, փոխհանդուրժողութիւնը, ‘ուրիշին’ հանդէպ մօտեցումը:
- ժբ) Համարկումը շփման արդիւնք է: Հետևաբար, շփման դրդապատճառները նոյնպէս կարևոր գործօններ են: Այս դրդապատճառներուն կապուած է ենթախումբին ինքնաբաւութեան աստիճանը: Այլ խօսքով, զօրաւոր գործօն է ենթախումբին վերոյիշեալ համակարգերուն առողջ կենսագործունէութիւնը ներենթախմբային միջոցներով: Եթէ ենթախումբը ինքնաբաւ է՝ շփումի դրդապատճառները նուազ են կամ հիմնարար չեն, հետևաբար համարկումը նուազ է:
- ժգ) Պէտք է անդրադառնալ նաև հանդիպակաց ենթախումբին/ներուն յատկանիշերուն. ինքնաբաւ է ան/անոնք ևս, այլապէս տարբեր ընթացք կրնայ առնել համարկումին կշռոյթը:
- ժդ) Առնչուող ենթախումբերուն ընկալողութիւնը համաշխարհային գործընթացներուն:
- ժե) Կարևոր է ընդգծել նաև առնչուող ենթախումբերուն նոյն վայրին մէջ գտնուելու պատճառները. բոնագաղթումձ, բոնակցումձ, ակամայ, ստիպողական պարագաներու բերմամբ ներկայութիւն մըն է ենթախումբերէն մին (կամ երկուքը, կամ բոլորը): Ինչ պատճառներով կամ ինչ իրադարձութիւններու հետևանքով ենթախումբերը կը գտնուին իրարու առնչուելու կացութեան մէջ:
- ժզ) Ենթախումբերուն գործող/աշխուժ/ներգործօն սերունդներուն բնոյթը տուեալ երկրին մէջ. առաջին՝ անցեալով ապրող, թէ անցեալէն գէթ մասամբ կտրուած յետնորդ (երկրորդ, երրորդ, չորրորդ) սերունդ են անոնք:
- ժէ) Ենթախումբերուն քաղաքական օրակարգերը: Ինչ համեմատութիւններով տեղայնական և անդրասահմանային են անոնց կենսագործունէութեան նպատակները:

- ժթ) Ենթախումբերու տնտեսական կարողականությունը, որուն շնորհիվ վերոյիշեալ համակարգերը (կամ անոնցմէ ոմանք) կրնան բնականէն աւելի աճիլ ու դրսևորուիլ:
- ի) Ենթախումբերու երկրին մէջ խտացեալ-միատեղ կամ ցրտած-տարտղնուած գոյութիւն-կեցութիւնը: Ենթախումբերը իրարմէ կղզիացամբ բնակավայրեր ունին, թէ՛ կան աշխատանքային, կեցութեան, կենցաղային հասարակաց վայրեր:
- իա) Ենթախումբի բնակած վայրի բնական հարստութիւններուն, աշխարհագրական դիրքի կարևորութիւնը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՕԸԱԽԻՆ ՀԱՄԱՐԿՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԸ

Լիբանահայ համարկումը երկճակատ եղած է.-

ա) Ներհայկական, բ) Տեղայնական:

ա) Ներհայկական համարկում.-

Նկատի պէտք է առնել, որ 1920ականներու սկիզբը Լիբանան հաստատուած գաղթականութիւնը միատարր չէր. ճիշտ է, հաւանաբար անոնց շուրջ 60 տոկոսը կու գար Կիլիկիայէն⁵, սակայն նոյնիսկ կիլիկիահայերը միատարր չէին. գաղթականները իրենց ծննդավայրին մէջ վերածուած էին ինքնակայ, յարաբերաբար ներփակ ենթախումբերու, հաւաքական ինքնութիւնը, վերոյիշեալ համակարգերը

5 Ըստ Արա Սանճեանի, 1920ականներուն Լիբանան հասած հայերուն «շուրջ 25 հզ-ը Կիլիկիայից էին, շուրջ 8 հզ-ը՝ Անատոլիայի, իսկ մօտ 5 հզ-ը՝ Արևմտեան Հայաստանի տարբեր շրջաններից» (Արա Սանճեան, «Լիբանան»՝ *Սփիւռք Հանրագիտարան*, գլխ. խմբ.՝ Յովհաննէս Աւագեան, Երևան, Հայկ. Հանրագիտարան Հրատ., 2003, էջ 291: Լիբանահայ ենթախումբի մէկ օղակին խորունկ դիտարկումը տուաւ հետևեալ պատկերը. – Կիլիկիայէն ժամանածներ՝ 52,2%5, Արևմտեան Հայաստանէն ու Կեդրոնական Փոքր Ասիայէն ժամանածներ՝ 14,3%, Արևմտեան Փոքր Ասիայէն ժամանածներ՝ 4,3%, իսկ արտասահմանէն՝ 29% (Անդրանիկ Տազէսեան, «Ժողովրդագրական Քաղաւածքներ Նոր Հաճնոյ Սուրբ Գեորգ Եկեղեցոյ Պսակի, Մկրտութեան ու Մահուան Տոմարներէն (1930-2009)»՝ *Հաճնոյ Հերոսասարդի 90Ամեակի Գիտածողովի Նիւթեր Եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ*, կազմ. և խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան, Հրատ.՝ Հաճնոյ Հայրենակցական Միութեան, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի Հրատ., 2013, էջ 118):

նոյն որակով և ըմբռնողութեամբ և իմացութեամբ առկա չէին այդ գաղթականներուն մէջ: Անոնք դրսեցի, ուրիշ, օտարկը նկատէին իրենց բնակավայրէն դուրս գտնուող հայերը: Տարբեր էր նաև իրենց գործածած լեզուն. անոնք բարբառներ կամ թրքերէն կը գործածէին: Տարբերութիւններ կային իրենց սովորոյթներուն մէջ ևս: Կար նաև գերակայութեան զգացումը ծննդավայրին հանդէպ. հայրենակիցը գերակայ և նախապատիւ կը դասուէր այլ շրջանի մէջ ծնած հայէն: Յցուն էր նաև յարանուանական տարբերութիւնը, անոր ընկալումն ու կիրառումը՝ կաթողիկէ, աւետարանական և առաքելական համայնքներու անդամներուն կողմէ: Ուշագրաւ էր բացակայութիւնը հաւաքական հայու վերոյիշեալ համակարգերուն: Ընդհանրական, հասարակ յայտարարը միասնական ճակատագիրն ու պայմաններն էին, Տեղասպանութեան և երկրորդ գաղթականութեան հետևանքով բոլորին համար յառաջացած նոյն իրավիճակ կացութիւնը:

Հետևաբար, նախ պէտք է անդրադառնալ այս խառնիճաղանջ, խայտաբղետ զանգուածին ինքնահամարկումին:

Պէտք է ըսել, թէ գաղթական այս զանգուածին ինքնահամարկումի գործընթացը երկարեցաւ մինչև 1950ականները: Այս համարկումին թափին և խորութեան մէջ կարևոր գործօններ եղան լիբանահայ դպրոցական ցանցերը, եկեղեցիները, կուսակցութիւնները, միութիւնները, այն շփումներն ու առնչումները, որոնք յառաջացան այս մարմիններուն գործունէութեամբ բայց մանաւանդ բնակավայրային միջավայրը՝ քեմիկերը, ապա և հայաբնակ թաղամասերը, մամուլը, հանրային ձեռնարկները ևն.:

Մատնանշելի է նաև որ ներհայկական այս համարկումի գործընթացը կը շարունակուի մինչև այսօր. արդարև, 1920ականներու գաղթականներուն հոսքէն կարճ ժամանակ ետք, լիբանահայութիւնը ընդունեց ներհոսքը զանազան հայկական ուրիշ ենթախումբերու, որոնցմէ երեքը յարաբերաբար մեծաթիւ էին: Արդարև, 1939ին Ալեքսանտրէթի Մանճաքին Թուրքիոյ յանձնումով Լիբանան հոսեցաւ շուրջ 12,000 հայութիւն՝ Մուսա Լեռէն, Ալեքսանտրէթ քաղաքէն և անմիջական շրջակայքէն: Մտածամանակ ետք, 1948ին՝ Պաղեստինի տագնապին յառաջացումով, կարևոր թիով գաղթական պաղեստին-

նահայեր հաստատուեցան Պեյրուօ և շրջակայքը: Վերջին մեծաթի ներհոսքը պատահեցաւ 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմէն ետք, երբ գաղթականներու նոր ալիք մը եկաւ Լիբանան: Այնուհետև ևս, շրջանի արաբական երկիրներէն (մանաւանդ Սուրիայէն, իսկ վերջերս Իրաքէն) թէ Թուրքիայէն ներհոսքը Լիբանան երբեք չդադրեցաւ: Դէպի Լիբանան չորրորդ մեծաթի ալիքը արդիւնքն էր Սուրիոյ մէջ ծայր առած պատերազմին, որուն հետևանքով աւելի քան 10,000 սուրիահայեր ներհոսեցան Լիբանան:

Հասկնալի է անշուշտ, որ ներհայկական այս համարկումին ընթացքը արդիւնաւորուեցաւ Լիբանան հաստատուած հայկական տարբեր ենթախումբերու միաձուլումով և ընդհանրական լիբանահայոյ յառաջացումով⁶: Թերևս բացառութիւն կարելի է նկատել Մուսա Լեռ-Այնճարի հայութեան պարագան, որ համարկուեցաւ քան թէ լիարժէք ճուլուեցաւ լիբանահայութեան մէջ:

Բ) Տեղայնական Համարկում

Տեղայնական համարկումը ծայր առաւ 1920ականներու սկիզբին (1921 Հոկտեմբերի թուրք ֆրանսական համաձայնութենէն ետք) Կիլիկիոյ պարպումին հետևանքով հայութեան՝ Լիբանանի ամբողջ ծովեզերքին - հիւսիսէն հարաւ - բնակեցուելուն: Թրիփոլիէն մինչև Սուր հաստատուած հայկական այս ենթախումբերը, ըստ վերոնշեալ տեսական գործօններուն՝ տարբեր տարողութեամբ, կշռոյթով ու խութեամբ մտան համարկումի գործընթաց:

Այս գործընթացը ևս կը շարունակուի մինչև այսօր: Եւ եթէ այնուհետև պատահած հայկական ներհոսքերու հետևանքով տեղայնական համարկումին գործընթացը միօրինակ չընթացաւ, յամենայնդէպս 1946-48ի ներգաղթին պատճառով ծայրամասային ենթախումբերու համարկումին թափը զօրացաւ, մանաւանդ իբրև հետևանք այդ ենթախումբերու ինքնաբաւութեան տկարացումին, որ պատճառ դարձաւ որ ենթախումբը ստիպուի աւելի յաճախակի և անմիջականօրէն, այլաբնոյթ առնչումներ ունենալ հանդիպակաց ենթախումբերու հետ:

6 Լիբանահայ ներհայկական համարկումին գործընթացը համապարփակ էր և կ'ընդգրկէր լիբանահայ բոլոր յարանաւանութիւններու բոլոր օղակները:

Տեղայնական համարկումին հակադրոտող կարևոր գործոն պէտք է նկատել լիբանանեան հասարակայնութեան ոչ-միաձոյլ ըլլալու պարագան: Արդարև, լիբանանեան հասարակայնութիւնը միատարր չէ, այլ կը բաղկանայ բազմաթիւ ենթախումբերէ, որոնք Լիբանանի մէջ ունին պետաիրաւական ճանաչում: Այլ խօսքով, Լիբանանի մէջ կենսագործող իւրաքանչիւր քաղաքացիական ենթախումբ օրինականացած է իր էթնիք/համայնքային/կրօնական/լեզուական/յարանունական/ ինքնութենական կամ այլ առանձնայատկութիւններով⁷: Լիբանանի իւրաքանչիւր քաղաքացի ունի Լիբանանի պատկանելիութենէն անդին անցնող ենթախմբային պատկանելիութիւն, որով պայմանաւորուած է իր լիբանանցիութիւնը: Ուստի և, որևէ ենթախումբի անդամ իրաւականօրէն չի կրնար ընդգրկուիլ Լիբանանի ոչ-ենթախմբային հաւաքականութեան մը մէջ, որովհետև այդպիսին գոյութիւն չունի:

Այլ խօսքով, Լիբանանի իւրաքանչիւր քաղաքացի անդամ է սեփական համակարգերով օժտուած ենթախումբի մը, համայնքի մը: Ինչ խօսք, այս պարագան կը դժուարացնէ համարկումի գործընթացին խորացումը:

Արդարև, Լիբանան համայնքապետական երկիր է: Այս համայնքներուն մէկտեղում/պայմանական և պայմանաւորուած գործակցութիւնը կ'օրինականացնէ և իրաւական կը դարձնէ Լիբանան պետութիւնը⁸:

Նոյն տրամաբանութեան իբրև շարունակութիւն, համայնքապետական այս երկրին մէջ, սահմանադրականօրէն, իւրաքանչիւր ենթախումբի յատկացում են որոշ պաշտօններ և դիրքեր, որոնք անխոցելի և անբռնաբարելի են: Այսինքն, համայնք-ենթախումբ մը չի կրնար ոտնձգութիւն կատարել ու տիրանալ այլ համայնք-ենթա-

7 Լիբանանի մէջ պետական օրէնքով ճանչցուած-իրաւականացած են 18 ենթախումբեր, որոնք կը կոչուին համայնքներ: Այս համակարգը ձևաւորուած է օսմանեան «միլլէթ համակարգ»ի ժառանգին հիմամբ:

8 Տագէտեան Ա., Լիբանանի Հայօճախը. Գիրք Ա., Համարկումին Խաչադիները (1920–2005), հրատ. ՀՀ Սփիւռքի նախարարութեան և Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոն, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի հրատարակչութիւն, 2015, էջ 14–16):

խումբի մը վերապահուած իրատունքներուն, պետական դիրքերուն, քոթային:

Հետևաբար, պետաիրաւական համակարգը անուղակիօրէն կը սանձէ այս ենթախումբերուն խորացեալ համարկումը, որ կրնար ձուլման տանիլ ենթախումբը:

1920 Սեպտեմբերին երբ կը հռչակուէր Մեծն Լիբանան պետութիւնը, իւրաքանչիւր ենթախումբ իր իրատունքի բաժինը վերցնելէ ետք կը լծուէր նորակազմ երկրին մէջ ինքզինք վերաձնելու և կազմակերպելու գործընթացին: Նոյն կացութեան մէջ գտնուեցաւ նաև Լիբանանի հայութիւնը, որ արտաքին նուազագոյն միջամտութիւններու ենթարկուելով (նկատի ունինք Լիբանանի պետութիւն և միւս համայնքներ-ենթախումբերը) լծուեցաւ ներհամարկումի գործընթացին, ձևաւորեց ու կազմակերպեց ինքզինք, ենթախմբային համակարգերը բարեփոխեց ու նորովի պատշաճեցուց զանոնք իր նոր միջավայրին, արտաքին նուազագոյն միջամտութիւններով:

Կարելի է Լիբանանի հայութեան ներհայկական համարկումի գործընթացին վճռական հանգրուանի աւարտ նկատել 1940ականներու աւարտ-1950ականներու սկիզբը, երբ այս հաւաքականութիւնը վերածուեցաւ հայօճախի (յառաջացնելով-գօրացնելով իր համակարգերը):

Ներհայկական այս համարկումին աւարտով ալ կը սկսի տեղայնական համարկումին շօշափելի հանգրուանը, երբ սկսած էր յառաջանալ ենթախումբին տեղածին սերունդը, գաղթական հայերը քիչ թէ շատ վարժուէր էին երկրին պայմաններուն, իւրացուցեր էին տեղական լեզուի որոշ բառաշերտ, անցեր էին շուկայական յարաբերութիւններուն մէջ մակերեսային առնչումէ աւելի խորքային յարաբերութիւններու, կարևոր դերակատարութիւն ունէին երկրի տնտեսական անիւին շրջադարձին մէջ, համարկուէր էին երկրին քաղաքական կեանքին որոշ դրսևորումներուն, սակայն կը պահպանէին մշակութային կղզիացումը, հակառակ 1946-48ի ներգաղթի իրենց փորձառութեան դասերուն, որով տեսակարար կշիռ սկսեր էր ներկայացնել հայրենիքը սիրելու, անոր կապուելու բայց երկրորդ հայրենիքի մէջ բնակելու մտածումը:

Լիբանահայ տեղայնական համարկումին յաջորդ հանգրուանը կը հանդիսանայ 1950-75 շրջանը, երբ հայրենական ներգաղթին պատճառով Լիբանանի ծայրամասային հայկական օղակները մեծապէս տկարացան, դադրեցան ինքնաբաւ ըլլալէ ու որդեգրեցին այլասերումի կամ հայկական կեդրոնական ենթախումբին աշխարհագրականօրէն միանալու ուղին: Միւս կողմէն, հայօճախը ներքնապէս թափ տուաւ իր ազգային-մշակութային աշխուժութեան-վերելքին, միաժամանակ ընդգրկուելով Լիբանանի քաղաքական-տնտեսական-ընկերային ամէնօրեայ կենսագործունէութեան: Քառորդ դարու այս հանգրուանը առնչեց լիբանահայ ենթախումբը տեղայնական ենթախումբերուն՝ բոլոր համակարգերու և ոլորտներու առումով:

Կը թուի թէ այս հանգրուանին երկարատև շարունակութիւնը կրնար կարելիութիւնն ունենալ մերում մը յառաջացնելու լիբանահայ ենթախումբին և գէթ քրիստոնէական միւս ենթախումբերուն միջև:

1975ի քաղաքացիական պատերազմը, սակայն, համարկումի այս ընթացքը կասեցուց և անելին՝ ետքայլի տարաւ տեղայնական համարկումին գործընթացը:

Արդարև, Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որուն ամբողջ տևողութեան կարմիր ժապաւէնի պէս նկատելի էր միջկրօնական զոնաստորումը, պատճառ դարձաւ որ ենթախումբերու համերաշխ գոյակեցութիւնը խաթարուի: Դեռ անելին, ոչ միայն իսլամ-քրիստոնէայ հակադրութիւն մը առճակատումի տարուեցաւ, այլև նոյնիսկ ներքրիստոնէական և ներիսլամական ներքին հակադրութիւններու և առճակատումներու դուռ բացաւ: Ներքին այս հակադրութիւնները իրարու դէմ լարեցին բոլոր ենթախումբերը: Ենթախումբերուն հակադրութիւնները տարբեր սրութիւններու բարձրացաւ, ինչ որ պատճառ դարձաւ իրաքանչիւր ենթախումբի անդամի օտարացումին՝ և մերժումին այլ ենթախումբին կողմէ: Ահա այս պայմաններուն մէջ էր որ երբ ենթախումբի մը ծայրամասային օղակին խոցելիութիւնը վտանգալից դարձաւ, այդ օղակը ինքնամիտփութեցաւ և պատսպարուեցաւ իր մայր ենթախումբին հովանիին տակ: Այլ խօսքով, 1975-90 տարիները այլամերժումի, ուրիշը/միւսը չընդունիլը շեշ-

տաւորող տարիներ եղան, որով տարբեր ենթախումբերու փոխանջումի գործընթացը մեծապէս տուժեց: Տուժեց և ետքայլ կատարեց նաև համարկումը:

Փաստօրէն, երբ ակնկալելի էր որ բնօրրածին սերունդներուն անցումով, տեղայնածին սերունդներու տեսակարար կշիռ գոյացնելով թափ առնէր համարկումի գործընթացը, Լիբանանի քաղաքացիական պատերազմը եկաւ նահանջ պարտադրելու լիբանահայ տեղայնական համարկումին:

1990էն ետք, քաղաքացիական պատերազմին դադրեցումէն և միջենթախմբային պատնէշներու տակաւ վերացումով լիբանանեան համարկումին գործընթացը վերսկսաւ դանդաղ, վերապահ և զգուշաւոր քայլերով, բայց շատ արագ փոխեց իր այս կշռոյթը:

Այս հանգրուանին, Լիբանանի հայօճախին համարկումի գործընթացը աւելի թափով ներգրաւուեցաւ ներլիբանանեան համապարփակ, ընդհանրական համարկումի գործընթացին մէջ: Այդուհանդերձ, յատկանշական է որ լիբանանեան իւրաքանչիւր ենթախումբ համալիբանանեան համարկումին իրեն յատուկ կշռոյթը ունի:

Համարկումի այս գործընթացը շեշտակիօրէն կ'ազդուի համաշխարհայնացումի գործընթացին ազդակներէն: Այս ազդեցութիւնը երբեմն կը դրսևորուի արհեստական, միտումնաւոր հակազդեցութիւններով, հակադարձութիւններով, երկրագունդի այս կամ այն վայրին մէջ կատարուած մեծ ու ցնցիչ իրադարձութիւններէն, Միջին Արևելքի մէջ արաբ-իսրայէլեան, պաղեստինեան-իսրայէլեան տագնապին վերիվայրումներէն, քրիստոնեայ Արևմուտքի և Արևելքի ու իսլամական աշխարհին մէջ հակաիսլամական թէ հակաքրիստոնեական այլևայլ դրսևորումներէ: Միաժամանակ, լիբանահայ տեղայնական համարկումը կ'ազդուի նաև անդրսահմանայաին իւրայատուկ գործօններէ, որոնք ունին հայկական երևոյթներ և կ'առնչուին Սփիւռքին, Հայաստանի Հանրապետութեան և հայկական տարածականութեան զարգացումներուն:

Այդուհանդերձ, համարկումին և յառաջացեալ համարկումին նպաստող վճռական գործօններ են միջավայրը, շուկան, ենթախումբին նորօրեայ ինքնաբաւութեան անկարելիութիւնները, իւրաքան-

չիր տեղդայնաձին սերունդի ինքնութենական բաղադրատարրերը և նոյնինքն համաշխարհայնացումին երևոյթները:

Արդարև, համաշխարհայնացումի ներկայ պայմաններուն մատուցումով յառաջացած ‘տեսանելի-բայց-ոչ-անպայման հասանելի’ առատութեան տեսական առկայութիւնը անբաւարար կը դարձնէ որևէ ենթախումբի վերոյիշեալ համակարգերու բաւարարութիւնը, որով պարտադիր կը դառնայ առնչումը ուրիշ ենթախումբերու և անոնց միջոցով հասանելիութիւնը՝ ենթախումբին պակսող համաշխարհային համակարգերուն:

Դոկտ.Անդրանիկ Տազէսեան

Հայկազյան Համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրէն

ԼԻԲԱՆԱՆԱՅԵՐԸ ՀԻՄՆԱՐԿՈՒՄԻՆ ԱՌԱՂԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամփոփում

Ամփոփելով կարելի է ըսել, թէ լիբանահայ համարկումը եղաւ երկուդի. ներհայկական և տեղայնական:

Ներհայկական համարկումը իվերջոյ առաջնորդեց Լիբանանի հայօճախին գոյացումին, անոր յարաբերական միաձուլութեան:

Տեղայնական համարկումին առումով, վերջին հարիւրամեակի Լիբանանի հայօճախը ունեցաւ չորս հանգրուան. ա) 1920-50՝ կրատրական հանգրուան, բ) 1950-75՝ առնչումի հանգրուան, գ) 1975-90 ետքայլի հանգրուան, դ) 1990՝ վերսկսման գործընթաց: Այս հանգրուանները արդիւնքն էին տեղական, արտասահմանեան, հայկական թէ օտար, անդրսահմանային, առարկայական, ենթակայական, պետաիրաւական և այլնայլ գործօսներու, որոնք տակաւին կարիքն ունին խորունկ և համապարփակ ուսումնասիրութեան:

Доктор Андраник Дакесян

Директор Центра исследований армянской диаспоры университета Айказян

ОСОБЕННОСТИ ИНТЕГРАЦИИ ЛИВАНСКИХ АРМЯН

Резюме

Резюмируя можно утверждать, что интеграция ливанских армян происходит в двух направлениях: по внутриармянскому и локальному, внутриливанскому .

Внутриармянский путь интеграции привел к созданию национального очага и относительной взаимной интеграции. По локальному направлению этот процесс определялся следующими этапами. За последнее столетие армянский национальный очаг в Ливане пережил четыре вехи: а) 1920-50 – пассивная вежа; б) 1950-75 вежа взаимодействия; в) 1975-1990 – вежа отступления и г) 1990 по сей день – вежа воссоздания. Эти вехи явившиеся результатом объективных и субъективных факторов локального, зарубежного, международного характера нуждаются в дальнейшем глубинном исследовании.

Dr. Antranik Dakessian

Director of the Center for Armenian Diaspora Studies at Haykazyan University

FEATURES OF THE INTEGRATION OF LEBANESE ARMENIANS

Summary

The paper highlights aspects of the integration of Lebanese Armenians into the Lebanese polity. It notes that notwithstanding the small pockets of Armenian settlements in Mount Lebanon as of the early 18th century, the massive presence of Armenians in Lebanon is the result of the early 1920s, when they had to quit Cilicia due to the Franko-Turkish Ankara Agreement signed on October 20, 1921.

The paper gives a localized definition of integration, deliberates on aspects, variables and factors which impact its process and notes that the Lebanese Armenian community has had two separate tracks of integration: a) intra-Armenian integration and b) pan-Lebanese integration.

The paper argues that the Armenians who settled in Lebanon had come from different and diverse localities and distinct backgrounds, spoke diverse dialects or Turkish, differed in their habits and traditions, had strong cleavages, and had mostly started mingling with other Armenians due to the new circumstances. The paper notes that the camps were the places where they intermingled and started new relationships, which eventually led to merging and the dissolution of their differences as well as the establishment of common features within the community. The paper stresses that intra-Armenian integration is still going on as the inflow of Armenians from neighboring countries continues to this day.

As for the integration of the community into the broader Lebanese community, the paper notes that the consociational system of the Lebanese state maintains a level of constraints and limitations on the thorough integration of the diverse communities of Lebanon. The paper argues that with the end of the basic phase of intra-Armenian integration the phase of local integration, which continues to this day, started. The features, rhythm and extent of this integration change with every new generation, and the paper concludes that there have been four stages: a) market-place integration (1920-50), b) multifaceted integration (1950-75), c) the disconnecting phase (1975-90), and d) the reconnecting phase (as of the 1990s).

Մնակ Յակոբեան
Ընկերաբան, Լիբանանի «Զարթօնք» օրաթերթի գլխավոր խմբագիր

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԻՐԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄՈՒՏՔ

Մենք բոլորս կը պատկանինք այս կամ այն մշակոյթին: Մշակոյթը, ինչպէս ըսինք, մարդկային իմացութեան, համոզումներու, հաւաքականութեամբ սահմանուած կարգերու համակեցոյթինն է, միաժամանակ նաև՝ նիւթական արտադրութիւններ և կառոյցներ, որոնք մենք կը փոխանցենք սերունդէ սերունդ: Մշակոյթը այն հիմնական գործօնն է, որ կ'օգնէ մարդոց հաղորդակցիլ և կը կարգաւորէ անոնց միջև հաղորդակցութեանց զանազան ոլորտները:

Մշակոյթը կը վերլուծէ կեանքը կազմող շատ մը բնագաւառները, որոնք կ'առնչուին նոյն այդ հաւաքականութեան տեսադաշտներուն, մտահորիզոններուն և ըմբռնումներուն, և որ նաև կը ստեղծէ արժէք և սովորութիւն՝ նոյնինքն այդ հաւաքականութեանէ Այս իմաստով, վերոյիշեալ տեսադաշտերը, ըմբռնումները կը դառնան տուեալ հաւաքականութեան կեանքի ուղին, կը վերածուին ամբողջական մշակոյթի բնորոշումին, ուր կ'ամփոփուի գաղափար, կեցուածք, լեզու, վարուելակերպ, կազմակերպական կառոյց, արուեստ և այլն)է Օտարը կրնայ ազգի մը ներկայացուցիչը ճանչնալ անոր մշակոյթին շնորհիւ:

Մշակոյթը ազգի մը գոյութեան և զարգացման անհրաժեշտ նախապայմանն է: Անով է որ ազգ մը հաղորդակից կ'ըլլայ և կը միանայ մարդկութեան:

Հայ ժողովուրդին համար մշակոյթը եղած է ու կը մնայ իր գոյատևումը իմաստաւորող հզօրագոյն ազդակ: Հայ մշակութային ժա-

ռանգությունը կը վկայե, որ ունե մեկուն հետ համեմատությունը հզորությունը մեր մեջ կայ: Ազգային մշակոյթը կ'երաշխատի և կ'ամրապնդէ ժողովուրդի մը գոյութեան հիմերը: Մշակոյթը, Հայ ժողովուրդի պատմութեան մաս կազմող Դիցարանությունը, հայերէն լեզուն, կիրառած արուեստը (իր գանազան երեսակներով), կրթութեան համակարգը, խոհանոցը, տօները... կը կազմեն հայ ժողովուրդին թէ՛ շօշափելի և թէ՛ անշօշափելի մշակոյթը:

Հայոց պարագային անվարան կրնանք հաստատել, թէ հայ մշակոյթը հայ ազգին համար ինքնապաշտպանութեան ամենէն ամուր և ամենավստահելի խարիսխներէն մէկը եղած է: Ինչպէս անցեալին, ներկայիս ալ հայ մշակոյթը մեր ազգային գոյատևման հիմնակրուանը կը հանդիսանայ: Այսպէս ապրեր ենք դարեր ու գոյատևեր: Իր մշակոյթովը կ'ապրի Հայ Սփիւռքը ու կը գոյատևէ:

ՀԱՅԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ ԼԻԲԱՆԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Հայերու ներկայութիւնը Լիբանանի մեջ արդիւնք է դարերու վրայ երկարող արտագաղթի ալիքներու: Այս ալիքները իրենց գագաթնակէտին հասան Ա. Համաշխարհային Պատերազմին ընթացքին և անոր աւարտէն ետք, 1915էն 1923 երկարող տարիներուն, երբ թրքական հալածանքներէն և Յեղասպանութենէն վերապրողներ, տեղահանուած՝ Արևմտեան Հայաստանէն և Փոքր Ասիոյ ու Կիլիկիոյ բնակավայրերէն եկան հաստատուելու Լիբանան: Այսպէս գոյացաւ Ի. դարու Սփիւռքի ամենակարևոր կեդրոններէն մէկը:

Մինչ այդ, արևելեան Միջերկրականի ափ խաչակիրներու ներխուժման ընթացքին և անոնցմէ ետք ու Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան անկումէն ետք (1375) մեծաթիւ հայեր արտագաղթեցին Լիբանան: Մինչև 19րդ դարու վերջերը, Լեռնալիբանան հաստատուած հայերու մեծամասնութիւնը կաթողիկէ համայնքին կը պատկանէր:

Այս վերջինները ապաստան գտան Լիբանանի մարոնիներուն մօտ և ստացան դրամ ու հող: 18րդ դարու կիսուն, երկվեցեակ մը կամ աւելի հայ կաթողիկէ գիւղեր կային Լեռնալիբանանի կեդրոնական

շրջաններուն մէջ: 1749ին, Հայ Կաթողիկէ համայնքը հիմնադրեց Զմմառու վանքը, իր գոյութիւնը պահպանող հայկական ամէնահին հոգեմտաւոր կեդրոնը Լիբանանի մէջ:

1832էն 1840, Լիբանանի տնտեսական բարօք վիճակը քաջալեր հանդիսացաւ, որ բազմաթիւ այլ հայ առևտրականներ, մեծ մասամբ կաթողիկէ, հաստատուին Լիբանան (Ռաֆայէլ Փ., 1975):

Օսմանեան Կայսրութեան մաս հանդիսացող Լիբանան, միևնոյն կայսրութեան կողմէ դրուեցաւ քրիստոնեայ *մութասարրիֆի* (կառավարիչ) կառավարման տակ:

Մինչև Ա. Համաշխարհային Պատերազմի բռնկումը, հայ կաթողիկէները կարևոր դեր ունեցած են Լիբանանի տնտեսական և քաղաքական կեանքին մէջ: Այս շրջանին ութ մութասարրիֆներէն երկուքը (առաջինը և վերջինը)՝ Տաւոտ Փաշա (1861-1868) և Օհաննէս Փաշա Գոյումնեան (1912-1915) հայ կաթողիկէներ էին (Պօղոսեան Ե., 1949, Իսլամական Հանրագիտարան և Վարժապետեան Ս., 1951): Տաւոտ Փաշայի վարչակազմը կը ներառէր բազմաթիւ հայեր: Ան քաջալերեց բազմաթիւ ազգակիցներ, որ հաստատուին Լիբանան: Շուտով Լիբանանի մէջ հայերու թիւը հասաւ տաս հազարի: Խառն ամուսնութիւններ հաստատուեցան եկուոր հայերու և տեղաբնիկ քրիստոնեաներուն միջև: Հակառակ, որ համայնքը հիմնադրեց եկեղեցիներ, սկումբներ, և ընկերութիւններ, անիկա երբեք չհաստատեց հայկական վարժարան մը: Հետևաբար, հայ փոքրիկները կը յաճախէին ֆրանսական կամ մարոնիթ դպրոցներ, իսկ շատեր շրջանաւարտ եղան Պէյրութի Յիսուսեաններու Սէն Ժոզէֆ համալսարանէն: Փաստօրէն, Լիբանանի հայ համայնքին մէջ ֆրանսերէնը կամ արաբերէնը կ'օգտագործուէր որպէս՝ առաջին լեզու:

1894-1896ի համիտեան մեծ ջարդերէն և հալածանքներէն խուսափելու համար, մեծաթիւ հայեր ապաստանեցան Լիբանան:

Ի տարբերութիւն արդէն իսկ գոյութիւն ունեցող համայնքին, որ կայք հաստատած էր նախքան 19րդ դարու վերջը, նորեկները ցուցաբերեցին ազգային գիտակցութեան անլի ուժգին զգացողութիւն, որուն ապացոյց հանդիսացան անոնց հիմնադրած զանազան կրթական, ընկերային և քաղաքական կազմակերպութիւնները: Այս գոր-

ծողությունները արդիւնք էին նաև հայկական ազգայնականութեան զարթօնքին, որու քարոզիչներէն էին հայկական ազատագրական նորաստեղծ շարժումները:

Նախապէս Լիբանանի մէջ կայք հաստատածները օգնեցին նորեկներուն, որ աշխատանք և բնակարան ձեռք ձգէն: Անոնք նաև հաստատեցին որբանոցներ և կատարեցին դրամահաւաք՝ մանուկներու անվճար կրթութիւնը ապահովելու համար:

20րդ դարու առաջին տասնամեակին, տեղի ունեցաւ հայ ուսանողներու թիւի արագ աճ Պէյրութի երկու կարևորագոյն համալսարաններուն՝ Ամերիկեան Համալսարանին (AUB) և Մէն ժոզէֆ Համալսարանին (USJ) մէջ: 1904ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը արդէն հաստատած էր տեղական իր մասնաճիւղը Պէյրութի մէջ, կազմուած գլխաւորաբար ուսանողներէ: 1908ին Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ետք, ՀՅԴ իր վերահսկողութեան տակ առաւ Ուսանողական ընկերակցութիւնը (որ յետագային կոչուեցաւ Զաւարեան Ուսանողական Միութիւն), իսկ Ամերիկեան Համալսարանի Հայ Ուսանողական Միութիւնը ստացաւ պաշտօնական ճանաչում: Այս միութեան նպատակն էր պահպանել և տարածել հայկական ազգային գիտակցութիւնը հայ լեզուի և գրականութեան ուսուցման ճանապարհով:

Ա. Համաշխարհային Պատերազմի բռնկումով և Լիբանանի մէջ մութասարրիֆներու վարչակարգին փոխարէն ուղղակի օսմանեան կտրավարում հաստատուելէն ետք, 1915ի Հոկտեմբերին բազմաթիւ հայեր տեղահանուեցան դէպի Դամասկոս և ճամբու վրայ ջարդուեցան զանգուածաբար: Քանի մը տարիներու ընթացքին՝ Ա. Համաշխարհային պատերազմի աւարտին և ֆրանսական բանակին կողմէ Կիլիկիոյ պարպումին միջև, հայերը ոչ միայն անհամեմատ մեծ թիւով վերադարձան Լիբանան, այլև հետզհետէ աճեցան չափով և կարևորութեամբ: Այս աճը շարունակուեցաւ, արագացաւ և Լիբանանի քաղաքացիական պատերազմի նախօրեակին, 1975ի Ապրիլին, հասաւ իր գագաթնակէտին՝ կազմելով աւելի քան 200,000ոնց համայնք մը:

Միջ-պատերազմեան տարիներուն՝ Ա. և Բ. Համաշխարհային պատերազմներու աւարտներուն միջև, թէ՛ ֆրանսական հոգատարու-

թեան շրջանին և թէ՛ Լիբանանի անկախութենէն ետք, լիբանանահայ համայնքը, որ գլխատարաբար կեդրոնցած էր Պէյրութի, Լեռնալիբանանի, Սայտայի և Սուրի նման ծովեզերեայ քաղաքներու, առաւել՝ Պեքաաի դաշտավայրի Այնճար բնակավայրին մէջ, ենթակայ դարձաւ արմատական փոփոխութիւններու և ցոյց տուաւ ինքնակազմակերպման իրայատուկ կարողութիւն:

Մարոնի երևելիներու պնդումներուն տակ, և համաձայն Լոզանի դաշնագրի պայմաններուն, ֆրանսական հոգատար իշխանութիւնները լիբանանեան քաղաքացիութիւն շնորհեցին Լիբանան հաստատուած բոլոր հայերուն, որոնք ցանկութիւն յայնեցին քաղաքացիութիւն ունենալու (Մեծն Լիբանանի Պաշտօնաթերթ, 1924): Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարքութեան և Միջին Արևելքի Հայ Աւետարանական համայնքի ղեկավար մարմին Լիբանանի մէջ հաստատուիլը այս երկիրը վերածեցին Միջին Արևելքի, ինչպէս նաև բովանդակ սփիւքահայութեան հոգևոր կեդրոնին:

Այնուհետև հայկական վարժարաններ բացուեցան մէկը միւսին ետևէն: Հիմնադրուեցան բազմաթիւ եկեղեցիներ, համայնքային և կուսակցական ակումբներ, մարզական, կրթական, բարեսիրական և երիտասարդական կազմակերպութիւններ: Հայկական կուսակցութիւնները՝ գաղափարախօսութեամբ ընկերվարական և գործնականօրէն ազգայնական Դաշնակցութիւնը, ընկերվար-ժողովրդավար հնչակեանները և ժողովրդավար ազատական ռամկավարները սկսան գործել կանոնաւորապէս, մրցակցելով համայնքային ընտրութիւններու մէջ և քարոզելով իրենց քաղաքական գաղափարախօսութիւնը իրենց նորաստեղծ օրաթերթերու էջերէն: Այս կուսակցութիւնները մասնակցութիւն սկսան բերել նաև Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն: Լիբանանի կառավարման համայնքային դրութիւնը հայկական համայնքին շնորհեց երեսփոխաններ ունենալու իրաւունքը: 1929ին, առաջին հայ կաթողիկէն մուտք գործեց Լիբանանի ներկայացուցչական խորհուրդ (ապագայ խորհրդարան), որպէս «փոքրամասնութիւններու» ներկայացուցիչ: Հայ Առաքելական համայնքը շուտով ստացաւ երեսփոխան ունենալու իրաւունքը, 1934ին:

Սկիզբը, հայ առաքելականները ստացան խորհրդարանին մէջ մէկ աթոռ (*Ազդակ* 4/01/1934), ապա՝ 1937ին՝ երկու աթոռ ունենալու իրատունք: Անկախութենէն ետք (1943), հայերու երեսփոխանական աթոռներու թիւը աւելցաւ և 1960ի ընտրական օրէնքին համաձայն, կազմեց հինգ աթոռ, չորսը՝ հայ առաքելական և մէկը՝ հայ կաթողիկէ համայնքին համար: Միւս կողմէ, հայ և արաբ ատետարանականները համաձայնեցան չորս տարին անգամ մը յաջորդաբար զբաղեցնել Լիբանանի ատետարանական համայնքին վերապահուած մէկ աթոռ:

Տնտեսական գետնի վրայ, հայերը կատարեցին նոյնքան յաջող իրագործումներ: 1940ականներու կիսուն, արդէն իսկ հայերու մեծ համեմատութիւն մը դուրս եկած էր գաղթակայաններէն, ուր անոնք սկզբնապէս հաստատուած էին, և իրենց տուները կառուցած էր Պէյրութի թէ մօտակայ շրջաններուն մէջ: Շատ ուրիշներ տեղափոխուեցան լիբանանեան այլ քաղաքներ, ուր հաստատեցին իրենց անձնական գործերը կամ աշխատանքի անցան զանազան աշխատանոցներու մէջ:

Բազմաթիւ էին պատճառները, որոնց հետևանքով հայկական համայնքը այս շրջանին քանակապէս աճեցաւ և հեզասահօրէն համարկուեցաւ լիբանանեան քաղաքական, տնտեսական և ընկերային ու մշակութային կեանքին: Ճիշտ է, որ հայերը կը վայելէին մարոնի դեկավարներու զօրակցութիւնը և պետական իշխանութիւններուն բարեկամական մօտեցումը, սակայն ասոնք չէին հիմնական պատճառները, որոնց հետևանքով աւելի ու աւելի մեծ թիւով հայեր եկան հաստատուելու Լիբանան: Դէպի Լիբանան հայերու հոսքին քաջալեր հանդիսացան նոյնինքն լիբանանահայերը, որոնց շնորհիւ իրենց լաւապէս կազմակերպուած բարեսիրական, մշակութային, ընկերային և քաղաքական կազմակերպութիւններուն ցուցաբերեցին կամեցողութիւն, կարողութիւն՝ իրենց մէջ ընդունելու նորեկները: Այսպէս, հայկական իւրաքանչիւր յարանուանութիւն ստանձնեց յարանուականօրէն իրեն պատկանող անհատին հոգատարութիւնը: Նոյնպէս, քաղաքական կուսակցութիւնները օգտակար հանդիսացան, որ իրենց անդամները, համակիրները և անոնց ընտանիքի անդամները ապահովուին աշխատանքով:

Հայկական դպրոցները, որոնց թիվը 1960ականներուն հասաւ 60ի, իրենց դռները լայն բացած էին հայ փոքրիկներուն առջև՝ գրեթէ անվճար կարգով: Փոխարէն, շարք մը բարեսիրական և կնոջական կազմակերպութիւններ կը կազմակերպէին կանոնաւոր դրամահաւաքներ՝ հաւասարակշռելու համար դպրոցներու տարեկան պիտոճեական բացը: Մինչ այդ, աշխարհական և կրօնական համայնքային իշխանութիւնները հիմնադրեցին բժշկական ծառայութեան կեդրոններ՝ կարիքատուրներու համար և տարեցներու խնամատար հաստատութիւններ: Այսպիսով, և ի տարբերութիւն և հակադրութիւն արաբական այլ երկիրներու մէջ հայկական համայնքներու թիւի նուազումին, Լիբանանի հայ համայնքը մեծցաւ թիւով և կարևորութեամբ, դառնալով սփիւռքահայութեան կարևորագոյն կեդրոններէն մէկը: 1975ի քաղաքացիական պատերազմի նախօրեակին, Լիբանանի մէջ ապրող հայերուն թիւը (ներառեալ ոչ-քաղաքացի 60,000 հայերը), կը տարուբերէր 240,000ի և 280,000ի միջև (Ժարրահ Մ., 13/11/1973):

Այդ ընթացքին, լիբանանահայերը կ'ապրէին մշակութային ծաղկուն և եռուն կեանքով՝ զանազան ձեռնարկներով առլեցուն:

Լայն տարողութեամբ գործունէութիւն կը ծաւալէին զանազան մարզական, մշակութային և բարեսիրական կազմակերպութիւններ, ներառեալ հայկական բարեգործական մեծագոյն ընկերակցութիւնը՝ ՀԲԸՄը, որ մեծապէս նպաստեց Լիբանանի մէջ հայկական համայնքային կեանքի կազմակերպման: Ճինիշեան և Գարակէօզեան հիմնարկներն ալ իրենց կարգին, անգուգական դեր ունեցած են բարեսիրական գործունէութեանց մէջ:

Կը հրատարկուէին աւելի քան 21 անուն հայկական օրաթերթեր և այլ պարբերականներ, մինչ հայկական համասփիոքեան գրեթէ բոլոր կազմակերպութիւնները իրենց շրջանային կեդրոնատեղին հաստատած էին Պէյրութի մէջ: Աւելին, համայնքին մէջ կը գործէին դպրոցներ, ուր կը յաճախէին 17 հազարէն 21 հազար աշակերտներ (շփոթ հայկական զանազան աղբիւրներու միջև), ընդհանուրը Լիբանանի մէջ այդ օրերուն արձանագրուած 43,451 հայ աշակերտներէն (Թէյրուզ Ժ., 1982, Ճերմակեան Լ., 1988): Մնացածները կը յաճախէին լիբանանեան զանազան վարժարաններ, զլիսաւորաբար՝ քրիստոնէ-

ական, ի ցոյց հանելով պարզորոշ նշանները համարկումի զարգացած գործընթացի մը՝ յատկապէս նոր սերունդի շարքերուն մէջ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՅԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Լիբանանի քանդիչ քաղաքացիական պատերազմը (1975-1990), իր հետ բերաւ ցեղային, կրօնական, ազգայնական և շրջանակային ցնցումներ, որոնք բրտութեամբ մասնատեցին Լիբանանի բազմատարր ընկերութիւնը՝ զայն վերածելով խստօրէն սահմանագատուած և տարանջատ համայնքային աշխարհագրական տարածքներու, և պատճառ դարձան հարիւր հազարաւոր լիբանանցիներու արտագաղթին: Քաղաքացիական պատերազմին ընթացքին, մինչև մէկ միլիոն լիբանանցի ստիպուած եղած էր տեղահանուիլ՝ Լիբանանի ներքին սահմաններուն մէջ: Կարգ մը աղբիւրներու համաձայն, 1975էն 1990 շրջանին, երկրի բնակիչներուն մինչև մէկ երրորդը տեղափոխուած էր նոր բնակարան, իսկ աւելի քան մէկ միլիոն ուրիշներ արտագաղթած էին Երոպա, Ամերիկաներ, Աւստրալիա և շատ ուրիշ վայրեր: Քրիստոնէայ արտագաղթողներու համեմատութիւնը կը կազմէր վեց՝ իսլամ և տիրզի արտագաղթողներուն միացեալ մէկին դիմաց: Դրամ կամ կրթութիւն ունեցողը, այդ հնարաւորութեան շնորհիւ, ձգեց երկիրը, որ այդ միջոցին աղբիւր էր միայն քանդումի, ճնշումի և աղքատութեան: Մնացին անոնք, որոնք հնարաւորութիւն չունէին երթալու, որպէս «պատանդներ՝ աղքատանցի մը մէջ», ինչպէս կը բնութագրէ Թէոտոր Հանֆ (Հանֆ, 1993):

Բնականաբար, 15 տարուան քառսը պատճառ դարձաւ նաև լիբանանահայերու նկատառելի տեղափոխման և արտագաղթին: Հազարաւոր լիբանանահայեր ձգեցին երկիրը, ոմանք՝ վերջնականապէս, ուրիշներ՝ այն յոյսով, որ հեռացումը ժամանակաւոր արքայ մը պիտի ըլլայ միայն:

Պէլրութի մէջ ապրող հայերու մեծամասնութիւնը լքեց մեծամասնութեամբ իսլամաբնակ «Արևմտեան Պէլրութ»ը՝ հաստատուելու համար մեծամասնութեամբ քրիստոնէաբնակ «Արևելեան Պէլրութ»ի շրջաններուն մէջ: Լիբանանահայերը, ներկայացուած իրենց

քաղաքական կուսակցություններով, յայտարարեցին քաղաքացիական պատերազմին մեջ որպէս համայնք իրենց չէզոքութեան և կռուին չմասնակցելու իրենց որոշումին մասին: Այդուհանդերձ, անհատ լիբանանահայեր, իրենց բնակութեան վայրին համեմատ, միացան լիբանանեան տարբեր կուսակցություններու և զինեալ խումբերու, կռուելու համար ի խնդիր - իրենց համոզումով - հասարակաց բարիքին: Քաղաքացիական պատերազմը, որ տևեց 15 տարի, հնձեց հազարաւոր անմեղ քաղաքացիներու կեանքը և անդամալուծեց երկիրը մշակութային, ընկերային, քաղաքական և տնտեսական մակարդակներուն վրայ:

Քաղաքացիական պատերազմի աւարտէն ետք, և յատկապէս 1991ի Թաէֆի համաձայնագրին (նոր սահմանադրութեան) շնորհիւ, Լիբանան կրցաւ որոշ զարգացում իրականացնել իր ընկերային և քաղաքական հաստատությունները վերականգնելու ուղղութեամբ: Թաէֆի համաձայնագրով հայ առաքելական համայնքը ստացաւ յաւելեալ աթոռ մը խորհրդարանին մէջ, Պեքաաի ընտրական շրջանէն: Լիբանանեան պետական հաստատությունները վերսկսան գործել և յարաբերական ապահովութիւն մը հաստատուեցաւ:

Հակառակ քաղաքական համեմատական կայունութեան և վերակառուցման ու զարգացման ծրագիրներու իրագործումին, հայ համայնքը դժուարութիւն ունեցաւ վերաշխուժացնելու իր ընկերային և մշակութային կեանքը՝ անցեալի բարգաւաճ մակարդակին համապատասխան:

Համայնքի քանակական նուազումը ժխտականօրէն ազդեց անոր վիճակին վրայ, բոլոր առումներով: Հայկական դպրոցներու թիւը 60էն նախ նուազեցաւ 30ի, ապա տարուէ տարի աւելի ևս նուազելով հասաւ այսօր 17ի: Թերթերուն թիւը նոյնպէս կտտորակուեցաւ: Համայնքային որակական վիճակը ժխտականօրէն ազդուեցաւ նաև նիւթական կարողութիւն ունեցողներու, ուսեալներու և յատկապէս՝ երիտասարդ ընտրանիի արտագաղթին պատճառով: Յստակ չենք գիտեր, թէ քանի հազար լիբանանահայեր արտագաղթեցին: Լիբանանի մէջ մարդահամար կատարելու անկարելիութիւնը (քաղաքական պատճառներով), նոյնիսկ խաղաղ պայմաններու մէջ, մեզի թոյլ

կու տայ միայն ենթադրություններ կատարել լիբանանահայ համայնքի թուական ներկայ իրավիճակին մասին: Ամենալուստես աղբիւրներու համաձայն, լիբանանահայությունը ներկայիս կը հաշուէ 50էն 60 հազար մարդ:

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Լիբանանեան և Լիբանանահայ Մշակոյթ

Լիբանանեան մշակոյթը բազմաբնոյթ է թէ՛ աշխարհագրական իմաստով (լեռնային-ծովային) և թէ՛ Լիբանանէն անցած կամ հոն հաստատուած հաւաքականութիւններու մշակոյթներուն առումով:

Լիբանանահայ մշակոյթը մաս կը կազմէ լիբանանեան մշակոյթին: Ազդած է անոր վրայ՝ ու ազդուած անկէ:

Լիբանանը ըլլալով արաբական այն միակ երկիրը, որ յարաբերաբար ատլի ազատութիւններու վրայ հիմնուած վարչակարգ ունի, է նաև այն երկիրը, որուն համայնքային բաղադրութիւնն ու իրատուքները ինչպէս նաև մշակոյթի ու հաւատալիքի ազատութիւնը երկրին սահմանադրութեամբ ամրագրուած են:

Հետևաբար Լիբանանահայ համայնքը իր Լիբանան հաստատուելու առաջին իսկ օրէն առիթը ունեցած է իր ուրոյն մշակոյթն ու սովորութիւնները պահպանելու մշակութային և կրթական որոշ ինքնավարութեամբ մը:

Բ. Լիբանանահայ Եկեղեցին, թերթն ու դպրոցը

Լիբանանահայ մշակոյթի կարևորագոյն ազդակներէն են եկեղեցին, թերթն ու դպրոցը, որոնց միջոցաւ կը կատարուի հայ մշակոյթի ուսուցումն ու փոխանցումը: Ասոնք լիբանանահայութեան կազմաւորման առաջին իսկ օրէն հաստատուած էին ու լծուած աշխատանքի:

Եկեղեցին. Լիբանանահայ եկեղեցիները՝ երեք յարանուանութիւններու, աշխարհագրականօրէն լիբանանահայութեան բնակութեան վայրերուն համեմատ տրամաբանականօրէն բաժնուած են Լիբանանի մէջ: Հոն, ուր կարելի եղած չէ եկեղեցի կառուցել, շինուած է մատոտ՝ գոհացնելու հաւատացեալներու հոգևոր պէտքը:

Եկեղեցին իր ծիսակատարութեամբ և հայկական տօներու օրացոյցով և տօնակատարութիւններով մեծապէս սատարած է լիբանանահայութեան մշակոյթի կրօնական երեսը պահպանելուն: Եկեղեցին ալ իր կարգին անշուշտ ազդուած է լիբանանեան մշակոյթէն ինչպէս Ծաղկազարդի թափորը (որ ատենին հայկականօրէն տեղի կ'ունենար եկեղեցիին մէջ միայն, սակայն ազդուելով լիբանանեան քրիստոնէայ այլ համայնքներու սովորութիւններէն՝ եկեղեցիէն դուրս եկած է ժամանակի ընթացքին և կը կատարուի եկեղեցիին շուրջ): Եկեղեցոյ անուանակոչումներու հետ կապուած նաև հերոսամարտերու մատադօրինէքը և Այնճարի Ս. Խաչի տօնը, խաղողօրինէքը, ազգագրական (Տեարնընդառաջի խարոյկը), նաև եկեղեցական կարևոր տօնակատարութիւններուն մաս կը կազմեն:

Սկիզբէն ևեթ պահպանուած են այս սովորութիւնները, թէև՝ տարուէ տարի, ժողովրդագրական տուեալներով բնականաբար նուազ մասնակիցներով: Հինգ տաղաւարներու տօնակատարութիւնները բնականաբար պահպանուած են եկեղեցոյ մէջ, որոնց ներկայ կ'ըլլան մեծ թիով լիբանանահայեր: Օրինակ, Մեռելոցը, նուագագոյնը՝ Ս. Ծնունդի և Ս. Զատկուան յաջորդող օրերուն տակաին յարգուած ընկերային-եկեղեցական սովորութիւն մըն է, որ կը գործադրուի անխափան: Պահպանուած չէ կարգ մը կրօնագիրքերու հիւանդներու գրուխին կամ ընդհանրապէս ֆիզիքական ապահովութեան համար ենթակային գլխուն կարդացուող (ինչպէս Կիպրիանոսի կամ Նարեկի) սովորութիւնը: Լաւագոյն պարագային, անոնք փոխարինուած են այս գիրքերը կամ ւաւետարանը պահելու անկողնին գլխուն մասին տակ:

Թերթը. Լիբանանահայ թերթերը կարևոր դեր խաղած են ինչպէս համայնքը հայկականութեամբ ներշնչելու և հայ իրականութեան իրագել դարձնելու, նաև՝ հայոց լեզուի պահպանման մէջ: Կիլիկիոյ գիւղերէն և քաղաքներէն մագապուրծ Լիբանան ապաստանած դպրոցական կամ որբանոցային տարիքային խումբէն աւելի մեծ տարիք ունեցող սերունդին, որոնք թրքախօս էին, հայերէն լեզուի իմացութիւնը մեծ մասամբ թերթերուն միջոցաւ իրականացած է: Անոնցմէ կուսակցապատկան կամ միութենապատկան թերթերը կը

շարունակեն գոյատևել այսօր հակառակ ընթերցողի պակասին և արհեստագիտության՝ տպագիրին հասցուցած վնասներուն, որ նաև անշուշտ լուկ հայկական երևոյթ չէ:

Դպրոցը. Լիբանանահայ համայնքը այն միակ սփիւռքն է, որուն կրթական համակարգը ամբողջական եղած է մանկապարտէզէն մինչև համալսարան, ըլլան անոնք անհատական, եկեղեցապատկան թէ միութենապատկան: Միննոյն համակարգին մէջ Լիբանանի մէջ գործած են հայկական որբանոցներ: Լիբանանի մէջ գործած են և կը գործեն նաև լիբանանահայ մասնագիտացած դպրոցներ ինչպէս ուսումնական յատուկ դժուարութիւններ ունեցողներուն և թերաճներուն նաև երաժշտութեան, գծագրութեան պարարուեստի, արհեստից, ևայլն:

Սկզբնական տարիներուն, լիբանանահայ դպրոցը եղած է եկեղեցապատկան նախակրթարան: Շուտով միութիւնները եկած են համալրելու դպրոցական համակարգը իրենց երկրորդական վարժարաններով կարգ մը անհատական նախաձեռնութիւններու կողքին: Կրթական համակարգը համալրուած է Հայկազեան Համալսարանով (հիմնուած 1955ին), որ միակ հայկական համալսարանը կը հանդիսանայ ոչ միայն Լիբանանի մէջ այլև ամբողջ Սփիւռքի: Լիբանանի կրթական համակարգը արտօնած է հայոց լեզուին, պատմութեան և մշակոյթին ազատ ուսուցումը հայկական վարժարաններէն ներս, ուրկէ հասած են հայութեամբ թրծուած սերունդներ, որոնցմէ ոմանք արտագաղթելով նոր աւիշ փոխանցած են արևմտեան աշխարհի այն սփիւռքներուն, ուր վերահաստատուած են: Դպրոցական ատենամարզանքները (շաբթուան յատուկ օրի մը դպրոցական ժամերուն աւարտին տնօրէնութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած արտադասարանային հաւաքական ձեռնարկ) իրենց դերը ունեցած են հայ մշակոյթի տարրերուն փոխանցման ընթացակարգին մէջ: Նոյնին ծառայած են դպրոցական ամավերջի հանդէսներն ու պատի թէ տպագիր պարբերաթերթերը:

Գ. Մետիա ընդհանրապէս

Մետիան ընդհանրապէս իր կարևոր դերը խաղցած է լիբանանահայ մշակոյթի ձևատրումին ու պահպանման մէջ: Շատ կանուխէն, նոյնիսկ 1940ականներէն Լիբանանի պետական ռատիօն ունեցած է հայկական ռատիօժամ: Մերձատրոյթեան հանգամանքով Կիպրոսի ռատիոյի հայկական ռատիօժամը նաև խոշոր նպաստ բերած է այս ուղղութեամբ: Տօնական օրերուն՝ ինչպէս Ս. Ծ'ունդին և Ս. Զատիկին, Երուսաղէմի միաբանութեան սփռած հաղորդումները սատարած են հայկական կրօնական մթնոլորտ ստեղծելու լիբանանահայ տուններուն մէջ: Լիբանանահայութիւնը ունեցած է և ունի ռատիօկայաններ: Հեռուստաընկերութիւն ունենալու փորձերը եղած են փոքրաթիւ և կարճատև:

Դ. Լիբանանահայ միութիւններ

Իրաքանչիւր Հայկական աւանդական կուսակցութեան՝ ՍԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ հովանիին տակ հիմնադրուած են և սկսած են գործել մշակութային միութիւններ ինչպէս՝ Նոր Սերունդը, Համազգայինը և Թէքէեան Մշակութային Միութիւնը, որոնք իրենց կարգին ունեցած են իրենց դպրոցները, թատերախումբերը, երգչախումբերը, պարախումբերը, և այլն: Վերը նշուած երաժշտութեան կամ արուեստի առանձնայատուկ դպրոցները նաև վայելած են միութիւններու հովանաւորութիւնը՝ երաժշտական դպրոցներու անհատական նախաձեռնութիւններու կողքին:

Մշակոյթի բնագաւառէն ներս անհատական նախաձեռնութիւնները համեմատաբար նուազ երկարակեաց եղած են: Ատոր պատճառը կրնայ հաւաքականութիւն ընդդէմ անհատ մշակութային արժէքը ըլլալ ուր հաւաքական գործը աւելի արժևորուած է քան անհատականը: Միութենական մշակութային ճիգին մեծ զարկ տուած են Հայաստանէն հիւրաբար ելոյթ ունեցող խումբերը՝ 1950ականներու վերջէն սկսեալ: Անոնք ոչ միայն հայ մշակոյթով տոգորած են համայնքը այլ նաև քաջալերիչ հանգամանք հանդիսացած են կարգ մը լիբանանահայ երիտասարդներու այս ծիրէն ներս Հայաստանի մէջ ուսանելուն և որպէս արհեստավարժներ ապագային վերադառնա-

լով ծառայելու իրենց միությաններուն: Աւելի ուշ այս երևոյթը դադարած է, դժբախտաբար, և միութիւններ ստիպուած եղած են հայրենի արհեստավարժներ հրաւիրել իրենց պարախումբերը, երգչախումբերը կամ թատերախումբը մարզելու համար, սակայն նկատի ունենալով հիւր արուեստագէտին ժամանակաւոր կեցութիւնը՝ արուեստի այս բնագաւառները եղանակային աշխատանք ցոյց տուած են յաճախակի ընդմիջումներով: Մշակութային միութիւններու իւրայատուկ յաղթանակներէն եղած է իրենց խումբերուն (պարախումբ, երգչախումբ թէ թատերախումբ) համասփիւռքեան հիւրախաղերու մեկնումը, որով խանդավառուած են նոյն կարելիութիւնները չունեցող սփիւռքի այլ հայ համայնքներ:

Ե. Արուեստի մարզ

Արուեստի մարզին մէջ, ուր լեզուն արգելք չէր կրնար ըլլալ, լիբանանահայ անհատը մեծ յաջողութիւն գտած է մանաւանդ նկարչութեան, կերպարուեստի, եփածոշտութեան, պարի մէջ: Ուր, որ լեզուն հիմնական դեր կը խաղայ՝ լիբանանահայութիւնը ընդհանրապէս ձախողած է բարձր դիրքեր գրաւել: Իւրայատուկ է դերասան և բեմադրիչ Պերճ Տազլեանի պարագան, որ իր արարերէն լեզուի իմացութեան պակասը իր ուժին վերածած է և գրաւած լիբանանեան թատերական բեմեր: Երկար ժամանակ նկարչութեան և երաժշտութեան մարզերուն մէջ համալիբանանեան չափանիշով հայերը լաւագոյնը եղած են:

Լիբանանահայ մշակոյթը իր միութիւններով մեկտեղ իր գրեթէ ամէն բնագաւառներէն ներս մնացած է հայերէն՝ հայերուն հրամցուող և մնացած է սիրողական ծիրէն ներս առանց լուրջ քայլ կարենալ կատարելու դէպի արհեստավարժութիւն: Գլխաւոր պատճառներէն մին երևի դարձեալ լեզուի խնդիրը եղած է, նաև զայն գլխաւորողներուն անատակութիւնը: Ասմունքի մարզը հոգեվարք կ'ապրի: Մշակութային այլ ձեռնարկներն ալ լաւագոյն վիճակի մէջ չեն այսօր՝ երբ օրինակի համար լիբանանահայ թատրոն մը մինչև 8000 հանդիսատես ունենալէ ետք, ժողովրդագրական և այլ պատճառներով հիմա այնքան նուազած է, որ, ֆինանսական տեսութեամբ կարելի չէ անոր մէջ մեծ ներդրում ընել ու բարձր մակարդակ ապահովել: 1965ին,

օրինակի համար, համայնքի թիւի ամէնաբարձր օրերուն կարելի եղած է միջազգային փառատօներու մասնակցիլ ինչպէս Պաալպէքի փառատօնը:

Զ. Խոհանոց

Լիբանանահայ խոհանոցը մնացած է անաղարտ, բնականաբար երբեմն համեմուած լիբանանեանով, որ շատ հեռու չէ օսմանեան ազդեցութենէն: Լիբանանահայ խոհանոցը կրցած է սահմանները կտրել ու լաւապէս ընկալուիլ տեղացիներու կողմէ: Շատ փնտոռուած են հայերու պատրաստութեամբ խոհանոցի գիրքերը ինչպէս նաև վերջերս զարգացող հայկական ճաշարանները:

Է. Արհեստավարժ համախմբումներ

Փորձեր կատարուած են արհեստավարժ համախմբումներ կազմելու, ինչպէս՝ ուսուցչական, ևայլն սակայն կամ այն է, որ երկար կեանք չեն ունեցած կամ չեն կրցած իրագործել իրենց նպատակէտները:

Ը. Յատուկ անուններ

Երկար ժամանակ լիբանանահայութիւնը յաջողած է իր անդամներուն յատուկ անունները հայկական պահել, սակայն այս ալ հետզհետէ կը նահանջէ: Այսօր, մանաւանդ իգական սեռին պարագային, մեծօր անունով կոչելու տուեալը սովորութիւն չէ այլևս, մինչ արականներուն պարագային շատ յաճախ տուեալ անունը կը փոխարինուի անոր կրոպականացած տարբերակով: Պատճառները շատ են, որոնց գլխաւորներէն կրնան հանդիսանալ քաղքենիութիւնն ու անշուշտ խառն ամուսնութիւնները, որոնք ընկերային գետնի վրայ իրենց ազդեցութիւնը ունենալէն անդին ժխտականօրէն կը սատարեն լիբանանահայ մշակոյթի դիմափոխումին:

Ներկայի Հիմնախնդիրներ

Հայկական սփիւռքներու ինչպէս իւրաքանչիւր համայնք, լիբանանահայութիւնն ալ ունի իր մշակութային իւրայատկութիւններն ու յաճախ նաև նմանութիւնները սփիւռքահայ այլ համայնքներու հետ: Թէ որքան կը գոյատևեն սփիւռքները կամ իւրայատուկ կը մնայ

անոնց մշակոյթը՝ կախեալ է շատ մը տուեալներէ, որոնց մէջ կարևոր դեր կը խաղայ ժամանակըի գործօնը:

Լիբանանի հայկական համայնքը կը գտնուի իր ազգային գիտակցութիւնը և մշակութային դիմագիծը կորսնցնելու ճակատագրական հանգրուանին մէջ: Հետևաբար, Լիբանանի մէջ որպէս համայնք հայերու ներկայութիւնը մեծապէս վտանգուած է: Աւելին, նոր սերունդին անդամները որպէս անհատներ կը կորսնցնեն իրենց ազգային ինքնութիւնը, որպէս հետևանք հայեցի դաստիարակութեան և հայկական հաստատութիւններուն մէջ զարգացման ռազմավարական ծրագիրներու բացակայութեան: Հայկական միութիւններէն ունանք, իրենց ներկայ ղեկավարութեան ապիկարութեան պատճառով, շեղած են իրենց օւսանդական առաքելութենէն: Համայնքի ղեկավարութիւնը դժուարութիւն ունի կամ կարողութիւնը չունի տեսլապաշտ մտածողութեամբ ըստ այնմ ծրագրելու ապագան:

Սևակ Յակոբեան

Ընկերաբան, Լիբանանի «Զարթօնք» օրաթերթի գլխաւոր խմբագիր

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՌԱՆՁԱՅԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամփոփում

Ամփոփելով մեր հետազոտության արդյունքները, որոնք տրված են լիբանանահայերի մշակույթի առանձնահատկությունների բացահայտման նպատակով, առաջարկվում է այն դիտարկել պատմական խորապատկերի վրա և պատկերացնել Լիբանանի հայերի մշակույթը որոշակի հիմնարար տարրերի օրինակով՝ նյութական (խոհանոց) և հոգևոր (եկեղեցի, մեղիա, դպրոց և այլ): Ուշադրություն է դարցվել այն իրողությունների վրա, որոնք ազդում են ազգային մշակույթի տարրերի գործառնության և զարգացման վրա: Առաջին հերդին դա վերաբերվում է այն սոցիալական միջավայրին, ուր նրանք արտահայտվում են՝ ազգային միավորումներում, մշակութային և կրթական կենտրոններում և այլ համայնքային կառույցներում: Հատուկ տեղ է գրավում այս իմաստով ընթանալու սոցիալ-քաղաքական և էթնոդավանանքային համատեքստը, որում առանձնանում է քաղաքացիական պատերազմը Լիբանանում և բնակչության արտահոսկի միտումը:

Севак Акобян

Социолог, главный редактор ливанской газеты «Зартонк»

ОСОБЕННОСТИ КУЛЬТУРЫ ЛИВАНСКИХ АРМЯН

Резюме

Резюмируя итоги нашего исследования, призванного осветить особенности культуры ливанских армян, предлагается рассматривать их на историческом фоне, на примерах некоторых основополагающих элементов материальной (национальная кухня) и духовной культуры (церковь, масс-медиа, школа и т.п.). Обращается внимание на обстоятельства, которые воздействуют на функционирование и развитие элементов национальной культуры. В первую очередь это относится к социальной среде, где они проявляются - национальным объединениям, культурным и просветительским центрам и другим общинным структурам. Отдельное место занимает общий социально-политический и этноконфессиональный контекст, в котором выделяется роль гражданской войны в Ливане и тенденции эмиграции.

Sevag Hagopian

Sociologist and editor-in-chief of the Lebanese Armenian daily, Zartonk

FEATURES OF THE CULTURE OF LEBANESE ARMENIANS

Summary

The paper aims at highlighting the cultural characteristics of the Lebanese Armenians. Against the backdrop of Lebanese history, the paper focuses on certain basic categories of Lebanese Armenian culture, both material (cuisine) and spiritual (church, media, school, etc.). The author underlines facts and factors which impact the functioning and development of the constituents of national culture. First in line is the social milieu where these features are expressed, namely within the national in-group, cultural and educational centers and other community institutions. In this regard the general socio-political and ethno-religious context plays a pivotal role, alongside civil war and immigration trends.

შპს

ქ

Դոկտոր Ռուբեն Կարապետյան
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքում XIX դարի վերջը և XXI դարի սկիզբը նշանավորվեցին կարևոր իրադարձություններով, նոր մարտահրավերներով: Հայաստանի անկախության հռչակումը, Արցախյան հերոսամարտը, երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական և տնտեսական բարեփոխումները, բնակչության տեղաշարժերի մեծ թափ ստանալը և դրանից բխող հայերի տարածական արագ ցրումը արմատապես փոխեցին նրանց էթնիկ գոյատևման պայմանները: Իրական դարձան ինչպես ողջ ազգի, այնպես էլ նրա առանձին հատվածների ժողովրդագրական վերարտադրության, էթնոսոցիալական կերպարի պահպանման և զարգացման սպառնալիքները: Այդ իսկ պատճառով, ազգի մեջ ստեղծված իրավիճակի իմաստավորման և նրա առանձնահատուկ դիմագծի հեռանկարների ընկալման նպատակով անհրաժեշտ է Հայաստանի և սփյուռքի առկա մտավոր ներուժի համախմբումը, որի հիմնական նպատակը որակապես նոր հիմնախնդիրների մշակումն է: Այս առումով կարևորվում են սեփական և այլազգի միջավայրերում (ՄԱՄ) հայ էթնիկության կենսագործունեության ընթացքում առաջացող խնդիրների վերաբերյալ որոնումները, ըստ այդմ՝ տվյալների հավաքումն ու համախմբումը: Նշված կենսական խնդիրների նկատմամբ առաջարկված մոտեցումը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական էլքեր:

Առաջինը հայ էթնիկության համատեքստում տարբեր միջավայրերում նրա առանձին հատվածների կենսագործունեության տրամաբանական ընթացքի համալիր ուսումնասիրությունն է: Այն կարող է ելակետ հանդիսանալ միջին մակարդակի տեսությունների շրջանակներում հիմնարար դրույթների հիմնավորման համար, օրինակ՝ էթնոսի, միգրացիայի, ադապտացիայի, սոցիալական զարգացման և այլ տեսություններում: Գիտական այդ մոտեցումների մեթոդաբանական մշակումների ամբողջական օգտագործումը հնարավորություն կընձեռի համակողմանիորեն իմաստավորելու էթնիկ հանրությունների մեջ ընթացող փոփոխությունների բնույթը արդի համահարթեցման գործընթացների պայմաններում: Տեսական առումով այս խնդիրը պահանջված է նաև հոժ կամ ցրված վիճակներում գտնվող էթնիկ խմբերի զարգացման կանխատեսման մոդելների մշակման համար: Վերջիններիս նկատմամբ պահանջարկի աճը պայմանավորված է նրանով, որ ներկայումս նկատվում են «տիտղոսային» էթնոսների վրա հիմնված բազմաթիվ պետությունների օրինականացում (ուղեկցվելով նրանց քանակի ավելացմամբ), ինչպես նաև երկրների բազմէթնիկության միտումների արագացում:

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԱՍ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՍԱՍ

Առաջարկված հիմնախնդրի մշակման գործնական մոտեցումները դիտարկվում են ներկայումս առաջացած բազմապիսի մարտահրավերներով, որոնք հետևանք են հայերի կենսագործունեության պայմանների հսկայական բազմազանության: Այն պահանջում է համակարգված փորձարարական գիտելիքներ, որոնք, բացի հեռանկարային տեսական բնույթից, ունեն ծրագրային կամ նախագծային մշակումների անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներ: Սա բացատրվում է նաև նրանով, որ ժամանակակից գիտական որոնումների մեծ մասի նպատակը ելքն է դեպի գործնական գիտելիքները, հրատապ խնդիրների անմիջապես լուծումը, սպագային ուղղված հեռանկարային մշակումները: Այս առումով «հայկական փորձը» կարող է օրինակելի դառնալ ժամանակակից էթնիկ հանրությունների հե-

ուանկարների և համաշխարհայնացման գործընթացում նրանց դերի իմաստավորման տեսանկյունից:

Հայագիտության ոլորտում դեպի գործնական ելքեր նպատակաուղղված գիտական որոնումներն այսօր հատկապես հրատապ են և մինևույն ժամանակ ունեն կոնկրետ և իրական սպառողներ՝ ՀՀ կառավարությունը, սփյուռքի լայն շրջանակները, բազմազգ երկրների դեկավար մարմինները: Այժմ անհրաժեշտ է համակարգված գիտելիքների որոնման և ստացման այնպիսի նպատակաուղղվածություն, որը կընդլայնի դրա օգտագործումը քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ծրագրերի մշակման ոլորտում՝ դրանց ստեղծման լայն հնարավորություններով հանդերձ:

Հայ էթնոտում արդի էթնոսոցիալական գործընթացները պատմական ճակատագրի բերումով ընթանում են տարբեր ուղղություններով և պայմանավորվում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի գործոններով:

Դրանցից առաջինները ձևավորվում են այսօր ընթացող համաշխարհային գործընթացներով՝ էթնիկ խմբերի տեղաշարժերի արագացմամբ, տեխնոլոգիական առաջընթացով, հեռահաղորդակցության արագ զարգացմամբ և այն գործոններով, որոնց շնորհիվ և՛ ժողովրդագրական, և՛ սոցիալական, և՛ մշակութային առումներով առաջանում է շարժունակ, փոփոխություններին հակված բնակչության ստվար զանգված:

Գործոնների երկրորդ խումբը հիմնականում ձևավորվում է տարբեր էթնիկ խմբերի, մասնավորապես հայերի կենսագործունեության տարաբնույթ պայմաններով: Տարաբնակությունը, զարգացման ակունքները, հոգեկերտվածքի առանձնահատկությունները, մշակույթը՝ կենսական պայմանների հետ մեկտեղ, ձևավորում են սուբյեկտիվ բնույթի այն բազմությունը, որը որոշում է նոր պատմական դարաշրջանում էթնոսի զարգացման ոչ միանշանակ ուղղություններ:

Վերոնշյալ գործոնների փոխազդեցությունների բացահայտման բարդությունը դժվարություններ է հարուցում սեփական և այլ էթնիկ միջավայրերում հայերի շրջանում ընթացող էթնոսոցիալա-

կան գործընթացների ապագայի որոշման գործում, որոնց իմացությունը պահանջում է գիտական մեծ փորձառություն: Փաստորեն, հայ ազգի տարբեր հատվածների շրջանում ընթացող էթնոսոցիալական, այսինքն՝ սոցիալ-մշակութային և հոգևոր գործընթացների ուղիների և բնույթի առավել մանրակրկիտ և բազմակողմանի իմաստավորումը պահանջում է գիտության առաջադեմ մեթոդների վրա հիմնված փորձարարական գիտելիք:

Այդ նպատակով մենք մշակել ենք հայկական սփյուռքի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության ծրագիրը, որն ուղղված է բացահայտելու ազգի տարբեր հատվածների տնտեսական, սոցիալական և հոգևոր ներուժը, մշակելու ազգային ինքնության պահպանման և զարգացման ռազմավարությունը, փնտրելու համազգային խնդիրների լուծման գործում նրա կարողությունների համախմբման ուղիները:

Առաջադրված խնդիրների լուծման համար նշված ծրագրի շրջանակներում արդեն նախապատրաստվել և իրականացվել են տարբեր էթնոսոցիալական միջավայրերում հայ էթնիկության իրավիճակի համեմատական և համադրվող էմպիրիկ հետազոտություններ: Նպատակը՝ ազգի տարբեր հատվածների գոյատևման էթնոմշակութային փորձի ընդհանրացումն է և յուրաքանչյուր խմբի զարգացումը պայմանավորող գործոնների բացահայտումը: Այդ գործոններից են տվյալ երկրում բնակվելու տևողությունը, տարածքային տեղաշարժերի և տարաբնակեցման ընթացքը, էթնոսոցիալական և դավանաբանական շրջապատը, հոգևոր և քաղաքական կենտրոնների առկայությունը, իրավական դաշտը և այլն: Թվարկված գործոնները դարձան էմպիրիկ հետազոտությունների շարքի թիրախի և մեթոդների ընտրության ելակետային հիմնադրույթներ, որոնց նպատակն էր ոչ միայն սեփական և այլ էթնիկ միջավայրերում ձևավորված հայերի սոցիալական և հոգևոր կյանքի նկարագրությունը, այլև ազգի տարբեր խմբերի ինքնության պահպանման աստիճանի բացահայտումը իրենց արժեհամակարգի միջոցով: Դրանով իսկ հետազոտության արդյունքները ձեռք են բերում միջմշակութային երանգ, քանի որ նրանց մասնակիցների առումով դրանք համաձի՛ն են (մեկ էթնիկ ընդ-

հանրության հատվածները) և բազմաձին՝ կենսագործունեության պայմանների էթնիկ միջավայրի բազմազանության պատճառով:

ՄԱՄ ծրագիրը նպատակաուղղված է հիմնականում տարբեր երկրների մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում, ներառյալ՝ ազգային հանրապետությունում բնակվող հայերի համեմատական և համադրական ուսումնասիրությանը: Ուսումնասիրության թիրախի այսպիսի ընտրությունը պայմանավորված է ուրբանիզացման ընդհանուր միտումով և դրա համատեքստում էթնոսի մեծամասնության՝ քաղաքային միջավայրում ցրված ներկա վիճակով:

Ուսումնասիրման ենթակա երևույթների համադրությանը, հետևաբար՝ համեմատությանը հասնելու համար հետազոտության ընթացքում չափումները կատարվել են փոփոխականների մոտավորապես նույնատիպ խմբի հիման վրա, իսկ ուսումնասիրության թիրախի ընտրության համար ելակետային են համարվել կենսագործունեության պայմանների երկնյուղ այնպիսի ցուցիչներ, որոնք են միատարր-բազմազգ միջավայրը, մոտ-օտար (ինչպես նաև բազմադավան) շրջապատը, հին-նոր գաղութը, հոծ-ցրված տարաբնակությունը և այլն:

Ծրագրով նախատեսված հետազոտություններն իրականացվել են երեք ուղղությունով.

Առաջին ուղղություն. 2005-2016թթ. Երևանում և սփյուռքի յոթ հոծ բնակեցված մասերում՝ Մոսկվայում, Կրասնոդարում (կրկնակի), Թբիլիսիում (կրկնակի), Տաշքենդում, Լոս Անջելեսում, Թեիրանում, Փարիզում և Բեյրութում բնակվող հայերի շրջանում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների¹ ընդհանրացումն էր և եզրափակիչ համեմատական հետազոտությունների հիման վրա թիմային աշխատությունների նախապատրաստումը²: Այդ հետազոտությունների իրականացման փորձի հիման վրա մշակվում են նոր մե-

1 <http://diasporastudies.am/ds/hy/Նախագծեր>

2 Հայրենիք-սփյուռք առնչությունները հայկական մամուլում, Գիտություն, Երևան, 2012: Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей, М., 2013; Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություն, Գիտություն, Երևան, 2014:

թողաբանական մտեցումներ, որոնք արտացոլվել են ծրագրի շրջանակներում ներկայացված յուրաքանչյուր գիտական հրատարակման մեջ և տեղ են գտնելու առանձին աշխատությունում:

Երկրորդ ուղղություն. հայ էթնիկության վերաբերյալ լայն փոխհամաձայնության (կոնսենսուսի) ստեղծում: Այս նախագիծն ունի երկարաժամկետ բնույթ, և ենթադրվում է, որ դրա իրականացման ընթացքում հայերի համադրական և համեմատական ուսումնասիրություններում կընդգրկվեն նորանոր համայնքներ³ և տարբեր երկրների նոր հետազոտողներ: Դա հնարավորություն կտա այս հետազոտական ուղղությունը դարձնելու առավել ծավալուն և հեռանկարային: Այս առումով արժե հիշատակել այն փաստը, որ ՄԱՄ ծրագրում արդեն ընդգրկված են հետազոտողներ Ռուսաստանից, Բելառուսից, Իրանից, ԱՄՆ-ից և Լիբանանից⁴:

Երրորդ ուղղություն. էթնիկ ինքնության տեսական ըմբռնման զարգացում՝ հայերի օրինակով, ուշադրությունը կենտրոնացնելով յուրաքանչյուր խմբին բնորոշ որոշակի իրավիճակի, համազգային նշանակության մարտավարական և ռազմավարական հետևյալ խնդիրների վրա.

1. Բացահայտել հայ էթնոսի ամբողջ զանգվածի և նրա առանձին հատվածների սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները.
 2. Որոշել սեփական և այլազգի միջավայրերում էթնիկության պահպանմանն ուղղված գործունեության մեջ ընդգրկված, զանազան սոցիալ-ժողովրդագրական խմբերի համախմբ-
-
- 3 Արդեն իրականացվել են Ֆրանսիայի, Վրաստանի (կրկնակի), Ուկրաինայի մայրաքաղաքների և Թուրքիայի Ստամբուլ քաղաքի հայ համայնքի հետազոտությունները: Մոտակա ժամանակահատվածում նախատեսվում են Գազախստանի, Բելառուսի մայրաքաղաքների ուսումնասիրությունները: Ծրագրում նոր հետազոտողների ընդգրկման միջոցով ուսումնասիրությունների շրջանակները կարող են էապես ընդլայնվել:
 - 4 Նշված աշխատանքների հրատարակմանը մասնակցել են ինչպես Սփյուռքի հետազոտությունների բաժնի աշխատակիցները, այնպես էլ Ռուսաստանի (Յու. Վ. Հարությունյան), ԱՄՆ-ի (Ժ. Գոսագեան) և Իրանի (Ա. Թարվերդյան) համայնքների ներկայացուցիչները

- վածության և ներգրավվածության աստիճանը: Մշտադիտարկման միջոցով բազավորել տարբեր երկրներում բնակված հայերի սոցիալական և մասնագիտական ներուժը.
3. Տարբեր միջավայրերում էթնոսի առանձին օղակների կենսագործունեության ձևերի բազմազանության տիպաբանությունը: Բացահայտել սոցիալական ցանցերի ձևավորման առանձնահատկությունները հայրենիքում և սփյուռքում: Ընդհանրացնել հայրենիքի հետ սփյուռքի համայնքների կապերի բնույթին և ինքնակազմակերպմանն առնչվող աշխատանքների փորձը.
 4. Տարբերակել առանձին էթնոմշակութային, սոցիալական, տնտեսական և քաղաքական դիրքորոշումները, պատկերացումները որոնք ձևավորում են ազգային ուղղվածություն ունեցող լեզենդները, կոչերը, ծրագրերը, նպատակաուղղվածությունը և այլն.
 5. Բացահայտել գաղափարախոսական կաղապարներ, «արտադրողների» և «սպառողների» բնորոշ հատկանիշները: Տարբերակել էթնիկ ինքնության պահպանմանն ուղղված իրական դրդապատճառները.
 6. Որոշել էթնիկ բնույթի փոփոխականները, որոնց միջոցով կարելի է չափել անձի էթնիկ ինքնության մակարդակը, սեփական էթնոմշակութային միջավայրում ընդգրկվածությունը և ենթամշակութային դրսևորումների գրանցումը.
 7. Ուսումնասիրել հայ գործարարությունը, տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի գործունեության ոլորտները, փորձառությունն ու կառավարման ձևերը, ավանդույթները, արժեքների կառուցվածքը, դրդապատճառները և դրա հիման վրա որոշել էթնոսի իրականսոցիալական ու տնտեսական ներուժը դրա հեռանկարների որոշման նպատակով:

Այժմ ՄԱՄ ծրագրի շրջանակներում իրականացվում է փորձարարական տարբեր հետազոտությունների համալիր, որի նպատակն է՝ ա) մշտապես կամ պարբերաբար հետևել՝ մշտադիտարկմամբ,

կրկնվող հետազոտությունների կիրառմամբ. բ) կենսագործունեության բոլոր ձևերի ընտրությունը՝ հոծ, ցրված և օջախային ձևով տարաբնակեցված՝ որոշելով դրանց ուսումնասիրման տեսանկյունները և խնդիրների շրջանակները: Դրանից ելնելով՝ հատուկ քննարկում. Վերլուծվում են իրականությանը համապատասխանող տեղեկատվության ստացման համար անհրաժեշտ աղբյուրագիտական հիմքը, հետազոտության գործիքները, փոփոխականները և չափորոշիչները: Աղբյուրներում ընդգրկվել են պահոցային, վիճակագրական, ԶԼՄ-ների, գրականության, գրանցված վկայությունների և տարատեսակ հետազոտությունների նյութերը, որոնք ներառում են հարցաթերթային և ֆոկլոսային հարցումները, ստանդարտացված հարցազրույցը, տիպային փաստերի և իրադրությունների (քեյսերի) արձանագրումը, փաստաթղթերի և գրանցված նյութերի քանակական-որակական վերլուծությունը, բանավոր պատմությունների ուսումնասիրությունը և այլն: Յուրաքանչյուր աղբյուրի ընտրություն պայմանավորվում է իր տեղեկատվական ներուժով, որը հնարավորություն է տալիս(ա) համադրական և համեմատական տվյալների օգտագործման միջոցով ուրվագծելու երևույթների համայնապատկերը, բ) տեղավորվելու տվյալների վերլուծության դինամիկ պատկերում՝ օգտագործելով մոդելավորման մեթոդները, գ) համակարգելու որակական (բացատրող և բովանդակային) տվյալների քանակական ցուցիչները:

Ծրագրում ընտրված փոփոխականները թույլատրում են ստանալու առանձին խմբերի ներկայացուցիչների կենսագործունեության հիմնական փուլերի և կյանքի պլանների նկարագրությունը: Դրանք դիտարկվում են արժեքային կողմնորոշումների, մտադրությունների, գնահատումների, դիրքորոշումների, համոզմունքների և պատկերացումների խորապատկերի վրա: Փոփոխականների կարևոր մասն է կատարվող գործընթացների համայնապատկերի գրանցումը՝ ընդգրկելով անցյալը, ներկան և ապագան: Այդ հիմնային հատկանիշները լրացվում են յուրաքանչյուր իրավիճակի առանձնահատկություններն արտացոլող ցուցիչներով:

Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ է անդրադառնալ այն իրողությանը, որ հայ էթնիկության զարգացման երկու հիմնական ուղղու-

թյունները՝ սեփական էթնիկ տարածքում և սփյուռքում, պայմանավորում են մի շարք առավելություններ և թերություններ: Մի կողմից, որպես էթնիկ փոքրամասնություն հանդիսացող ամբողջական խումբ, հայկական սփյուռքը ձևափոխվում և ձուլվում է: Ընդ որում, էթնահոծ գոտիներից (ՀՀ-ից, Արցախից, Ջավախքից և ազգի այլ զանգվածային բնակության շրջաններից) հայերի թափ ստացած արտահոսքի հետևանքով սփյուռքը տարածքային առումով ավելի է ընդարձակվում և ցրվում: Մյուս կողմից, տիրապետելով հարմարվողականության բարձր հնարավորությունների, սփյուռքը կարող է կարևոր դերակատարություն ունենալ համաշխարհային տնտեսական տարածքում իր էթնիկ հայրենիքի ինտեգրման գործում: Իսկ գլոբալացման պայմաններում նա կարող է հանդես գալ որպես միջմայրցամաքային և տարածաշրջանային տնտեսական ու հոգևոր ազգային կառույցների ձևավորման կարևոր գործոն: Այս առումով առանձնահատուկ նշանակություն են ստանում սփյուռքի պահպանումը, նրա տարբեր օղակների միջև որակապես նոր փոխհարաբերությունների ձևավորումը:

ՄԱՄ ծրագրի իրականացման ընթացքում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերում որակապես նոր վերլուծական ռեսուրսի փնտրտույքը և օգտագործումը կնպաստեն իրվ երարտադրության ավելի վատթարացող պայմաններում հայէթնիկության պահպանման մեխանիզմների ընտրության ռազմավարության մշակմանը:

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Լիբանանահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության հիմնական նպատակը հայ ազգի տարբեր հատվածների էթնիկ նկարագրի պահպանման համեմատական ուսումնասիրությունն է՝ կենսագործունեության բազմազան պայմանների խորապատկերին: Այս առումով հատուկ նշանակություն է ստանում այդ գործընթացների առանձնահատկությունների նորովի իմաստավորումն առավել ցայտուն ընդգծված երկու բևեռային կենսապայմաններում՝ ամենաբարենպաստ և առավել անբարենպաստ:

Լիբանանում պայմանները առավելապես մոտ են առաջին բևեռին: Այստեղ գոյացող հայկական համայնքը մեծ հնարավորություններ ունի զարգացնելու և բարդացնելու սոցիալական կառուցվածքը, մշակութային ենթակառուցվածքները և քաղաքական ներկայացվածությունն իր էթնիկության համատեքստում: Դրանով է պայմանավորվել այն հանգամանքը, որ ՍԱՄ ծրագրի իրականացման ընթացքում լիբանանահայ համայնքը ներկայանում է որպես պատմականորեն ձևավորված հոծ վերաբնակեցման դասական օրինակ: Հասկանալի է, որ նման բնույթի համայնքի ձևավորման խնդիրը մշտապես առանցքային է դառնում նրա գիտական ճանաչման գործում:

Էթնոսի նման հոծ զանգվածի ձևավորման ակունքները բավականին դյուրին է վերականգնել հրապարակում եղած պատմական նյութերի և գիտական շրջանառության մեջ գոյություն ունեցող հատուկ հետազոտությունների միջոցով: Այդ իսկ պատճառով սույն հետազոտության մեջ անհրաժեշտություն չկար հատուկ ուշադրություն հատկացնել համայնքի ծագումնաբանական կառուցվածքին (որում ենթադրվում է նրա անդամների կամ նրանց նախնիների «ելքի» տարածաշրջանը, որը մենք իրականացնել էինք ԱՄՆ-ի հայերի հետազոտության ընթացքում):

Սակայն Լիբանանի դեպքում, նրա բնակչության հայկական մասի կառուցվածքի այդ հատկանիշը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարցազրույցներին մասնակցած համայնքի անդամների ծագման գործոնի և նրանց հիմնարար՝ ժողովրդագրական ու սոցիալական փոփոխությունների միջև կապի առումով:

Դիտարկելով այդ գործընթացները որպես իրադարձությունների ժամանակագրական հաջորդականություն և նկատի ունենալով, որ տվյալ էթնիկ խումբը, ինչպես և նրա կենսապայմանները, այդ իրադարձությունների ընթացքում անընդատ փոփոխվում են, կարևոր էր որոշել դրանց հիմնական ուղղությունները և հատկանիշները: Այդ առումով ենթադրվում է որոշել համադրական հետազոտության փոխկապակցված երկու տեսանկյուն՝ սոցիալական և մշակութային:

Առաջին տեսանկյունը սոցիալականն է, որը նպատակ է հետապնդում ուսումնասիրել լիբանահայերի կենսագործունեության

սոցիալական համատեքստի բովանդակային փոփոխությունները և որոշել նրանց սոցիալական կառուցվածքի որակական ու քանակական հատկանիշների զարգացման ուղիները: Անհրաժեշտ է նաև պարզաբանել թե՛ որքանով են հնարավորություն տալիս Լիբանանի պայմաններն ընդլայնելու տվյալ էթնիկ խմբի ներկայացուցիչների սոցիալական (ինչպես նաև տնտեսական) առաջընթացի հորիզոնը և ծավալները: Դա կարևոր է վերաբնակեցման օջախում, զանգվածային տարաբնակության և լայն էթնիկ ինքնավարության պայմաններում, որը հնարավորություն է տալիս տվյալ պետությունը, նրա զարգացման միտումների որոշման տեսանկյունից: Արդյոք դա ընթանում է սոցիալական ցրման, ազգային խմբային ընկերացման, կամ ընդհակառակը, որոշակի տնտեսական հովանու ներքո կենտրոնացման ձևով (ինչպես օրինակ՝ չերկեզահայերի շրջանում)⁵, կամ էլ՝ այդ պայմաններում էթնիկ խումբը ձգտում է ձևավորել սեփական յուրահատուկ սոցիալական կառուցվածքը (օրինակ՝ Թեհրանի հայերի շրջանում)⁶, որոնք կոչված են իրենց տնտեսական պահանջմունքների բավարարմանը ու նպաստում են ինքնաբավ էթնոսոցիալական հանրության ձևավորմանը: Այսպիսով, հաշվի առնելով, որ, էթնիկ խումբը առանձնահատուկ բնույթի սոցիալական համախմբություն է, առաջին հերթին կարևոր է դիտարկել էթնիկ փոփոխությունների սոցիալական բաղադրիչները: Անհրաժեշտ է հասկանալ, թե որքանով է այդ խումբը սոցիալապես համախմբված կամ տարանջատված, ներխմբային հարաբերությունները գտնվում դեռևս ցանցային մակարդակում, թե՛ ներսում գոյություն ունեն աստիճանակարգային հարաբերություններ: Կարևոր է նաև այն, թե էթնիկ նշանակության ինստիտուտները բացակայում են, գտնվում են ձևավորման փուլում կամ արդեն զարգացած վիճակում են:

Առաջադրված հարցերի վերաբերյալ սոցիալական տեսությունները տալիս են պատրաստի ընդունելի հայեցակարգային պա-

5 Аракелян Г.С., *Чергезогаи (историко-этнографическое исследование)*, Кавказ и Византия, Вып. 4. – Ереван 1984; Поркшеян Х.А., *Происхождение черкесогоав и основание г.Армавира*, lraber.asj-oa.am/2033/1/66.pdf

6 Տանաջյան Լ., *Հայերի սոցիալական փոխակերպումները սփյուռքում. Հայերը սեփական և այլազգի միջավայրում. Համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ*, Գիտություն, Երևան, 2014, էջ 82.

տասխաններ, սակայն նրանց մեջ բացակայում է այնպիսի նորրի հատկանիշը, որն է՝ էթնոմշակութային բնույթի յուրահատկությունը: Նման թեմատիկան, հիմնականում, գտնվում է այն հետազոտողների ուշադրության դաշտում, որոնք առավելապես քննարկում են մշակույթի, հոգեբանության, միջմշակութային փոխազդեցությունների էթնիկական առանձնահատկությունները, որոնցում սոցիալական բաղադրիչը սակավ է ներկայացվում: Մինչդեռ համայնքի սոցիալական հատկանիշները և նրանց փոփոխման գործընթացները, արդեն իսկ ազգի տվյալ հատվածի որակական էթնիկ երանգավորում ունեցող նկարագրի մասն են կազմում: Այդ իմաստով արդիական են կոնկրետ էթնիկ խմբերում սոցիալական գործընթացների փորձարարական հետազոտությունները՝ անդրադառնալով ինչպես սոցիալական հարաբերությունների վերարտադրության պայմանների հետ ավանդական և նոր ցանցային փոխադարձ կապերին, խմբի սոցիալական կառուցվածքին և այդ խմբում սոցիալական աստիճանակարգման ուղիներին:

Երկրորդ՝ մշակութային տեսանկյունից առաջարկվում է հետևել էթնիկության վերարտադրության գործընթացին: Նման խնդրի դրվածքը պայմանավորված է նրանով, որ ինչպես է էթնիկ խումբը ուրբանիստական միջավայրում, հոծ բնակությամբ պայմաններում պահպանում է իր ելակետային և նրանցից բխող ածանցյալ բաղադրիչները և ձևավորում իր յուրահատուկ մշակութային արժեքները: Խիստ կարևոր է, թե մշակութային որ ոլորտներում են այդ արժեքները արտադրվում, որքանով են դրանցում առկա առաջնային և երկրորդային հատկանիշները, ինչպիսի փոխադարձ հարաբերակցության և համախմբման մեջ են նրանք գտնվում: Դրանք այն հարցերն են, որոնց պատասխանները նպատակ են հետապնդում բացահայտելու մշակութային և էթնոսոցիալական նշանակության հատկանիշների ձևավորման և զարգացման մեխանիզմների փնտրտուքի ուղղությունները: Կարևորվում է մշակութային՝ իրականին մոտ և նշանակալի այն չափորոշիչների առանձնացման անհրաժեշտությունը, որոնք մի կողմից արտացոլում են մշակութային կյանքի հիմնարար բաղադրիչները, մյուս կողմից՝ հնարավորություն տալիս որոշելու դրանց ազգային հատկանիշները:

Առաջին դեպքում անհրաժեշտ է բացահայտել առանցքային և երկրորդական նշանակություն ունեցող մշակութային երևույթները, որոնք պայմանավորում են հոծ էթնիկ միջավայրում, սակայն՝ այլազգ շրջապատում ձևավորված արժեքների կառուցվածքը: Ուստի բավականին կարևոր է բացահայտել, թե հատկապես որ մշակութային արժեքներն են վերակենդանանում (մենք օգտագործում ենք այս հասկացությունը՝ ելնելով նրանից, որ տվյալ խումբը բաղկացած է միգրանտներից և նրանց հաջորդող սերունդներից) և վերարտադրվում, որոնք են գլխավոր և որոնք՝ երկրորդական: Այսպիսի հարցադրումը թելադրվում է այն ենթադրությամբ, որ յուրաքանչյուր էթնիկ խումբ, այս կամ այն փուլում, ձգտում է կառուցել սեփական մշակութային կյանքը ամբողջական ձևով: Իսկ որքանով է դա նրան հաջողվում, պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպես օրինակ՝ քաղաքական կառուցվածքով (անկախ պետականության, մշակութային ինքնավարության և այլնի առկայության կամ բացակայության պայմաններում), տվյալ հանրության քանակական տվյալներով, հոծ կամ ցրված տարաբնակությամբ, էթնոդավանանքային շրջապատով, ազգային իրավունքներով, ազատությամբ և բազում այլ գործոններով: Լիբանանի օրինակը բավականաչափ հատկանշական է բուն գործընթացը հասկանալու առումով:

Երկրորդ դեպքում՝ մշակութային երևույթների ազգային դրոշմը բացահայտելու համար, կարևորվում է համախմբման գործընթացների ուսումնասիրման այն տեսանկյունը, որով դրոշվում են կոնկրետ էթնիկ խմբի ենթամշակութային հատկանիշների ձևավորման բնույթը և ընթացակարգը: Դա կարևորվում է նրանով, որ սոցիալական շարժի և միջէթնիկ փոխազդեցության ընթացքում տեղի է ունենում սեփական ելակետային էթնիկական և սոցիալական դրոշմների տեղաշարժ դեպի սոցիալական և էթնիկական եզրայնացում: Օրինակ՝ Բաքվի հայերը (որ բավականաչափ մեծաքանակ խումբ էր և բաղկացած էր 200–210 000 մարդուց)⁷ մինչև 1988–1991 թթ. ջարդերը⁸ սեփական էթնիկական հատկանիշները մեծ մասամբ գիտակ-

7 [https://hy.wikipedia.org/wiki/ Հայերը Բաքվում](https://hy.wikipedia.org/wiki/Հայերը_Բաքվում) :

8 <https://hy.wikipedia.org/wiki/> :

ցում էին ենթասոցիալական հատկանիշներում՝ առանձնացնելով աղքատեջանցիներին՝ որպես իրենց չնմանվող քաղաքային սոցիալական խավ⁹:

Լիբանանի հայերի էթնամշակութային կյանքի ուսումնասիրության համար խիստ կարևոր է որոշել, թե այդ խմբում որքանով և ինչպես են ներկայանում համալիբանանյան մշակույթի տարրերը և որքանով են այդ տարրերը ներկայացված նրանց մշակութային հատկանիշներում: Դրա հիման վրա ենթադրվում է գտնել հայկական համայնքների դասակարգման և տիպաբանման սկզբունքներ, ըստ՝ յուրահատուկ ենթամշակութային հատկանիշների: Ընդ որում, այդ հատկանիշների և սոցիալ-ժողովրդագրական չափորոշիչների փոխադարձ կապերի միջոցով, ինչպես օրինակ՝ սեռը, տարիքը, ընտանեկան կարգավիճակը և միգրացիան, հնարավոր է որոշել նմանատիպ գործընթացների զարգացման փուլը և որոշ չափով, դրանց հետևանքները:

Այսպիսով, լիբանանահայերի ուսումնասիրության համար առաջադրված խնդիրները նպատակ են հետապնդում, ոչ միայն նկարագրել հայ էթնիկության վիճակը, ցույց տալ այդ խոշոր վերաբնակեցման օջախում տեղի ունեցող գործընթացների շարժընթացը, հետևաբար՝ դրանց հետևանքները, այլև ստանալ լրացուցիչ փորձարարական հիմնավորում արագ փոփոխվող աշխարհի էթնիկ դրսևորումների տիպաբանության բնույթի մասին իրականացված հետազոտությունների համեմատության և համադրության միջոցով¹⁰:

Լիբանանահայերի հետազոտություններն իրականացվել են այդ քաղաքների համար մշակված ուղղություններով, սակայն հարմարեցնելով տեղական պայմաններին:

Առաջին ուղղությունը ԶԼՄ-ների, պահոցների, տարբեր ոլորտների մասնագետների հետազոտությունների նյութերի վերլուծու-

9 Карапетян А. Р., *Автопортрет армян: этничность в самооценках*, «Гитутюн» НАН РА, Ереван, 2011, с. 145:

10 *Հայերը սեփական և այլազի միջավայրում. Համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ (Մոսկվայի, Թեհրանի, Լոս-Անջելեսի հայ համայնքների հետազոտության նյութերի)*, պատ. խմբ. Կարապետյան Ռ. Ս., «Գիտություն», Երևան, 2014:

թյունն է: Առավել կարևոր մեթոդների շարքում ընդգրկվեց այդ նյութերում պարունակված տվյալների և դրվագների քանակական-որակական վերլուծությունը: Այդ իսկ նպատակով սույն գրքի առաջին մասում, ինչպես նաև մեր նախորդ հրապարակումներում ներկայացվել են տվյալ համայնքի գիտական շրջանի հայտնի ներկայացուցիչների հետազոտությունները¹¹: Նյութերի իմացության նրանց հիմնավոր գիտելիքները և մասնագիտական կարողությունները մեծապես հարստացնում են ոչ միայն նորագույն դրվագներով, այլ և նպաստում լիբանանցիների կյանքի իրողության առավել խոր վերլուծություններին: Դրանից բացի, գիտելիքների, հմտությունների տիրապետող հայ համայնքի ներկացուցիչների ընդգրկումը նպաստում է, մի կողմից, ինչպես նշվել է սույն հրապարակման առաջին հոդվածում, Հայաստանի և սփյուռքի գիտական ընկերակցության միջև որոշակի փոխհամաձայնությանը, մյուս կողմից՝ սփյուռքի հիմնախնդիրների առավել ընդգրկուն մոտեցումների մշակմանը:

Երկրորդ մոտեցումը փորձագետների հարցումներն են: Դրանք անցկացվել են փորձագետների ընտրության և խորին հարցազրույցի գիտական մեթոդի պահանջներին համապատասխան: Լիբանանի հայերի վիճակի, նրանց մեջ տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ ավելի ընդգրկուն տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունից բացի, նրանց տեղեկատվությունը պետք էր էթնիկ խմբի քանակի, կազմի գնահատման և քաղաքի տարածքում նրանց տարաբնակության բնույթը վերլուծելու համար: Դա բացատրվում է նրանով, որ ինչպես բազմաթիվ այլ երկրներում էթնիկ խմբերի վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերում այդ բովանդակության տվյալները բացակայում են: Այդպիսի իրավիճակ էր ստեղծվել նաև Լոս Անջելեսի ու Փարիզի հայերի ուսումնասիրման ժամանակ, որտեղ պաշտոնական վիճակագրության մեջ նշված էր միայն միգրանտների ծագման տարածաշրջանը (կամերկիրը): Ուստի այդ քա-

11 Տե՛ս նույն տեղում, էջ 19; Арутюнян Ю. В., *Об армянской диаспоре России*, «Гитутюн», Ереван, 2011; *Роль армянской диаспоры в экономических связях России и Армении*, М., 2013; *Армяне России, Этносоциологическое исследование*, «Гитутюн», Ереван, 2016:

դաքնների հայ բնակիչների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները հավաքվել են իրենց քաղաքական և մշակութային կենտրոններից: Այդ կենտրոնների տվյալների օգտագործումը և փորձագետներից ստացված տեղեկատվությունը մեծապես նպաստեցին հետազոտվող զանգվածի ընտրանքի ծավալի և դրա կազմակերպման մեթոդների հստակեցմանը:

Երրորդ ուղղությունը Լիբանանի հայ բնակչության ընտրանքային զանգվածի ստանդարտացված հարցազրույցն էր, որն անցկացվեց վերոհիշյալ տվյալների ճշգրտումներից հետո:

Ընտրված հետազոտական գործիքների կիրառումը հնարավորություն տվեց գրանցելու լիբանանյան իրադարձությունների մասնակիցների խոշոր զանգվածի կենսագրական բնույթի վկայությունները՝ խթանելով ստանալու այդ հանրույթում ընթացող գործընթացների հավաստի պատկերը: Այս ճանապարհով հայթայթված նոր տեղեկատվական ռեսուրսը, որի ստացմանը անմիջական մասնակցություն են ունեցել հեղինակները, հնարավորություն է ընձեռում նորովի վերլուծելու իրավիճակը, խորացնելու և ընդլայնելու հետազոտվող երևույթների շրջանակները, ունենալու գործընթացների համայնապատկերը:

Էթնոսոցիոլոգիական նման հետազոտություններն ունեն մի շարք առավելություններ: Նախ դա առնչվում է իրադարձությունների ընթացակարգին վերաբերող վիճակագրական կարևոր նշանակություն ունեցող տվյալների բովանդակային վերլուծության լայն հնարավորություններին, որոնք նպաստում են որոշելու որակական փոփոխությունների քանակական հատկանիշները: Ստանդարտացված հարցազրույցի միջոցով հետազոտողն ստանում է տվյալների ներկայացուցչականության որոշակի մակարդակ, որոնք արտացոլում են կյանքի իրադարձությունների հատկանշական դրվագները: Հարցն այն է, թե որքանով են տրված հարցերը հնարավորություն տալիս հաղթահարելու փոխանցված տվյալների սուբյեկտիվությունը, դրանք օբյեկտիվացնել, նկարագրված փաստերը տրամաբանական կառուցվածքի բերել, տրված գնահատականները, կարծիքները և դիրքորոշումները համեմատել այլ գործոնների հետ, այսինքն՝ վերա-

կանգնել հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի կյանքի պատմության համակարգային ըմբռնման նախադրյալները:

Ստանդարտացված հարցազրույցի մեթոդով ստացված տեղեկատվության բովանդակության բարձրորակի մասին է վկայում այն փաստը, որ ժամանակակից բնակչությունը բավականաչափ արժեքավոր տեղեկությունների կրող է, և այդ աղբյուրի հայթայթումը և օգտագործումը կարող են նպաստել նորթեմաններով լրացնելու իրականության նկարագրի բացթողումները, ստանալու տարբեր միջավայրերում էթնիկ խմբի կենսագործունեության իրատեսական խորպատկերը: Տարբեր հայկական համայնքների էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերի համադրումը, ինչպես նաև Լիբանանի նյութերը, որոնցում գրանցվել էին տարբեր սերունդների ներկայացուցիչների կենսագրությունները, հնարավորություն տվեցին նորովի գնահատելու և հետագայում, գոյություն ունեցող այլ կարգի տվյալների հետ մեկտեղ, ավելի համակարգված օգտագործելու նրանց վերլուծական ռեսուրսը:

Սոցիալական հիշողության այդպիսի ներուժը, որն ունի նաև վիճակագրական հավաստիություն և բովանդակային լուրջ հատկություններ, բարձրացնում է այլազգի միջավայրում ընթացող սոցիալական, մշակութային գործընթացների փոխադարձ կապերի համալիր ուսումնասիրման հնարավորությունները: Այդ իսկ առումով էթնոսոցիոլոգիական հետազոտությունների նյութերը, որոնք հնարավոր է դառնան էթնիկ խմբի կառուցվածքի որակական հատկանիշների համակարգային ուսումնասիրության միակ աղբյուրը, առանձնահատուկ արժեք են ստանում: Դրանցում գրանցված ծագումնաբանական, սոցիալական և ժողովրդագրական կառուցվածքի, վարքի շարժառիթների, սոցիալ-ժողովրդագրական խմբերի էթնոմշակութային հատկանիշների վերաբերյալ տվյալները հնարավորություն են տալիս էապես խորանալու այն սոցիալական և մշակութային ներուժին կարագրությանմեջ, որին տիրապետում է կոնկրետ էթնիկ խումբը:

Էթնոսոցիոլոգիական հետազոտության գործիքը ստանդարտացված հարցազրույցի համար նախատեսված հարցաթերթն էր¹²:

12 Տե՛ս Հավելված:


Այդ հարցազրույցներն անցկացրել են մասնագետ հարցազրույցավարները «դեմ առ դեմ» մեթոդով: Ստանդարտացված հարցազրույցի համար նախատեսված հարցերը բաղկացած էին երեք խմբից:

Առաջին խումբ՝ համեմատության համար անհրաժեշտ հարցեր, որոնց ձևակերպումները և պատասխանները նույնն էին բոլոր հետազոտությունների համար: Այդ «միջանցիկ» հարցերը ՍԱՄ-ի բոլոր հետազոտություններում կմնան աշխատանքային գործիքների բազայում: Հարկ է դրանց թվին դասել հետևյալ տիպի հարցերը՝ «Որքան ժամանակ եք ապրում այս բնակավայրում», «Որտեղից եք տեղափոխվել» և այլն: Հարցերի այս խումբը հարցաթերթի մոտավորապես երկու երրորդն է: Երկրորդ խումբը յուրաքանչյուր հաջորդ հետազոտության հարցերն են, որոնք նախատեսված են փորձարկման համար և դրանց համապատասխանության դեպքում կներառվեն հաջորդ հարցաթերթերում: Ստուգումներից հետո դրանք կընդգրկվեն մեր հետագա գործիքակազմում: Վերջին խումբը միավորում է այն հարցերը, որոնք ընդգրկվում են տվյալ օբյեկտի (կոնկրետ քաղաքի համայնքի) առանձնահատկությունը պատկերելու նպատակով:

Հարցաթերթը կառուցված է այնպիսի հարցերով, որոնց նպատակն է տեղեկություն ստանալ հարցման զանգվածի ժողովրդագրական (սեռատարիքային, ընտանեկան և միգրացիոն կազմի) և սոցիալական (սոցիալ-մասնագիտական, գործունեության ոլորտի և ձևի) հատկանիշների մասին: Կան հարցեր, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու ընտանեկան-ազգակցական և հարևանական հարաբերությունները, ինքնակառավարմանը մասնակցելու բնույթը (համայնքի կազմակերպություններում): Առանձնացված են էթնիկ խմբի անդամների հոգևոր կյանքին վերաբերող հարցեր, որոնք հագեցված և ուղղորդված են էթնիկ մշակույթով (կրոնը, արվեստը, ԶԼՄ-ները), պատմական հիշողության հետ կապերով և այլն: Դրանք գրանցում են ինչպես կենսագրական տվյալներն արտացոլող փաստագրական տվյալները, այնպես էլ գնահատականները, կարծիքները, դիրքորոշումները, վարքը և այլն: Վերոնշյալից բացի, հետազոտության գործիքներում ներկայացված է հարցվողի կենսա-

գործունեության քարտեզը. Այստեղ նշվում են նրա կյանքի փուլերը, որը հնարավորություն է տալիս տարիքային հատկանիշի հիման վրա ստանալու գործունեության շարժուն պատկերը¹³:

Գծապատկեր 1.
Ոստիմաստիրված խմբի սեռատարիքային կազմը (% հարցվածներից)



Մեթոդաբանական տեսանկյունից հաջորդ հարցադրումը ընտրանքային համախմբության նկարագրություն պարունակող որոշակի անձնային հատկանիշների նկարագրությունն է, ինչը կօգնի պատկերացում կազմել հետազոտության օբյեկտի մասին:

Լիբանանահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության իրականացման ընթացքում ձևավորվեց մի ընտրանքային համախմբություն, որն արտահայտում է տվյալ էթնիկ խմբի հիմնական բնութագիրները: Դրանց մեջ ամենակարևորն ընտրանքի սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշներն են:

Առաջինն ընտրանքային համախմբության ժողովրդագրական հատկանիշներն են, այդ թվում՝ սեռատարիքային կազմը, ընտանեկան կարգավիճակն ու ընտանիքի կազմը, ծագումնաբանությունը:

Ինչպես երևում է վերևի գծապատկերից, ընտրանքը բաղկացած է 18 տարեկանից բարձր երեք խմբերից՝ 18-29 տարեկան (30%), 30-49 տարեկան (41%), 50 և ավելի տարեկան (29%):

13 Karapetyan R. S., *Migration in cities of Armenia, Ethnosociological survey*, “Gitutyun” Press of the NAS RA, Yerevan, 2013:

Հաջորդ ժողովրդագրական հատկանիշներ են ընտանեկան կարգավիճակն ու ընտանիքի կազմը:

Աղյուսակ 1.

Ընտանիքային համախմբության ընտանեկան կազմը

Ընտանեկան կազմ	% հարցվածներից
Միայնակ	5.1
Ամուսին և կին	8.1
Ամուսին, կին, երեխաներ	68.4
Բարդ կազմ	6.6
Այլ կազմ	11.8

Աղյուսակից երևում է, որ միայնակները և միայն ամուսիններից բաղկացած ընտանիքները կազմում են ընտրանքի 13 տոկոսը, իսկ լրիվ, այդ թվում բարդ կազմ ունեցող ընտանիքները՝ 75 տոկոսը:

Աղյուսակ 2.

**Ընտանիքային համախմբության ընտանեկան կարգավիճակը
(% հարցվածներից)**

Ընտանեկան կարգավիճակ	% հարցվածներից
Ամուրի	30.9
Ամուսնացած	62.5
Այրի, ամուսնալուծվաց	6.6

Այսպիսով, հարցվածների մեկ երրորդն ամուրի է, երկու երրորդն ամուսնացած է, իսկ յուրաքանչյուր տասնհինգերորդը՝ այրի կամ ամուսնալուծված (տե՛ս աղյուսակ 2.2):

Մյուս ժողովրդագրական հատկանիշները վերաբերում են հարցվածների ծագումնաբանական այնպիսի ցուցիչների, որոնք են Լիբանան գալու «ելքի» վայրը և ծնողների (հոր) ծննդավայրը¹⁴: Հարցված լիբանանահայերի միայն 13 տոկոսն է եկել այլ բնակավայր-

14 Հաշվի առնելով հայերի մեջ ընտանիքի պատրիլոկալ/հայրական տեղայնացման ավանդույթը, հարցվածների ծագումնաբանական հատկանիշներում մեզ համար ուղեցույց է հոր ծննդավայրը (Карапетян Э.Т., *Родственная группа «азг» у армян*, Издательство АН АрмССР, Ереван. 1964, с. 65):


րերից և երկրներից: Այդ խմբի հիմնական (63%) ելքի վայրը Սիրիան է, 26.7 տոկոսը՝ այլ երկրներ են և 10.1 տոկոսը՝ Արևմտյան Հայաստանը (տե՛ս աղյուսակ 2.3):

Աղյուսակ 3.
Լիբանան տեղափոխված անձանց «ելքի» վայրը

Երկիր	% հարցվածներից
Սիրիա	63.2
Արևմտյան Հայաստան	10.1
Այլ երկիր	26.7

Հաջորդ հատկանիշները, որոնք բնորոշում են ընտրանքը, լիբանանահայերի սոցիալ-մասնագիտական կազմն է:

Գծապարկեր 2.
Հարցված լիբանանահայերի զբաղվածությունը (% հարցվածներից)



Այսպիսով, լիբանանահայերի շրջանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունը հնարավորություն տվեց ստանալ նոր՝ որակապես առանձնահատուկ նյութ, որը հիմք կհանդիսանա հետագա հետազոտությունների իրականացման և հայ համայնքների ժամանակակից իրավիճակի պարզաբանման և համակարգված ընկալման վերաբերյալ առաջարկների համար:

Օտարազգի միջավայրում էթնիկ խմբի զոյակցության բնույթի ուսումնասիրման համար չափազանց կարևոր է ներգրավել ցուցիչների նոր համակարգ: Իսկ դա հնարավոր է ստանալ միայն էմպիրիկ

հետազոտության միջոցով: Նման տվյալներն ունակ են արտացոլել էթնիկ խմբի կենսագործունեության, արժեքային համակարգի և վարքագծի փոխհարաբերության բնույթը՝ տեղի ունեցող իրադարձությունների խորապատկերին:

Արժեքային համակարգը, որը ժառանգվում և փոփոխվում է իրադարձությունների ազդեցությամբ, ձևավորում է այն նպատակները և դիրքորոշումները, որոնցով առանջնորդվում են էթնիկ խմբի անդամներն իրենց վարքագծում, սոցիալական ձգտումներում և հարաբերություններում: Իր հերթին, սոցիալական գործոնը որոշակիորեն ազդում է հոգևոր կյանքի և դրա էթնիկությունն արտահայտող արժեքային համակարգի վրա:

Նկատի առնելով, որ կենսապայմանները և խումբն ինքնին բավականին շարժուն են, էթնոսոցիոլոգիական հետազոտության մեջ ծրագրված էր դիտարկել կենսագործունեության վերոնշյալ հատկանիշների փոփոխման տրամաբանությունը: Հետևապես, Լիբանանի հայ համայնքի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները շարադրվեցին երկու հիմնարար մասերով՝ էթնոսոցիալական և էթնոմշակութային: Առաջին մոտեցումը կոչված է գնահատել լիբանանահայերի սոցիալական ռեսուրսը, ինչը հանդիսանում է նրանց գոյակցության կարևորագույն գործոն և տեղի ունեցող փոփոխությունների հիմնարար ցուցանիշ: Երկրորդ մոտեցումն անհրաժեշտ է արժեքային համակարգում էթնիկ տարրերի բացահայտման և ներկայացման համար, որի նպատակն է հետևել էթնիկության վերարտադրության ելակետային՝ հիմնարար և ամանցյալ՝ մշակութային հատկանիշների փոփոխություններին:

Նշված երևույթներն արտացոլվում են հարցմանը մասնակցած անձանց իրական վարքագծում, որոնք դիտարկվում են տեղի ունեցած իրադարձությունների խորապատկերին: Լիբանանահայերի շրջանում տեղի ունեցող գործընթացների բնույթն ընկալելու համար հեղինակները դիմել են իրենց կողմից արձանագրված ցուցիչների համադրական վերլուծությանը. ստացված տվյալները համեմատվել են ըստ սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի: Բացի դրանից, իրականացվել է վերոնշյալ երևույթների համապատասխան ցուցիչների միջև փոխադարձ կապերի վերլուծություն: Դա թույլ

է տվել բացահայտել և գնահատել լիբանանահայերի կենսագործունեության այս կամ այլ կողմը որոշող և/կամ ներագդող գործունեները, որոնք կարող են պայմանավորված լինել էթնիկ առանձնահատկություններով կամ տվյալ միջավայրի ընդհանրություններով:

Էթնոսոցիալական գործընթացներ մասը մեկնաբանում է լիբանանահայերի՝ որպես առանձնահատուկ էթնիկ խմբի սոցիալական ներուժի գնահատման սկզբունքը: Այն ենթադրում է դիտարկել որակական և քանակական սոցիալական հատկանիշներ, որոնք արտացոլում են լիբանանահայերի իրական սոցիալական կազմը և հարաբերությունների բնույթը, դրանց ձևավորման հիմքերը և փոփոխման միտումները: Այդ վերլուծական կոյուրերը ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ. սոցիալական կազմ և շարժընթաց, սոցիալական միջավայր և հարաբերություններ, մարտահրավերներ և միգրացիա:

Առաջինը վերաբերում է լիբանանահայերի առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում ընթացող վերընթաց և վարընթաց շարժունությանը: Երկրորդը ձևավորված սոցիալական հարաբերությունների բնույթի մասին է, որն արտահայտված է իրական վարքագծում, կարծիքներում, դիրքորոշումներում ու գնահատականներում: Երրորդը ներկայացնում է լիբանանահայերի կողմից արձարծվող մարտահրավերների բնույթը, ինչն արտահայտվում է նրանց մոտ անհանգստություն առաջացնող երևույթների գնահատականներում: Եվ վերջապես, չորրորդը վերաբերում է լիբանանահայերի միգրացիոն տրանադրություններին, որոնք ցույց են տալիս էթնոսոցիալական միջավայրի նկատմամբ իրական վերաբերմունք ու նրանից օտարման միտումները:

Դոկտ. Ռուբեն Կարապետյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սպիտոքի ուսումնասիրությունների բաժնի վարիչ

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐԻ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփում

Հայկական սփյուռքում ընթացող Էթնոսոցիալական գործընթացները իմաստավորելու համար անհրաժեշտ են որակապես նոր գիտելիքներ: Նրանք կարող են հիմնվել հասարակական գիտությունների կիզակետում ձևավորվող խնդիրների մշակման, հետազոտական առանձնահատուկ հարցադրումների, համապատասխան մեթոդական նորագույն լուծումների ու գործիքակազմի վրա: Նման գիտելիքներ ստանալու խնդրով և կազմվել է «Հայերը սեփական և այլագի միջավայրում» համեմատական ուսումնասիրության ծրագիրը, որն արդեն իրականացվել է տարբեր երկրների տասը մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում բնակվող հայերի շրջանում: Այս առումով Լիբանանի հայերի ուսումնասիրության նախագիծը հանդիսանում ՄԱՄ ծրագրի բաղկացուցիչ մաս: Այն ընդգրկում է օտարագրի միջավայրում հայերի հոծ բնակեցված գանգվածի կենսագործունեության երկու օրգանապես փոխկապակցված կողմերը՝ սոցիալական և էթնոմշակութային: Դիտարկման խնդիրները, դրվածքը, ուսումնասիրության մեթոդաբանությունը և գործիքակազմը թելադրված է երկու կարևորագույն նախապայմաններով, առաջինը բխում է լիբանանահայերի անձնային և խմբային մակարդակով իրական կենսակերպի արտացոլման, իսկ երկրորդը՝ այդ կենսակերպի բազմազան կողմերի ընդգրկման խնդիրներից:

Доктор Рубен Карпетян,

заведующий Отделом исследований диаспоры
Института археологии и этнографии НАН РА

ЦЕЛИ И МЕТОДЫ ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ ЛИВАНСКИХ АРМЯН

Резюме

В осмыслении происходящих в армянской диаспоре этносоциальных процессов необходимы качественно новые знания. Они могут быть получены путем разработки проблематики, формирующейся на стыке общественных наук, постановки специфических исследовательских задач, с соответствующими методическими приемами и

инструментарием. Эти исследования должны иметь программный характер и быть нацелены на создание научной основы разработки и реализации общенациональных проектов. Для получения подобных знаний и была разработана программа этносоциологических исследований «Армяне в своей и инонациональной среде», успешно реализованная в среде армян - жителей десяти столиц и крупных городов разных стран. Исследовательский проект армян Ливана является составной частью программы «Армяне в своей и инонациональной среде». Он включает две составные жизнедеятельности компактно расселенной, в инонациональном окружении, этнической группы – социальную и этнокультурную. Постановка задач, методология и инструментарий исследования были продиктованы двумя важными предусловиями. Первое - исходит из необходимости отражения реалий жизненных перепитий ливанских армян на личностном и групповом уровнях, второе – на потребности отражения всего разнообразия их жизнедеятельности.

Doct. Ruben Karpetyan

Head of the Diaspora Research Department
of the Institute of Archeology and Ethnography of the NAS RA

OBJECTIVES AND METHODS OF ETHNOSOCIOLOGICAL RESEARCH OF LEBANESE ARMENIANS

Summary

In order to understand the ongoing ethno-sociological processes in the Armenian Diaspora new qualitative knowledge must be collected. Knowledge can be produced through developing specific research questions on issues taking shape within the sphere of social sciences, based on relevant new methodological means and technology. In order to generate such knowledge a comparative study project called “The Armenians in their own and foreign environment” was developed. The project has already been implemented among Armenians living in ten capitals and large cities of the Diaspora. Therefore, the Lebanese aspect constitutes a section of the general project. It covers the expression of two organically intertwined aspects of Armenians living en masse in a foreign milieu: social and ethno-cultural.

The issues observed, conditions, research methodology and technology are conditioned by two most important concerns: a) the actual personal and collective lifestyle of the Lebanese Armenians and b) the inclusion of diverse issues of that lifestyle.

Դոկտ. Ռուբեն Կարապետյան
 ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ
 Լուսինե Տանաջյան, Սոնա Ներսիսյան,
 Կարինե Նալբանդյան, Սյուզաննա Բարսեղյան
 ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատողներ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Օտարազգի միջավայրում էթնիկ խմբի գոյակցության բնույթի ուսումնասիրման համար չափազանց կարևոր է ներգրավել ցուցիչների նոր համակարգ: Իսկ դա հնարավոր է ստանալ միայն էմպիրիկ հետազոտության միջոցով: Նման տվյալներն ունակ են արտացոլել էթնիկ խմբի կենսագործունեության, արժեքային համակարգի և վարքագծի փոխհարաբերության բնույթը՝ տեղի ունեցող իրադարձությունների խորապատկերին:

Արժեքային համակարգը, որը ժառանգվում և փոփոխվում է իրադարձությունների ազդեցությամբ, ձևավորում է այն նպատակները և դիրքորոշումները, որոնցով առանջնորդվում են էթնիկ խմբի անդամներն իրենց վարքագծում, սոցիալական ձգտումներում և հարաբերություններում: Իր հերթին, սոցիալական գործոնը որոշակիորեն ազդում է հոգևոր կյանքի և դրա էթնիկությունն արտահայտող արժեքային համակարգի վրա:

Նկատի առնելով, որ կենսաապայմանները և խումբն ինքնին բավականին շարժուն են, էթնոսոցիոլոգիական հետազոտության մեջ ծրագրված էր դիտարկել կենսագործունեության վերոնշյալ հատկանիշների փոփոխման տրամաբանությունը: Հետևապես, Լի-

բանանի հայ համայնքի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները շարադրվեցին երկու հիմնարար մասերով՝ էթնոսոցիալական և էթնոմշակութային: Առաջին մոտեցումը կոչված է գնահատել լիբանանահայերի սոցիալական ռեսուրսը, ինչը հանդիսանում է նրանց գոյակցության կարևորագույն գործոն և տեղի ունեցող փոփոխությունների հիմնարար ցուցանիշ: Երկրորդ մոտեցումն անհրաժեշտ է արժեքային համակարգում էթնիկ տարրերի բացահայտման և ներկայացման համար, որի նպատակն է հետևել էթնիկության վերարտադրության ելակետային՝ հիմնարար և ածանցյալ՝ մշակութային հատկանիշների փոփոխություններին:

Նշված երևույթներն արտացոլվում են հարցմանը մասնակցած անձանց իրական վարքագծում, որոնք դիտարկվում են տեղի ունեցած իրադարձությունների խորապատկերին: Լիբանանահայերի շրջանում տեղի ունեցող գործընթացների բնույթն ընկալելու համար հեղինակները դիմել են իրենց կողմից արձանագրված ցուցիչների համադրական վերլուծությանը. ստացված տվյալները համեմատվել են ըստ սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերի: Բացի դրանից, իրականացվել է վերոնշյալ երևույթների համապատասխան ցուցիչների միջև փոխադարձ կապերի վերլուծություն: Դա թույլ տվեց բացահայտել և գնահատել լիբանանահայերի կենսագործունեության այս կամ այլ կողմը որոշող և/կամ ներագրող գործոնները, որոնք կարող են պայմանավորված լինել էթնիկ առանձնահատկություններով կամ տվյալ միջավայրի ընդհանրություններով:

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Էթնոսոցիալական գործընթացներ մասը մեկնաբանում է լիբանանահայերի՝ որպես առանձնահատուկ էթնիկ խմբի սոցիալական ներուժի գնահատման սկզբունքը: Այն ենթադրում է դիտարկել որակական և քանակական սոցիալական հատկանիշներ, որոնք արտացոլում են լիբանանահայերի իրական սոցիալական կազմը և հարաբերությունների բնույթը, դրանց ձևավորման հիմքերը և փոփոխման միտումները: Այդ վերլուծական նյութերը ներկայացվում են հետևյալ հաջորդականությամբ. սոցիալական կազմ և շարժընթաց,

սոցիալական միջավայր և հարաբերություններ, մարտահրավերներ և միգրացիա:

Առաջինը վերաբերում է լիբանանահայերի առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում ընթացող վերընթաց և վարընթաց շարժունությանը: Երկրորդը ձևավորված սոցիալական հարաբերությունների բնույթի մասին է, որն արտահայտված է իրական վարքագծում, կարծիքներում, դիրքորոշումներում ու գնահատականներում: Երրորդը ներկայացնում է լիբանանահայերի կողմից արժարժվող մարտահրավերների բնույթը, ինչն արտահայտվում է նրանց մոտ անհանգստություն առաջացնող երևույթների գնահատականներում: Եվ վերջապես, չորրորդը վերաբերում է լիբանանահայերի միգրացիոն տրամադրություններին, որոնք ցույց են տալիս էթնոսոցիալական միջավայրի նկատմամբ իրական վերաբերմունք ու նրանից օտարման միտումները:


Սոցիալական տեղաշարժեր: Լիբանանի հայ համայնքի նախկին և ներկայիս իրավիճակը, ինչպես նաև հետագա զարգացումներն իրենց արտահայտությունն են գտնում հատկապես սոցիալական փոփոխությունների միջոցով: Վերջիններս ակտիվ դրսևորում են ունեցել հատկապես Լիբանանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ընթացքում և դրանից հետո (1975-1976թթ.): Այս իրադարձությունները մեծապես ազդել են հայկական համայնքի ոչ միայն ժողովրդագրական կազմի, այլ նաև սոցիալ-մասնագիտական կառուցվածքի վրա: Այս փոփոխությունները ուղեկցվել են մի շարք սոցիալական հատկանիշների փոխակերպմամբ, որի զարգացման շարժընթացը կարելի է բացահայտել համայնքի անդամների միջսերնդային և ներսերնդային մոբիլության (շարժունության) դիտարկման միջոցով:

Լիբանանահայերի ուսումնասիրված զանգվածում սոցիալական տեղաշարժերի առանձնահատկությունների դուրսբերման և արձանագրման նպատակով սահմանվել են առանձին ցուցիչներ, որոնք անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով արտացոլում են այդ գործընթացները: Այսպես օրինակ նրանք հնարավորություն են ընձեռում դիտարկել հարցվողների աշխատանքային գործունեու-

թյան ընթացքը, ինչպես նաև հետևել աշխատանքային փոփոխություններին միջսերնդային կտրվածքով տարբեր ժամանակային պայմաններում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս հասկանալ լիբանանահայերի սոցիալական տեղաշարժերի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են մի կողմից միջավայրով, ինչպես նաև ազգի տվյալ հատվածին հատուկ ելակետային հատկանիշներով:

Համայնքում ընթացող գործընթացները հասկանալու համար նախ պարզաբանենք տվյալ խմբի ընդհանուր սոցիալական հատկանիշները՝ սոցիալ-ժողովրդագրական կազմը, կրթական մակարդակը և տնտեսական ակտիվությունը:

Գծապատկեր 1.
Ուսումնասիրված խմբի սեռի, տարիքի և կրթական մակարդակի կապը
(% հարցվածներից)



Սեռատարիքային համամասնության դուրսբերման նպատակով ներկայացնենք ստացված տվյալների բաշխվածությունն ըստ հարցվածների՝ սեռի և տարիքի կապի (գծապատկեր 1): Արական սեռի ներկայացուցիչների 50 տոկոսը 19-30 տարիքի անձիք են, 46 տոկոսը՝ 31-50 տարեկան, 4 տոկոսը տոկոսը 51 և ավելի տարիքի անձիք: Այսպես կանանց 40 տոկոսը 19-30 տ. են, 41 տոկոսը՝ 31-50 տ. և 19 տոկոսը՝ 51 և ավելի տարիքի անձիք:

Կրթության և սեռի կապը արտահայտվում է հետևյալ ձևով. տղամարդկանց 31 տոկոսը ունեն միջնակարգ կրթություն, 22 տոկոսը միջին մասնագիտական, իսկ 47 տոկոսը՝ բարձրագույն կրթություն: Կանանց շրջանում միջնակարգ կրթությամբ անձիք կազմում են 18 տոկոսը, միջին մասնագիտական՝ 24 տոկոսը, և կեսից ավելին (57%) ունեն բարձրագույն կրթություն: Հետազոտությանը մասնակցած լիբանանահայերը առանձնանում են բավականին բարձր տնտեսական ակտիվությամբ: Հարցվածների ճշող մեծամասնությունը (83%) գրադվում է աշխատանքային գործունեությամբ:


Հատկանշական է նրանց տնտեսական գործունեության ոլորտների բազմազանությունը: Լիբանանահայրը բաշխվում են մի քանի սոցիալ-մասնագիտական խմբերի, որոնցից յուրքանջյուրը արտահայտում է ոչ միայն տնտեսական գործունեության ձև, այլ նաև կրում է սոցիալական առանձնակի հատկանիշներ և ցույց է տալիս պատկանելիություն որոշակի սոցիալական շերտին: Ըստ հետազոտության տվյալների, հարցվածները բաշխվել են չորս խոշոր սոցիալ-մասնագիտական խմբերի, որոնց համամասնությունը տրված է գծապատկեր 2-ում: Առաջարկվող խմբավորումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- ըստ աշխատանքի կատարման երկու հիմնական ուղղվածության՝ մտավոր և ֆիզիկական,
- ըստ աշխատանքային ձևերին բնորոշ կրթական, մասնագիտական և որակավորման աստիճանի հատկանիշների:

Բացի դրանից, առանձնացվել են սեփականատերերը, ովքեր ներկայանում են որպես յուրատեսակ սոցիալական կայուն խումբ, որը չի ենթարկվում վերոնշյալ սզբունքներին, այսինքն չունի կրթա-

կան մակարդակի սահմանափակումներ և չի հարում առավելապես որևէ ուղղվածության (մտավոր կամ ֆիզիկական): Սեփականատերերը առանձնանում են նրանով, որ հանդիսանում են սեփական կապիտալի ստեղծողը և/կամ ինքնագրադված են:

Գծապատկեր 2.
Հարցված լիբանանահայերի սոցիալ-մասնագիտական կազմը
(% հարցվածներից)




Ինչպես երևում է 2 գծապատկերից, ուսումնասիրված խմբի մի սովոր հատված զբաղեցնում է բարձր որակավորում ունեցող մասնագետների (Ա) շարքերը (40%), ապա 24 տոկոսը միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներն են (Բ1), որին հավասար համամասնությամբ (12%) հաջորդում են առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվածները (Գ), առանց որակավորման ծառայողները (Բ1) և սեփականատերերը (Գ):

Եթե դիտարկենք ընդհանուր համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագիրն ըստ փորձագիտական գնահատականների, ապա հասկանալի կլինի այն փաստը, որ, ընդհանուր առմամբ, Լիբանանը ունի փոքր շուկա, հիմնական մասնավոր արտադրություն չունի, և իրավիճակը ավելի «տուրիստիկ» է: Բացի դրանից, ըստ փորձագետների՝ Ցեղասպանությունից հետո Լիբանան եկած հայերը իրենց հետ բերեցին արհեստներ, որոնք մինչև այդ Լիբանանում գոյություն չունեին: Հայերը նշանավոր էին ոսկերչությամբ, նկարչությամբ, կաշեգործությամբ: Նմամանատիպ արհեստներն ամբողջու-

թյամբ գտնվում էին հայերի ձեռքին: Սրանք այն ելակետային հատկանիշներն են, որոնք ազդել են լիբանանահայերի հետագա սոցիալ-տնտեսական կյանքի, մասնավորապես՝ սոցիալական կառուցվածքի պատկերի փոփոխման շարժընթացի վրա:

Նշվածն ավելի ցցուն արտահայտվում է սոցիալական խմբերի տարիքային կազմի միջոցով: Այսպես, եթե դիտարկենք հարցվածների ներկայիս աշխատանքի բնույթի կապը նրանց տարիքային կազմի հետ, ապա կստանանք հետևյալ պատկերը (տես՝ գծապատկեր 3):

Գծապատկեր 3.
Հարցված լիբանանահայերի սոցիալ-մասնագիտական խմբերի կազմը
(% հարցվածներից)




Վերոնշյալ գծապատկերը ցույց է տալիս սոցիալական խմբերի տարիքային կառուցվածքի նշանակալի տարբերությունները: Այսպես, առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվածների կեսը կազմում են 50-ից բարձր տարիքի մարդիկ: Տվյալ տարիքային խմբում որակավորված երկու աշխատանքային ոլորտներում էլ նկատվում է անկում: Սա թերևս բացատրվում է նրանով, որ երրորդ սերնդի անձիք, պահպանելով իրենց կարգավիճակը «Գ» խմբում, իրենց ջանքերն ու միջոցներն ուղղել են հաջորդ սերնդի կարգավիճակների բարձրացմանն ու վերընթաց շարժունությանը: Համեմատաբար կայուն օրինա-

չափությամբ աճում է սեփականատերերի խումբը, որն առավել մեծ թիվ է կազմում միջին ու բարձր տարիքային խմբերում՝ կապված տարիների ընթացքում ձեռք բերած փորձի և առաջնային ներդրումների հետ: Նշվածը ցույց է տալիս հայերի կողմնորոշումը դեպի ավելի բարձր կրթական մակարդակ, որը հնարավոր է դարձել միայն երկրորդ և երրորդ սերնդի մոտ՝ ի շնորհիվ առաջին սերնդի ջանքերի:

Լիբանանահայերի՝ կրթության ավելի բարձր որակի կողմնորոշումը կարող է բացատրվել երկու հիմնական պատճառներով. առաջին՝ երկրի ընդհանուր իրավիճակը, ազատություններն ու հնարավորությունները, որոնք տրվում են այդտեղ բնակվող բոլոր էթնիկ խմբերին, այդ թվում՝ հայ համայնքի ներկայացուցիչներին, երկրորդ՝ կրթության որպես ազգային արժեքի ընկալման:

Կրթության նկատմամբ նման վերաբերմունքը հաստատվում է նաև սփյուռքի այլ համայնքներում՝ ըստ Լոս Անջելեսի, Թեհրանի, Մոսկվայի էթնոսոցիոլոգիական հետազոտությունների տվյալների¹:

Գծապարկեր 4.
Հարցված լիբանանահայ տղամարդկանց/կանանց զբաղվածությունը
(% ըստ սեռերի)



1 Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. Ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները պետական նպատակային ծրագիր/փորձագիտական հետազոտության տվյալներ, 2010–2014թթ.:

Աշխատանքային գործունեությունը համարվում է սոցիալական առաջընթացի կարևոր տարրերից մեկը²: Ենթադրվում է, որ օտար միջավայրում էթնիկ խմբի սոցիալական առաջադիմությունը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով՝ կախված ավանդույթներից, արժեքների համակարգից, ընդունող երկրի պետական համակարգից և այլն: Ելնելով հասարակության միջավայրերի բաց և փակ բնույթից՝ կարելի է ենթադրել որ, տվյալ պայմանները կարող են ունենալ ազդեցություն սոցիալական տեղաշարժերի վրա՝ հատկապես պայմանավորված սեռային առանձնահատկություններով: Այդ գործոնով է պայմանավորված, թե նման փոփոխություններն ինչ բնույթի և ինչ արագությամբ են ընթանում:


Լիբանանահայերի շրջանում կանանց և տղամարդկանց զբաղվածության միջև եղած տարբերությունները ներկայացված է գծապատկեր 4-ում: Ինչպես ցույց են տալիս տվյալները, և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտ մեծ խումբ են կազմում բարձրագույն կրթությամբ մտավոր աշխատողները: Կանանց մոտ սեփականատերերի և առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խումբը իր մեծությամբ զիջում է տղամարդկանց խմբերին, փոխարենը աճում է միջին մասնագիտական որակավորմամբ աշխատողների խմբում: Այստեղ կարևոր են գեղեղրային տարբաժանման և ազգային ավանդույթի հատման կետերը: Դիտարկելով ֆիզիկական աշխատանքը և ձեռներեցությունը առավելապես տղամարդկանց հատուկ գործունեություն՝ կանայք հիմնականում զբաղեցնում են սպասարկական կամ մտավոր աշխատանքային գործունեության ոլորտները:

Մեկ այլ կարևոր ցուցիչ է տվյալ քաղաքում հայ էթնիկ խմբի զբաղեցրած սոցիալական կարգավիճակն ըստ կրթական մակարդակի, քանի որ վերջինս այն հատկանիշն է, որի հիման վրա դրսևորվում է տվյալ խմբի սոցիալական առաջադիմությունը: Այսպես, պարզելու համար կրթության և զբաղեցրած կարգավիճակի համապատասխանության աստիճանը՝ դիտարկենք սոցիալ-մասնագիտական խմբերի բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի:

2 Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, (պատ. խմբ. Կարապետյան Ռ.), Երևան, 2014, Գիտություն հրատարակչություն, 183:

Ինչպես երևում է գծապատկեր 5. -ի տվյալներից, գրեթե բոլոր սոցիալ-մասնագիտական խմբերի մեծամասնությունն ունի բարձրագույն կրթություն: Ֆիզիկական աշխատանք կատարողների գերակշռող մասն ունի միջնակարգ կրթություն: Հատուկ պատրաստվածությամբ մտավոր աշխատողների մեծ մասն ունի բարձրագույն կրթություն:

Գծապատկեր 5.
Հարցված լիբանանահայերի սոցիալ-մասնագիտական խմբերի կրթական մակարդակը




Ուշագրավ է հատկապես այն փաստը, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների կեսն ունի միջնակարգ կրթություն, մյուս կեսը գրեթե հավասարապես բաշխվում են միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների միջև, ինչը կարող է ունենալ երկու հիմնական բացատրություն: Առաջին՝ հարցվածների ձեռնարկատիրական գործունեությունը չի պահանջում հատուկ պատրաստվածություն և բարձրագույն կրթություն, և երկրորդ՝ այդ փաստը կարող է վկայել ընտանեկան ձեռներեցության առկայության և ժառանգաբար փոխանցելիության մասին:

Ավելի պարզորոշ պատկեր ստանալու նպատակով դիտարկենք հարցվածների կրթական մակարդակի աստիճանն ըստ զբաղվածության ոլորտների: Ըստ ստացված տվյալների, միջնակարգ կրթությամբ անձիք գրեթե մեկ երրորդ համամասնությամբ բաշխվել են սեփականատերերի, առավելապես ֆիզիկական աշխատանքով

զբաղվողների և առանց որակավորման ծառայողների խմբերում: Մեկականատերերի թվի բարձր ցուցանիշը խոսում է այնտեղ գործարար միջավայրի հասանելիության մասին: Այս խումբը համեմատաբար բաց է և չունի կրթական սահմանափակումներ:

Գծապարկեր 6.
Հարցված լիբանանահայերի կրթական մակարդակի կապը
զբաղվածության ոլորտների հետ (% հարցվածներից)



Միջին մասնագիտական կրթությամբ անձանց մեծամասնությունը բաշխվել է երկու հիմնական՝ միջին մասագիտական որակավորում ունեցող մասնագետների (39%) և բարձր որակավորում ունեցող մասնագետների ու ղեկավարների (46%) խմբերում:


Բարձրագույն կրթությամբ անձանց կեսից ավելին (54%) իր տեղն է գտել բարձր որակավորում ունեցող մասնագետների, ղեկավարների շարքում, ինչը բնական է: Մյուս մասի 31 տոկոսը զբաղեցրել է առանց որակավորման ծառայողների շարքերը: Սա թերևս բացատրվում է այն հանգամանքով, որ բարձրագույն կրթությամբ անձանց մեջ են մտել դեռևս կրթություն ստացող երիտասարդները, որոնք ժամանակավորապես տեղ են գտել այդ ոլորտում:

Ինչպես երևում է, կրթական մակարդակի և աշխատանքային գործունեության ոլորտի համապատասխանությունը բավականին օրինաչափ է:

Սոցիալական տեղաշարժերի բնույթը բացահայտելու առաջին պայմանն այն է, թե համայնքի անդամներն իրենց կյանքի տարբեր փուլերում ինչպիսի գարգացում են ունեցել զբաղեցրած գործունեության ոլորտում: Սոցիալական առաջադիմության հիմնական գործոն կարող է համարվել այն ժամանակահատվածը, երբ տվյալ միջավայրում տեղի են ունենում անհատի կարգավիճակի և գործունեության տեսակի փոփոխությունները: Այստեղ ակնհայտ է, որ բարձր տարիքային խմբի մոտ այդ ժամանակահատվածը բավական երկար է և ակնկալվում է, որ փոփոխությունները պետք է լինեն բավականին շատ: Բայց արդյունքում երևում է, որ սոցիալական փոփոխության տվյալ խմբի մոտ համեմատաբար ավելի քիչ են:

Երիտասարդ սերնդի մոտ նույնպես այդ փոփոխությունները այնքան արագ չեն ընթանում, քանի որ դրանց կատարվում են կարճաժամկետ և արհայտում են մեծամասամբ սոցիալական տեղաշարժի մեկնարկային իրավիճակը: Պարզորոշ է, որ հետագայում այդ ելակետային սոցիալական հատկանիշները կարող է ենթարկվել փոփոխության: Վերջինս կարող է ուղեկցվել նոր սոցիալական գործունեության դաշտի որոնմամբ, ինչը նաև կարող է հանգեցնել տարածական տեղաշարժերի:

Գծապարկեր 7.
Հարցված յիբանասահայերի զբաղեցրած առաջին և ներկայիս կարգավիճակները (% հարցվածներից)



Ասվածի համատեքստում դիտարկենք ուսումնասիրված լիբանանահայերի զբաղեցրած սոցիալ-մասնագիտական ոլորտները նախկինում և ներկայում:

Աշխատանքային գործունեության երկու փուլերը համեմատելիս տեսնում ենք, որ ներսերնդային վերընթաց շարժունություն է նկատվում բարձր որակավորում ունեցող (34%-ից աճել է մինչև 40%), միջին մասնագիտական որակավորում ունեցող (19%-ից աճել է մինչև 24%) մասնագետների և սեփականատերերի (7%-ից աճել է մինչև 13%) շրջանում, ինչը տեղի է ունեցել առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների և առանց որակավորման ծառայողների վարընթաց մոբիլության արդյունքում:


Իրենց աշխատանքային գործունեության սկզբում ֆիզիկական աշխատողների և առանց որակավորման մասնագետների կարգավիճակը հետագայում բարձրացել է: Պետք է նշել, որ նշված երկու փուլերում էլ առավել մեծ խումբ են կազմում բարձրագույն կրթությամբ մտավոր աշխատողները:

Սոցիալական տեղաշարժերի բնույթը հատկապես արտահայտիչ է երկու սերունդների ծավալած տնտեսական գործունեության համեմատության մեջ: Պարզ է, որ եթե ներսերնդային մոբիլությունը հնարավորություն է տալիս սահմանել տեղաշարժերի բնույթն ավելի կարճ ժամանակահատվածի համար, ապա նախորդ սերնդի հետ համեմատությունը՝ միջսերնդային մոբիլության դուրսբերումը թույլ կտա սահմանել այն հիմքը, կապիտալը, որի վրա այսօր ձևավորվել են ներկայիս սոցիալ-մասնագիտական խմբերը, և տեսնել երկու սերունդների միջև եղած տարբերություններն ու առանձնահատկությունները՝ կապված տնտեսական գործունեության հետ: Միջսերնդային մոբիլության արդյունքում տեղի ունեցած սոցիալական փոփոխությունների դուրսբերման նպատակով, դիտարկենք երկու սերունդների զբաղեցրած կարգավիճակները :

Ուսումնասիրված լիբանանահայերի նախորդ և ներկայիս զբաղեցրած սոցիալ-մասնագիտական ոլորտների համեմատությունը ցույց է տալիս, որ առկա են նշանակալի փոփոխություններ: Կարելի է ասել, որ երկու սերունդների մոտ էլ կան երկու կայուն խմբեր՝ սեփա-

կանատերերի և առանց որակավորման ծառայողների: Սա թերևս բացատրվում է այն հանգամանքով, որ գործունեության այս երկու ձևերն էլ կրում են ժառանգական բնույթ: Դա արտահայտվում է նրանում, որ արհեստներն ու սեփական բիզնեսը Լիբանանում հաճախ ընթանում են ընտանիքի ընդերքում, որտեղ երիտասարդ սերունդը ձեռք է բերում այդ գործունեության հետ կապված հմտությունները և ավելի դյուրին է ժառանգել «դրած գործը», դրանով իսկ կրկնել նախորդ սերնդի տնտեսական վարքագիծը:

Գծապարկեր 8.
Լիբանանահայերի միջսերնդային մոբիլության պարկերը




Մյուս ոլորտներում նկատվում է հետևյալ միտումը. առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվողների խումբը (նախորդ սերնդում կազմում է 56%) գրանցել է անկում, և արդեն երիտասարդ սերունդն այդ ոլորտի փոխարեն ան է գրանցել միջին մասնագիտական (24%) և բարձր որակավորում (40%) ունեցող մասնագետների շրջանում:

Միջսերնդային մոբիլությունը ցույց է տալիս, որ եթե մեծահասակների մոտ աշխատողների ամենամեծ խումբը կազմում էին առավելապես ֆիզիկական աշխատանքով զբաղվածները (56%), ապա երիտասարդների մոտ ամենամեծ խումբը կազմում են բարձր որակավորում ունեցող մասնագետները (40%):

Հարկ է նշել, որ երկու սերունդների կենսագործունեության ընթացքում սոցիալական փոփոխությունները կարող են ընթանալ գծային ձևով կամ վայրիվերումներով: Այս մասին պատկերացում կազմելու նպատակով դիտարկենք այդ երկու բևեռային սերունդների մոտ եղած սոցիալական տեղաշարժերի դինամիկան՝ ըստ սոցիալ-մասնագիտական ոլորտների:

Գծապարկեր 9.
Հարցված լիբանանահայերի միջսերնդային և ներսերնդային մոբիլության պարկերը



Ելնելով ստացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների մոտ նախորդ սերնդի համեմատ տեղի է ունեցել կտրուկ անկում՝ սկզբում 39 տոկոսով, ապա իջել է մինչև 11 տոկոսը:

Միայն 23 տոկոս հարցվածների մոտ է, որ առանց որակավորման ծառայողները առաջին աշխատանքի ժամանակ գրանցել են աճ՝ առաջին (մեծահասակների) և վերջին (երիտասարդների) սերնդի արդյունքների համեմատ:

Միջին մասնագիտական որակավորում ունեցող մասնագետները ցույց են տվել օրինաչափ և կայուն աճ՝ մեկ տոկոսից դառնալով 19 տոկոս, ապա մինչև 24 տոկոս:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների և դեկավարների շրջանում ակնհայտ է վերընթաց մոբիլությունը: Նախորդ սերնդի


համեմատ (18%) երիտասարդները դեռևս առաջին աշխատանքային գործունեության ժամանակ ցուցադրել է կտրուկ աճ (34%), ինչը վերջին աշխատանքի տվյալներով հասել է 40 տոկոսի:

Սեփականատերերի խումբը, ըստ էության, պահպանել է իր կայունությունը: Եթե նախորդ սերնդի մոտ այն կազմում է 15 տոկոս, ապա հարցվածների առաջին աշխատանքի ժամանակահատվածում նվազել է մինչև 7 տոկոս, իսկ ներկայումս գրեթե վերականգնել է իր նախկին համամասնությունը՝ 13 տոկոս:

Անշուշտ, միջսերնդային մոբիլությունը, ընդհանուր առմամբ, առաջադիմական բնույթ է կրում: Երիտասարդ սերունդը զբաղեցնում է ավելի բարձր կարգավիճակ և դիրք, քան նախորդը:

Սոցիալական միջավայր և հարաբերություններ: Որևէ համայնքային կառույցում համայնքի անդամների ներգրավվածության անդրադառնալով պարզվում է նրա սոցիալական ակտիվությունը, սոցիալական գործունեության բազմազանության աստիճանը և ուղղվածությունը (դեպի ներս՝ համայնք, կամ դեպի դուրս՝ օտար միջավայր), սոցիալական ռեսուրսների ձեռքբերմանն ուղղված ներդրումները:

Գծապարկեր 10.
Համայնքի անդամների ներգրավվածությունը համայնքային կառույցներում (% հարցվածներից)



Ուսումնասիրված խմբի մեծամասնությունը ներգրավված է այս կամ այն համայնքային կառույցում: Դա խոսում է այն մասին, որ նրանց սոցիալական ակտիվության որոշակի մասն ապահովվում է

հենց համայնքային սոցիալական հարցերով և լրացվում է հայկական «բովանդակությամբ»: Սակայն կարևոր է հասկանալ, թե ինչպիսի սոցիալական ակտիվություն են ցուցաբերում համայնքի ներկայացուցիչներն ընդհանրապես. արդյո՞ք ակտիվ համայնքային վարքը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է նրանց սոցիալական վարքին, թե՛ ավելի վառ դրսևորվում է այլընտրանքային սոցիալական ակտիվության բացակայության խորապատկերին: Այս նպատակով անհրաժեշտ է պարզել, թե համայնքային կառույցներում ներգրավված լինելն ինչ կապի մեջ է այդ կառույցներում զբաղեցրած տեղից: Անձի իրականացրած սոցիալական գործառույթը որոշակի կառույցում կարող է ցույց տալ ինչպես նրա դիրքը համայնքի ներսում, այնպես էլ ազդել անձի սոցիալական դիրքորոշումների, նախընտրությունների վրա: Աղյուսակ 1-ում ներկայացված է ուսումնասիրված խմբի ներգրավվածությունը համայնքային կառույցներում:

Աղյուսակ 1.
Ներգրավվածությունը համայնքային կառույցներում


Կազմակերպության տեսակը	% հարցվածներից
Կուսակցական	37,9
Մշակութային	19,7
Բարեսիրական	19,7
Մարզական	18,2
Հայրենակցական	1,5
Կրթական	1,5
Եկեղեցական	1,5

Ուսումնասիրված խմբի ներգրավվածությունը համայնքային կառույցներում բավականին բարձր է: Հարցվածների մոտ երեք քառորդը ներգրավված է այս կամ այն կազմակերպության մեջ: Համայնքային կառույցներից ամենաակտիվ գործունեություն են ծավալում քաղաքական կուսակցությունները: Ըստ ներգրավվածության աստիճանի կուսակցություններին հաջորդում են մշակութային, բարեսիրական և մարզական կառույցները, որոնց միջոցառումներին

մասնակցում են մեր կողմից հարցված ամեն հինգերորդ լիբանանահայը:

Հաջորդ գծապատկերում ներկայացված է ուսումնասիրված խմբի սեռատարիքային կազմն ըստ համայնքային կառույցներում ներգրավվածության:

Գծապատկեր 11.
Համայնքային կառույցներում ներգրավվածությունն ըստ սեռատարիքային կազմի (% հարցվածներից)




Համաձայն ստացված արդյունքների, խմբում ավելի բարձր ներգրավվածություն նկատվում է արական սեռի և երիտասարդների մոտ, իսկ ամենաքիչը՝ միջին տարիքի անձանց և կանանց մոտ: Սա կարող է հիմք հանդիսանալ ինչպես ներգրավվածության դրդապատճառների բացահայտման, այնպես էլ կառույցների հետագա գործունեության ուղենշման համար: Ստացված տվյալների միջոցով կարելի է արձանագրել երիտասարդների հետաքրքրվածությունը համայնքային կյանքով, ինչը կարող է ապահովել համայնքային կառույցների հետագա կայուն գործունեությունը մոտ ապագայում:

Ուսումնասիրված խմբի համար համայնքային կառույցներում ներգրավվածությունը կարող է ստեղծել հայկական միջավայր, որտեղ դրանց ներկայացուցիչներն այս կամ այն կերպ առնչվում են

«հայկական»-ի հետ, և ինչ-որ չափով իրենք էլ են ներմուծում որոշակի հայկական տարրեր:

Որպես կազմակերպության անդամ ներգրավվածների մեծ չափը խոսում է հենց դրա մասին, քանի որ այս մարդիկ կրում են ոչ միայն հայկականին առնչվող տեղեկատվություն, այլև տարածում են այն: Ուշագրավ է կազմակերպիչների բավականին մեծ տոկոսը, ինչը թույլ է տալիս հետևություն անել համայնքում ստեղծվող կամ համայնք ներմուծվող տեղեկատվության բազմազանության մասին: Վերջինս տեղեկատվության որակի կարևոր ցուցիչներից մեկն է, ուստի կարելի է եզրակացնել, որ կազմակերպիչների քանակի աճին զուգահեռ բարձրանում է նաև տեղեկատվության որակը:

Գծապատկեր 12.
Համայնքի անդամների՝ կառույցներում ներգրավվածության ձևը
 (% հարցվածներից)




Հաջորդ կարևոր հարցը թույլ է տալիս հասկանալ, թե համայնքի անդամներն ինչ ռեսուրսների վրա են հիմնվել որևէ բան նախաձեռնելիս, օգտվել են արդյոք համայնքային ներքին ռեսուրսներից, թե ոչ, ինչպես նաև հարցը թույլ է տալիս բացահայտել համայնքի անդամների միջև վստահության մակարդակը, այս երևույթի հետ կապված ընդունված նորմերը տվյալ սոցիալական միջավայրում:

Ուսումնասիրված խմբի կեսը նշում է, որ կյանքում ձեռքբերումներ ունեցել են ազգականների (ազգականներ ասելով նկատի ու-

ներք ինչպես հեռու ազգականներին, այնպես էլ ծնողներին ու սեփական ընտանիքը) շնորհիվ, ինչը կարող է խոսել մի քանի երևույթների մասին: Նախ, օտար միջավայրում կենսագործունեությունը պահպանողական է, ուստի սոցիալական աճ կամ գոնե առաջընթաց ապահովվելու հարցում անձը կարող է ապավինել առավելապես սոցիալական հարաբերությունների նեղ շրջանակներին (ընտանիք, ազգականներ):

Գծապարկեր 13.
Ում/ինչին են վերագրում համայնքի անդամներն իրենց ունեցած ձեռքբերումները (% հարցվածներից)




Բացի դրանից, մեծ նշանակություն ունեն համայնքի անդամների կամ նրանց խմբի մրցակցային հնարավորությունները կամ հմտությունները տվյալ սոցիալական միջավայրում: Վերջինիս հետ կապված խնդիրների առաջացումն օտար միջավայրում օրինաչափ է, և, որպես կանոն, դրանց այժմեականությունը մարում է տվյալ միջավայրում ապրած տարիների թվին զուգընթաց: Սակայն դրանց վերջնական լուծումը հնարավոր է դառնում միայն սերնդափոխության պարագայում, այն էլ՝ հարակից նպաստավոր գործոնների առկայության պայմաններում: Եվ վերջապես, նոր տարրերի ներգրավման հարցում արտաքին միջավայրի դիրքորոշումը ևս կարող է պատճառ հանդիսանալ կոնկրետ տեսակի վարքի դրսևորման համար. որքան այն ազատ է և բաց, այնքան մեծ է հավանականությունը, որ սոցիալական աճի համար անձն ինքնուրույն քայլեր կձեռնար-

կի: Ուսումնասիրված խմբի մյուս մասը (գրեթե կեսը), պատասխանել է, որ ունեցած ձեռքբերումներին հասել է սեփական ջանքերի շնորհիվ: Սա վկայում է այն մասին, որ Լիբանանի հասարակությունն անհատական սոցիալական զարգացման և աճի համար նպաստավոր պայմաններ է ընձեռում:

Հաջորդիվ ներկայացվում է սեփական ձեռքբերումների պատկերը սեռատարիքային կտրվածքով:

Գծապատկեր 14.

Համայնքի անդամների ունեցած ձեռքբերումների վերագրումն ըստ սեռատարիքային կազմի (% հարցվածներից)




Համաձայն ստացված տվյալների, բոլոր սեռատարիքային խմբերում նկատելի է սեփական ջանքերի շնորհիվ ձեռքբերումներ ունեցած անձանց գերիշխում: Սակայն եթե նույնիսկ անձն ունեցել է որևէ մեկի օգնության կարիքը, ապա, դիմել է ավելի շուտ ազգականներին, քան ընկերներին:

Հետաքրքիր է տեսնել օրինաչափություն հետևյալ երկու հարցերի միջև. ում շնորհիվ են ունեցել ձեռքբերումներ և ում հետ սեփական գործ կհիմնեին: Տվյալները ցույց են տալիս, որ սեփական գործ հիմնելու և կյանքի ձեռքբերումներում ունեցած մասնակցության չափը ուղիղ կապի մեջ չեն (տե՛ս գծապատկեր 15):


Գծապարկեր 15.

Սեփական գործ հիմնելու գործընկերոջ նախընտրության և ձեռքբերումների վերագրման փոխկապվածությունը (% հարցվածներից)



Գծապարկեր 16.

Սեփական գործ հիմնելու գործընկերոջ ընտրությունը՝ կախված համայնքային կառույցներում ներգրավվածությունից և ձեռքբերումներից (% հարցվածներից)




Սեփական ջանքերի կամ ազգականների շնորհիվ ձեռքբերումներ ունեցած հարցվողները գրեթե հավասարապես կիսում են սեփական գործ հիմնելու հնարավոր տարբերակները: Նույնիսկ սեփական գործ հիմնել չցանկացողների շրջանում նկատվում է միևնույն համամասնությունը:

Այստեղ փորձ է արվել գտնել օրինաչափություն հետևյալ երեք հարցերի կապից. համայնքի անդամի ներգրավվածությունը որևէ համայնքային կառույց, ում շնորհիվ է ունեցել ձեռքբերումներ և ում հետ կհիմնի սեփական գործ: Սա թույլ կտա պարզել՝ արդյոք համայնքի անդամների տնտեսական գործունեությունն իրականանում է համայնքային «կանոնների» շրջանակներում, նրա ռեսուրսների հաշվին ու նրա շահերի սպասարկման համար, թե անձն ինքնուրույն է կողմնորոշվում՝ պայմանավորված անձնական դրդապատճառներով: Այսպես, նկատվում է հետևյալ օրինաչափությունը. համայնքային կառույցներում չներգրավված անձիք բացարձակ մեծամասնությամբ կարծում են, որ իրենց ձեռքբերումները պայմանավորված են միայն սեփական ջանքերով, և նախընտրում են տնտեսական գործունեություն ծավալել առանձին, քան ինչ-որ մեկի հետ, իսկ համայնքային կառույցներում ներգրավված անձիք համարում են, որ իրենց ձեռքբերումները մեծամասամբ պայմանավորված են ազգականների աջակցությամբ, իսկ տնտեսական գործունեություն ծավալելիս նախընտրում են համագործակցել կան ազգականների հետ, կան գործել առանձին:


Հաջորդիվ ներկայացվում է համայնքի անդամների մտերմության աստիճանը, սոցիալական շփումների շրջանակներն ընդհանրապես և դրանց տեղը նրանց շփման համակարգում ըստ մտերմության, ինչը տարանջատել ենք առանձին գոտիներով:

Ստացված տվյալների արդյունքում ձևավորվում է հետևյալ պատկերը. ուսումնասիրված խմբի համար մտերմության առաջին գոտում գտնվում են հավասարապես ընտանիքի անդամները և ընկերները, երկրորդում՝ դրացիները, երրորդում՝ հեռու հարազատները և գործընկերները, և չորրորդում՝ համայնքի անդամները:

Գծապարկեր 17.
Համայնքի անդամների ներերևութային աստիճանը
(% հարցվածներից)




Գծապարկեր 18.
Համայնքի անդամների ներերևութային աստիճանն
ըստ տարիքային խմբերի (%)



Գծապատկերից երևում է, որ բոլոր երեք տարիքային խմբերում պահպանվել է վերոնշյալ գոտևորման տրամաբանությունը՝ ոչ նշանակալի շեղումներով:

Գծապատկեր 19.
Համայնքի անդամների՝ մերերիմներին այցելության հաճախականությունը (% ազգական, ընկեր, դրացի խմբերի)




Այն փաստը, որ ընկերներն ընտանիքի անդամների հետ հավասարապես կիսում են սոցիալական հարաբերությունների առաջին գոտին, թույլ է տալիս կարծել, որ ուսումնասիրված անձանց ընկերները հիմնականում հարազատներ են, հաջորդ գոտում գործընկերների առկայությունը ցույց է տալիս, որ համայնքի անդամների շրջանում մեծ թվով մարդիկ ունեն հարազատներ, որոնք միաժամանակ նաև գործընկեր են, և պարզապես ընկերներ:

Տվյալ եզրահանգումը ստուգելու համար անհրաժեշտ է տեսնել միմյանց այցելելու հաճախականությունը: Վերոնշյալ գծապատկերից երևում է, որ համայնքի ներկայացուցիչների այցելությունն ազգականներին, հարևաններին ու ընկերներին իրականանում է գրեթե միևնույն հաճախականությամբ:

Փոքր տարբերությամբ առանձնանում է շաբաթը մի քանի անգամ հարևաններին այցելությունը, ինչը բնական է գուտ տարածական առումով: Չնայած այս դեպքում ևս չենք կարող բացատրել հավանականությունը, որ համայնքի անդամների որոշ խմբի պարագայում հարևանները համընկնում են ազգականների հետ:

Գծապարկեր 20.
Գործընկերոջ ընտրությունը՝ կախված ազգականների հանդիպելու հաճախականությունից (% հարցվածներից)



Այստեղ փորձ է արվել գտնել օրինաչափություն հետևյալ երկու հարցերի կապից. որքան հաճախ են հանդիպում ազգականներին և ում հետ սեփական գործ կհիմնելին: Գծագրից պարզ է դառնում, որ ազգականներին ամենից հաճախ՝ շաբաթը մի քանի անգամ հանդիպող անձինք առավել հաճախ նախընտրում են սեփական գործ հիմնել առանձին: Իսկ ազգականներին հաճախ հանդիպող մարդկանց խմբի հաջորդ նախընտրությունը ազգականների հետ սեփական գործ հիմնելն է: Կարելի է եզրակացնել, որ ազգականներին հանդիպելու հաճախականությունն ուղիղ ազդեցություն չունի սեփական գործ հիմնելիս գործընկերոջ ընտրության որոշման հետ:

Առկա մարտահրավերներն ըստ լիբանանահայերի գնահատականների: Բնակվելով օտարազգի միջավայրում, սփյուռքի ներկայացուցիչները, բացի ընդհանուր կենսագործելու պայմանների նկատմամբ անձնական՝ սեռա-տարիքային, սոցիալական և աղապատացման այլ առանձնահատկություններից, կրում են անհարմարություններ, որոնք պայմանավորված են իրենց էթնիկ պատականելությամբ: Հարկ է նշել, որ կյանքի նույն անհարմարություններն ամեն

Էթնիկ խումբ, լինի տվյալ երկրի հիմնական ազգը, կամ էթնիկ փոքրամասնություն, յուրովի է տանում: Այս համատեքստում կարևոր է պարզաբանել, թե հատկապես ինչն է անհանգստություն պատճառում տվյալ էթնիկ խմբին և ինչով է դա բացատրվում:

Բացի պայմանների գործոնից, գոյություն ունեն բազմաթիվ խոչընդոտներ և գործընթացներ, որոնք տվյալ խմբի համար ծնուն են այս կամ այլ խնդիրները: Այդ կարևորագույն գործոններից է արժեքային համակարգը, որը, կախված լինելով վերևում թվարկված հանգամանքներից, բխում է խմբի մեջ ձևավորված արժեքային կողմնորոշումներից: Վերոնշվածը առավել ցայտուն արտահայտվում է լիբանանահայերի մոտ մտահոգություն ծնող խնդիրների ցանկում՝ որը արտացոլում է համայնքում առկա կենսապայմանները և հարաբերությունների վիճակը:

Համայնքի անդամներին ուղղված մտահոգությունները պարզող հարցը նպատակ ուներ լուծելու մի քանի կարևոր խնդիրներ: Առաջինը՝ թե ինչ չափով է այժմեական ազգային խնդիրներն արտահայտվում են անձնական մակարդակով: Ըստ մեր վարկածի, եթե այն մեծ տեղ գրավի կարծիքների մեջ, ապա նշանակում է, որ համայնքը վտանգված է:

Աղյուսակ 2.
Համայնքի անդամների անհանգստությունները

N	Անհանգստություններ	% հարցվածներից
Անձնային, հոգեբանական		
1	Ոչ հարազատ միջավայրը, հյուր զգալը	2.4
2	Դավաճանությունը	2.4
3	Ապագայի անորոշությունը	1.8
4	Մարդկանց ծուլությունը, պարապությունը	1.8
5	Մարդկանց հոգևոր ջլինելը, անտարբերությունը	1.8
6	Ծնողների օտարվածությունը երեխաներից, ընտանիքի մյուս անդամներից	0.6

7	Սոցիալական միջավայրի բացակայությունը, հարգանքը	0.6
8	Առաջընթացի սահմանափակությունը	0.6
Երկրի վիճակը		
9	Ապահովության անկայունությունը	7.7
10	Կարգուկանոնը, քաղաքիական իրավունքները	4.1
11	Խաղաղության խնդիրը	1.8
12	Գաղափարական վիճակը	1.2
Ֆինանսատնտեսական		
13	Գործազրկությունը	2.4
14	Բարձր հարկերը	0.6
15	Տնտեսական, ֆինանսական դժվարությունները	4.7
16	Տնտեսական անկայունությունը	0.6
Համայնքային/համահայկական		
17	Զուլումը	1.8
18	Նոր սերնդի անտարբերությունը հայրենիքի, լեզվի հանդեպ	0.6
Հայաստանի վերաբերյալ		
19	Հայաստանից արտագաղթը	1.2
Արտաքին հարաբերություններ		
20	Պատերազմ	2.4
21	Կառավարությունը (Լիբանան)	0.6
22	Հանցագործությունները	
Բնապահպանական հարցեր		
23	Ջուրը	2.4
24	Աղբահանության հարցը	1.8
25	Օդի ապականությունը	1.2
26	Էլեկտրականությունը	1.2
Ամեն ինչ անհանգստացնում է		2.4
Ոչինչ չի անհանգստացնում		9.5
Դժվարացել է պատասխանել		40.2

Երկրորդ խնդիրն էր՝ պարզել համայնքի ու միջավայրի հարաբերության տրամաբանությունն անձնական մակարդակով և էթնիկ պատկանելության զգացումի ու դրա հետ կապված անհանգստության չափանիշը: Այսպես օրինակ, որպես անհանգստություն է նշվել հյուր լինելու զգացողությունը, նոր սերնդի անտարբերությունը ազգային նկատմամբ և այլն:

Երրորդ խնդիրը կապված է պատասխանների բնույթի հետ: Պատահական չէ, որ այն տրված հարցը բաց էր, և հարցվողը տալիս էր իր ձևակերպումները: Դա հնարավորություն տվեց ստանալ, այսպես կոչված, անհանգստությունների ամբողջական ցանկ և չափագրել դրանք էթնիկ խմբի համար որոշակիորեն խաղաղ (ոչ արտառոց) պայմաններում: Սա հնարավորություն է տալիս լայն համեմատականներ անցկացնել տարբեր կացություններում գտնվող հայերի միջև:

Ինտեգրված լինելով հիմնական հասարակության մեջ, միաժամանակ հանդիսանալով ինքնակազմակերպման բարձր աստիճան ունեցող ազգային փոքրամասնություն, Լիբանանի հայ համայնքի ներկայացուցիչներն ունեն անձնական, համայնքային, համահայկական, հայաստանյան ու լիբանանյան մտահոգություններ ու անհանգստություններ (աղյուսակ 2): Միայն 10 տոկոս լիբանանահայեր մտահոգող և անհագստացնող խնդիրներ չունեն: Իսկ 40 տոկոսը դժվարանում է նշել որևէ անհանգստություն: Ամենաշատ մտահոգությունները կապված են բնակության երկրի վիճակի հետ (15%), ապա՝ սեփական անձնային անհանգստություններն են (12%), որին հաջորդում են ֆինանսատնտեսական (8%) և բնապահպանական հարցերը (6%) և այլն:

Անձնական և հոգեբանական անհանգստություններից հետաքրքրական է նշել ոչ հարազատ միջավայրի և հյուր լինելու զգացողությունը: Լիբանանի հիմնական խնդիրները նրանց ավելի շատ են մտահոգում, քան հայկական համայնքինը: Հայաստանի մասին մտահոգությունները չեն արտահայտվում անձնական մակարդակով:

Բեյրութահայերի մտահոգությունների շարքը, ըստ առաջարկված խմբավորման սկզբունքի, արտահայտում է այն իրողությունը,

որ յուրաքանչյուր անձ առաջին հերթին մտահոգ է իր կյանքի պայմաններով ու սեփական զգացողությամբ, ապա՝ այն խնդիրներով, որոնք հանրային են՝ կապված են բնակության երկրի, համայնքի, հայրենիքի հետ:


Միգրացիոն տրամադրություններ: Լիբանանահայերի շրջանում միգրացիոն իրականությունն իմաստավորելու համար հարկավոր է առանձնացնել դրա ընթացքի վրա ազդող մի շարք օբյեկտիվ գործոններ: Հարկ է նշել, որ նշանակալի չափով նման դեր կատարում է Մերձավոր Արևելքում ձևավորված անբարենպաստ քաղաքական իրադրությունը, որը հանգեցրել է տնտեսական անկման, ինչպես նաև 1970-1980-ական թթ. Լիբանանում տեղի ունեցած արտակարգ իրադարձությունները: Նշվածը, անկասկած, ձևավորում է պատկերացումների ու նպատակադրումների ընդհանուր խորպատկերը՝ ինչպես Լիբանանի ամբողջ բնակչության, այնպես էլ նրա առանձին հատվածների, մասնավորապես հայերի համար: Ենթադրվում է, որ այդ երկրում տեղի ունեցող գործընթացների էությունը բացահայտող առավել հստակ ցուցանիշը միգրացիոն իրականությունն է, որը ներառում է այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արդի միգրացիոն կազմը, տարածական շարժունությունը, ուղղվածությունը և նրա ծնող գործոնները:

Միգրացիոն տրամադրությունները և նրանք առաջացնող պայմանները պարզաբանելու համար առանձնակի տեղ են գրավում էմպիրիկ հետազոտության նյութերը, որոնք ընտրանքային համախմբության շրջանակներում օգնեցին պատկերացում կազմել հայ բնակչության տարածական տեղաշարժերի մասին: Հետազոտության տվյալների հիման վրա փորձ է արվում որակապես վերլուծելու Լիբանանի հայ համայնքի միգրացիոն իրավիճակը և ի հայտ բերելու նրա որոշ հատկանշական գծեր երկու դիտանկյունից՝ հնարավոր և հետահայաց:

Վերջին պատերազմից ժառանգություն մնացած տնտեսական ծանր կացությունը և Մերձավոր Արևելքում լարվածության խորացումը անդրադարձան այդ երկրում ապրող մարդկանց կյանքի շատ

ուղորտների: Այսպես, երբեմնի ծաղկուն հայկական համայնքի շատ անդամներ այժմ կանգնած են ընտրության առջև. կամ փոխել բնակության վայրը, կամ էլ մնալ երկրում՝ ակնկալելով իրադարձությունների բարենպաստ ելք: Նման պատկեր է ցույց տալիս նաև հարցման տվյալները: Հարցված լիբանանահայերի 47 տոկոսը որոշել է մնալ, 20 տոկոսը արտագաղթելու հարցում անորոշության մեջ է, իսկ 33 տոկոսը պատրաստվում է լքել երկիրը: Փորձագետները նույնպես համակարծիք էին, որ մնալն ընտրելու դեպքում գործում է ինքնապահպանման բնագոյը, որը թույլ չի տալիս Լիբանանի համեմատական կայունությունը փոխարինել ուրիշ երկրի ձգող անհայտությամբ, իսկ Հայաստան տեղափոխվելու դեպքում՝ էթնիկական հայրենիքում հարմարվելու կանխահայտ դժվարությունների վախը: Փորձագետները դժվարությունների թվում նշել են աշխատատեղերի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում բարոյական ու նյութական աջակցություն ցույց տվող շրջապատի բացակայությունը:

Գծապատկեր 21.
Միգրացիայի մտադրությունները և ուղղությունները
լիբանանահայերի շրջանում (% հարցվածներից)



Հարցման տվյալները նաև ցույց են տալիս, որ հարցվածների 25 տոկոսը Հայաստանն է ընտրել որպես միգրացիայի հավանական ուղղություն: Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական անկայունությունը և գործարարության համար անբարենպաստ պայմանները, կարելի է ենթադրել, որ նրանք Հայաստանն ընկալում են որպես հայրենիք, որպես բացարձակ արժեք, որը նրանք իրենց դաս-


տիարակության բերումով ընդունում են ադապտացման դժվարությունների ամբողջությամբ հանդերձ:

Գծապատկեր 21-ից երևում է, որ այլ երկրներ արտագաղթել ցանկացողները կազմել են ընդամենը 8 տոկոս: «Այլ երկրներ» արտահայտությունը կոնկրետացնելով նշենք, որ, փորձագետների խոսքերից դատելով, հայ համայնքի ներկայացուցիչները, Լիբանանում ստեղծված կյանքի թանկության պատճառով երկրի ներսում տեղափոխվելուց բացի, արտագաղթի համար ընտրում են հարևան արաբական երկրները, ինչպես նաև ԱՄՆ-ը և Կանադան: Սակայն, փորձագետների կարծիքով, վերջերս նկատվում է գաղութների թվի կրճատում: Մեջբերենք փորձագետներից մեկին, որը ոչ միայն մատնանշում է միգրացիայի ուղղությունները, այլև բացատրում է վերջին տարիներին միգրացիոն հոսքի կրճատման պատճառը: «Քաղաքացիական պատերազմից հետո բազմաթիվ հայեր սկսեցին արտագաղթել արաբական երկրներ, Ամերիկա և Կանադա, և միայն փոքր մասն է ճանապարհ ընկնում դեպի Եվրոպա: Այսօր երկրից կատարվող արտագաղթը ավելի փոքր չափեր ունի լոկ այցագրերի ստացման դժվարությունների կամ տեղափոխման համար անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով...»: Լուս Անջելեսի հայ համայնքի փորձագետներից (ՍԱՄ ծրագրի շրջանակներում) մեր ստացած հարցազրույցները հաստատում են լիբանանահայ փորձագետների ասածը: Նրանց կարծիքով, վերջերս դիտվում է Լուս Անջելեսի համայնքի շարքերի համալրում, այսպես կոչված, ճգնաժամային երկրների հայկական համայնքներից: Դրանց թվում նշված են Լիբանանը և Մերձավոր Արևելքի այլ երկրներ:

Խոսելով վերջին տարիներին դեպի լիբանանահայ համայնք «ներհոսքի» մասին, տեղին է նշել, որ, փորձագետների գնահատման համաձայն, դա տեղի է ունենում հիմնականում սիրիահայերի հաշվին, որոնք «...չեն հասնում մինչև ԱՄՆ և ի վերջո ընտրում են Լիբանանը: Սակայն դա տեղի է ունենում ոչ թե երկրի բարենպաստ պայմանների պատճառով, այլ տեղափոխվելից մեծ հեռավորության համար միջոցների անբավարարության և ԱՄՆ մուտքի այցագիր ստանալու բարդության պատճառով...»:

Հարցված լիբանանահայերի շրջանում արձանագրվող միգրացիոն տրամադրությունները մեծ մասամբ բնորոշ են երիտասարդ և միջին սերունդներին, ինչը հստակորեն երևում է գծապատկեր 22-ից: Ստեղծված իրավիճակը մեկնաբանելիս փորձագետները նշում են, որ ավագ սերունդը, չնայած իր մնալու որոշմանը, չի դատապարտում երիտասարդությանը: Ահա առավել բնորոշ մեկնաբանություններից մեկը. «... առկա են որոշակի կասկածներ երկրի ապագայի առնչությամբ: Ավագ սերունդը դեռ կարող է անհայտ ապագա ունեցող երկրում մնալ հանուն համայնքի պահպանման, բայց կրտսեր սերունդը լքում է այն: Անցյալում իրար հանդիպելիս հայերը հարցնում էին, թե ինչպես են գործերը: Հիմա հարցնում են մեկ բան՝ զավակներիդ ո՞ր կողարկես»:

Գծապատկեր 22.
Միգրացիայի ցանկությունն ըստ տարիքային խմբերի
 (% հարցվածներից)




Գծապատկեր 22-ում նշված են լիբանանահայերի միգրացիայի նախընտրելի ուղղությունները, ինչպես նաև տեսանելի են միգրանտների տարիքային խմբերը՝ մեծ մասամբ երիտասարդություն և աշխատունակ խմբին:

Արական և իգական սեռի լիբանանահայերի մտադրությունների հարցում նկատվում է որոշակի օրինաչափ առանձնահատկություններ: Ընդհանուր առմամբ, կանայք ավելի քիչ են հակված տե-

ղավոխվել, իսկ տղամարդկանց զգալի մասը, որպես միգրացիայի հավանական ուղղություն ընտրում է, Հայաստանը: Համայնքում կանանց տեղաշարժի ցածր ցուցանիշները, հավանաբար, կապված են մի կողմից հայերի ավանդական դաստիարակության սեռային առանձնահատկության հետ, մյուս կողմից՝ մեկնելու միջոցների անբավարարության հետ:

Առկա նյութի հիմա վրա հնարավոր դարձավ ուսումնասիրել լիբանանահայերի սոցիալական կարգավիճակի փոխկապվածությունը նրանց միգրացիայի ցանկության և ուղղության ընտրության հետ:

Գծապատկեր 23.
Միգրացիայի ցանկության կապը սոցիալական կարգավիճակի հետ (% հարցվածներից)



Գծապատկեր 23-ից երևում է, որ Լիբանանյան հայ համայնքի մասնագետների սոցիալ-պրոֆեսիոնալ խմբի (A խումբ) ներկայացուցիչներն առավել հակված են տեղափոխվել Հայաստան կամ չեն ցանկանում արտագաղթել ուրիշ երկրներ: Ձեռնարկատերերը հիմնականում չեն ցանկանում տեղափոխվել, ինչը բնական է: Միջին տեխնիկական որակավորում ունեցող մասնագետների խմբի ներկայացուցիչները կազմում են չկողմնորոշվածների խումբը: Ստացված արդյունքները թերևս բացատրվում են նրանով, որ միջին տեխնիկական որակավորումը պահանջարկ ունի և թույլ է տալիս ամենուրեք աշխատանքի տեղավորվել:

Հաշվի առնելով, որ Բեյրութի հայ համայնքը բաղկացած է որոշակի տարածաշրջաններից եկած անձանցից³, հարկ է դիտարկել, թե «ելքի» տարածաշրջանը կապ ունի՞ արդյոք միգրացիայի ուղղության ընտրության կամ Հայաստան տեղափոխվելու որոշման հետ:

Ստացված տվյալների հիման վրա ի հայտ եկավ այսպիսի օրինակափոխություն. Լիբանանում կամ Սիրիայում և Թուրքիայում ծնված հարցվողները նախընտրում են մնալ երկրում (52%) կամ տեղափոխվել Հայաստան (18%): Նմանօրինակ մտադրությունների պատճառ կարող է հանդիսանալ հայերի ազգային արժեքների անխաթարությունն ապահովող մերձավորարևելյան հարմարավետ միջավայրը և այդ առնչությամբ ի հայտ եկած կապվածությունը սեփական «փոքր» հայրենիքին: Իբրև միգրացիայի հնարավոր ուղղություն Հայաստանն ընտրած խմբի մտադրությունը կարելի է բացատրել ազգային գիտակցությամբ պայմանավորված կայուն արժեքային կողմնորոշումներով: Համայնքային կյանքի այդ երևույթի առավել կոնկրետ բացահայտման նպատակով դիտարկենք համայնքային գործունեության շրջանակներում հայերի ակտիվության և միգրացիայի մտադրությունների փոխադարձ կապի բնույթը:


Հետաքրքիր էր պարզել, թե, մի կողմից, հարցվողների տեղափոխվելու մտադրությունը կախված է արդյոք ազգային համայնքային կառույցներում նրանց ներգրավվածության աստիճանից, և մյուս կողմից, թե շարժման ինչպիսի վեկտոր է ընտրում նրանց այն մասը, որը ներգրավված է ազգային կազմակերպություններում:

Ստացված տվյալների համաձայն պարզվել է, որ կեցության երկրում մնալու և սեփական գործունեությունը շարունակելու ցանկությունը բնորոշ է համայնքային կառույցներում գործող բոլոր հարցվածներին: Հայաստան տեղափոխվելու հավանական ցանկություն հայտնաձևների առաջատարները ազգային կառույցների առավել ակտիվ անդամներն են: Վերլուծությունը ցույց տվեց, որ ազգային կառույցներում բարձր պաշտոններ զբաղեցնողները, ինչպես նաև ազգային միջոցառումների հովանավորներն ու կազմակերպիչները նախընտրում են մնալ Լիբանանում: Սա օրինակափոխ է. խոսքը

3 Տես՝ *Հայ սփյուռք. Հանրագիտարան*, Երևան, 2003, էջ 290:

համայնքի ճակատագրի նկատմամբ ոչ անտարբեր հայ հասարակական խավերի մասին է, որոնք համայնքում նաև ունեն որոշակի կարգավիճակային դիրքեր և ըստ այդմ տնտեսական կայունություն: Թվարկված փաստարկները նրանց բավականաչափ ամուր կերպով պահում են հարազատ երկրում: Այս առումով համեմատաբար ակտիվ անձինք նույնպես հիմնականում հակված չեն հեռանալ Լիբանանից, բայց նրանց մեջ երկնտողների տոկոսը մոտիկ է Հայաստան կամ այլ երկրներ տեղափոխվել ցանկացողների տոկոսին: Ասվածից կարելի է եզրակացնել, որ մոտ ապագայում համայնքի ազգային կառույցներից լուրջ արտահոսք չի սպասվում, հետևաբար կարելի է կանխատեսել լիբանանահայերի էթնոսոցիալական գործունեության համեմատական կայունություն, համեմայն դեպս՝ ամենամոտ ժամանակներս:

Գծապարկեր 24.
Միգրացիայի ցանկության կապը համայնքային կազմակերպություններում հայերի գրադեցրած դիրքի հետ
 (% հարցվածներից)



Հետազոտության հաջորդ խնդիրը Հայաստան տեղափոխվելու ցանկության և հայրենիք այցելելու հաճախականության հարաբերակցության բացահայտումն էր: Հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստան տեղափոխվել ցանկացողների ամենաբարձր տոկոսը դիտվում է այն ներկայացուցիչների շրջանում, որոնք հայրենիք այցելել են 2-3 տարին մեկ: Հավանական ցանկացողների գրեթե միան-

ման տոկոս դիտվել է «Տարեկան 2-3 անգամ», «Ամեն տարի» և «Չեն այցելում» խմբերում: Հայրենիք չայցելած անձանց մեջ տեղափոխվել ցանկացողների տոկոսը չնչին էր: Ուշադրություն դարձնելով այն փաստին, որ Հայաստան հաճախ (տարեկան 2-3 անգամ և ամեն տարի) այցելող հարցվածները չեն ուզում ապրել հայրենիքում, կարելի է եզրակացնել, որ այնտեղ հաճախակի կատարվող այցելությունների ընթացքում Հայաստանի կյանքի որոշակի դժվարությունների վերաբերյալ լավատեղյակությունը կանխում է նույնիսկ հավանական վերաբնակության ձգտողների հոսքը: Մինչդեռ 2-3 տարին մեկ կատարվող այցելությունները հնարավորություն են տալիս գնահատելու դրական փոփոխությունները և միանգամայն ընդունելի համարելու տեղափոխման գաղափարը:

Հետազոտության ընթացքում հնարավոր դարձավ ի հայտ բերել այսպիսի օրինաչափություն: Հայաստան տեղափոխվել ամենաշատ ցանկանում են այն անձինք, որոնք Հայաստան այցելել են որպես զբոսաշրջիկներ: Այն խումբը, որի ներկայացուցիչները Հայաստանում գործարարությամբ են զբաղվել, ամենափոքր տոկոսն է կազմում տեղափոխվել ցանկացողների մեջ:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ եթե ժամանցի նպատակներով Հայաստան կատարվող այցելությունների ժամանակ հայրենիքի պատկերը ներկայանում է փոքր-ինչ իդեալականացած տեսքով, ապա գործնական ուղևորությունների ժամանակ երևան են գալիս ձեռներեցության հետ կապված բազմաթիվ բարդություններ, ինչպես նաև լիբանանահայերի համար բացահայտվում են երկրի ամենօրյա կյանքի ուրիշ սոցիալական խնդիրներ: Բնական է, որ այս ամենը համայնքի ներկայացուցիչներին հետ է պահում Հայաստանում բնակություն հաստատելու վերաբերյալ որոշում ընդունելուց:

Մեր տրամադրության տակ գտնվող տվյալները հնարավորություն տվեցին ի հայտ բերել «հայրենիքի մասին պատկերացումների» և Հայաստան ներգաղթելու ցանկության կապը: Հետազոտության ընթացքում պարզվեց, որ համայնքի այն անդամները, որոնք նշել էին, թե «հայրենիք» հասկացությունն իրենց համար «Հայաստանն» է, առավել շատ են հակված տեղափոխվելու Հայաստան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքը ձևավորում է անհատի սոցիալ-մշակութային հատկանիշները, օգնում յուրացնելու սովյալ միջավայրում գոյություն ունեցող արժեքները և վարքի նորմերը, մեր հարցաքննում որոշակի ուշադրություն էր հատկացվել տարածական տեղաշարժերին հակված անձանց՝ ըստ նրանց ընտանիքի կազմի: Ստացված տվյալները վկայում են, որ (մնալ ցանկացողների մեջ) կայունության ամենամեծ տոկոսն առկա է պարզ ընտանիքներում (42%), իսկ միայնակ մարդիկ հիմնականում ուզում են մեկնել ուրիշ երկրներ: Բարդ ընտանիքներում գերակշռում է տեղափոխվել կամ մնալ ցանկացողների գրեթե նույն տոկոսը: Միայնակ մարդկանց և բարդ ընտանիքների տեղաշարժերին բարձր հակվածության վերաբերյալ ստացված արդյունքները բացատրելով նշենք, որ միայնակ մարդկանց ընտրությունը պայմանավորված է միանձնյա ընդունվող որոշմամբ, իսկ բարդ ընտանիքների դեպքում՝ տեղափոխմանն առնչվող կարծիքների բազմազանությամբ:

Ազգային ինքնությունը պայմանավորող չափանիշների (ինչպիսիք են մայրենի լեզվի կիրառությունը, կրոնական հավատարմությունը) և միգրացիայի ցանկության հարաբերակցությունը տեսանելի դարձնելու նպատակով, հարցվածների- պատասխանների հիման վրա, կազմվել են համապատասխանաբար 3 և 4 աղյուսակները:

Աղյուսակ 3.

Լեզվական վարքի և միգրացիոն պրամադրությունների կապը (% հարցվածներից)

Տանը խոսում են՝	Տեղափոխվելու տրամադրությունները և ուղղությունները				
	Դեպի Հայաստան	Դեպի այլ երկիր	Մտադիր չի	Դժվարա- նում է պատաս- խանել	Ընդա- մենը
Հայերեն	31	10	62	27	100
Արաբերեն	1	0	1	0	100
Անգլերեն	0	0	0	1	100
Ընդամենը	32	10	63	28	100

Ըստ աղյուսակ 3-ի, երևան եկավ այսպիսի պատկեր. այն ընտանիքներում, որտեղ հարցվածները խոսում են հայերեն, առավել մեծ տոկոսներ են կազմում արտագաղթել չցանկացողները (62%) և հավանական հայրենադարձները (31%): Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ հարցվածների 93 տոկոսը «փոքր հայրենիքում» ապրելով, մայրենի լեզվով խոսելով՝ կարևոր է համարում իր ազգային հատկանիշների պահպանումը: Նրանց 62 տոկոսի համար հարմարավետ է սեփական ընտրությանը չխոչընդոտող երկրում ապրելը, իսկ 31 տոկոսը տեղափոխության դեպքում իր ապագան տեսնում է բացառապես մայր հայրենիքում:

Աղյուսակ 4.

**Կրոնաբաժնության և միգրացիոն տրամադրությունների միջև կապը
(% հարցվածներից)**

	Տեղափոխվելու տրամադրությունները և ուղղությունները				
	Հայաստան	Այլ երկիր	Մտադիր չի	Դժվարանում է պատասխանել	Ընդամենը
Խորը հավատացյալ	15	6	39	14	100
Պարզապես հավատացյալ է	15	4	21	10	100
Անտարբեր է	2	0	1	2	100
Չի հավատում	0	0	1	1	100
Ընդամենը	32	10	62	27	100

Երկրորդ աղյուսակից (4) երևում է, որ հարցման մասնակիցների մեջ խորապես հավատացյալ անձինք (39%) և պարզապես հավատացյալները (21%) նախընտրում են չփոխել կեցության երկիրը: Այդ նույն խմբերում հարցվածների 15-ական տոկոսը Հայաստան տեղափոխվելու մտադրություն է արտահայտել: Կրոնը դիտարկելով որպես էթնոպահպան գործընթացների առաջատար բաղադրիչը, նշենք, որ հարցման մասնակիցների 60 տոկոսը հավատացյալ է, ին-

չը, նախ և առաջ, մեկ անգամ ևս ապացուցում է լիբանանահայ համայնքի նվիրվածությունը համազգային արժեքներին, և երկրորդ, այս առումով հաստատում է ապրուստի հարմարավետությունը փոքր հայրենիքում: Այդ խմբում 15 տոկոսի ընտրությունը, որը հավանական միգրացիայի ուղղություն է ընտրել իր պատմական հայրենիքը, դարձյալ կարելի է բացատրել ազգային արժեքների հարգման ոգով ստացած դաստիարակությամբ:

Պետք է նշել, որ հետազոտության նպատակներն են եղել բերության համայնքում ձևավորված միգրացիոն իրավիճակի պարզումը և դրա ինտենսիվության ու ուղղվածության վրա մեր կարծիքով կարևոր որոշ գործոնների ազդեցության բացահայտումը: Տվյալ տեսանկյունից հետազոտության հիմնական հետևությունը դարձավ այն, որ այսօր, երկրի սոցիալական ու տնտեսական անկայունության պայմաններում Լիբանանի հայ համայնքի հարցված ներկայացուցիչների մի մասը իր համար ընտրել է ադապտիվ ռազմավարությունների հավաքակազմ և միգրացիան օգտագործում է որպես դրանց հասնելու գործիք: Մակայն միգրացիայի չափերն առայժմ էական ազդեցություն չեն գործում ամբողջությամբ վերցրած համայնքի «պահպանվածության» վրա: Հարցվածներից նրանք, ում գործունեությունն ապահովում է համայնքի հետագա էթնոսոցիալական զարգացումը, հիմնականում մտադիր չեն արտագաղթել:

Այն հարցվածները, ում ընտանիքներում արմատավորված են ազգային արժեքները (օրինակ, մայրենի լեզուն, կրոնը), նույնպես կայուն են իրենց մնալու ընտրության մեջ: Իհարկե, որոշակի երկյուղներ է առաջացնում երկիրը լքելու երիտասարդ սերնդի ցանկությունը, սակայն, հաշվի առնելով նրանց շարժառիթները և, ինչպես նշել են փորձագետները, «սեփական համայնքի հանդեպ սիրո ոգով ստացած դաստիարակությունը», կարելի է եզրակացնել, որ երկրի տնտեսական կացության կայունացմանը զուգընթաց հնարավոր է նաև հետադարձ հոսք: Հետազոտության մեջ որպես միգրացիայի «հավանական» ուղղություն արտահայտված հայրենադարձական տրամադրությունները նույնպես կարելի է գնահատել որպես համայնքի ներսում էթնիկության պահպանվածության դրսևորման հաստատում:

Տեղին է նշել, որ թեև մեր ընտրած ցուցանիշները որոշակի լույս սփռեցին համայնքի միգրացիոն իրավիճակի վրա, գոյություն ունեն նաև բազմաթիվ այլ ցուցիչներ, որոնք ընդունելի են ինչպես առանձին խմբերի, այնպես էլ ամբողջությամբ վերցրած համայնքի հետազոտության համար: Ուստի մենք հակված ենք այն մտքին, որ այս ուղղությամբ հետագա հետազոտությունների անցկացումը, ինչպես նաև մարդկանց լայնամասշտաբ հարցումը կօգնեն ի հայտ բերելու Բեյրութի համայնքի միգրացիոն իրավիճակի ամբողջական պատկերը և կանխատեսելու դրա հետագա էթնոսոցիալական զարգացման միտումները:



Այսպիսով, ստացված էթնոսոցիոլոգիական նյութերի վերլուծությունը ցույց տվեց, որ լիբանանահայերի շրջանում կատարվող սոցիալական տեղաշարժերը բնականոն են և ընթանում են համայնքի անդամների մասնագիտական և կրթական զարգացման ուղով: Բավականին արագընթաց սոցիալական տեղաշարժերի ճնշող մեծամասնությունը վերընթաց է. ակնառու է հայերի սոցիալական կազմի բարդացման և բազմաշերտացման միտումը: Սա վկայում է, մի կողմից, քաղաքական և սոցիալ-տնտեսական բարենպաստ միջավայրի առկայության, մյուս կողմից, հայ ազգի ներկայացուցիչների՝ վերընթաց սոցիալական զարգացման հակվածությանը մասին: Դրան հավանաբար նպաստում է նաև այն հանգամանքը, որ համայնքը շատ կազմակերպված է, և այնտեղ գերակշռում են բավականին միանման սոցիալական տեղաշարժեր խթանող արժեքները: Վերջիններիս առկայությունը և ազդեցությունը կարելի է բացատրել լիբանանահայերի մոտ ներէթնիկ միջանձնային կապերի հաճախությամբ և ամբողջամբ՝ լինի դա ընտանիքի ներսում և արյունակցական հարաբերություններում, թե ընկերական ու գործնական միջավայրերում և համայնքային կառույցներում: Ինչպես երևում է, որ արագ զարգացող նման պայմաններում լիբանանահայերը ոչ միայն պահպանում և վերարտադրում են սոցիալական հարաբերությունների առանձնահատուկ հատկանիշները, այլ նաև ամրագրում և զարգացնում են դրանք՝ տալով նոր նրբերանգներ: Այս մասին են վկայում հետազոտության մեջ ընդգրկված, այսպես կոչված, ստուգիչ

հարցադրումները, որոնք հնարավորություն ընձեռեցին ներթափանցել այդ հարաբերությունների ավելի խորքային շերտեր՝ դեպի վարքագծի և դրդապատճառների իրական հիմքեր:

ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅԻՐ


Լիբանանահայերի էթնոմշակութային միջավայրը բնորոշվում է մշակութային կյանքի այն համակարգով, որը վերարտադրվեց ազգի որոշակի մասի հոծ զանգվածի մոտ՝ բարենպաստ քաղաքական, տնտեսական և էթնոսոցիալական պայմաններում: Հետազոտության համար կարևոր էր պարզաբանել, թե հոգևոր կյանքի որ ոլորտներում և ինչպես է արտահայտվում էթնիկ բաղադրիչը: Այս համատեքստում բավականին հետաքրքրական է այդ բաղադրիչի բնույթի և ձևի արտահայտման տրամաբանությունը այլազգի միջավայրում: Նման գործընթացները բացահայտելու և օրինաչափությունները պարզելու նպատակով հետազոտության ընթացքում հավաքագրվել են այնպիսի տվյալներ, որոնք ընդունակ են ցույց տալ լիբանանահայերի հոգևոր կենսակերպի առանձնահատկության էթնիկ տարրերը: Այն վերաբերվում է լիբանանահայերի գիտակցության և վարքագծի այնպիսի տարրերին ինչպիսին են՝ տեղեկատվական դաշտը, ազգային հոգևոր դիմագիծը և դրա արտացոլումը գիտակցության և վարքագծի տարրերում, արժեքային կոմսորոշումները, լեզուն ու կրթությունը, կրոնատաժությունն ու եկեղեցին, վերաբերմունքն ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ, ազգային ականավոր գործիչների, ազգի ու հայրենիքի ընկալումները:

Տեղեկատվական դաշտ. մեդիա լսարանը: Բեյրութի հայկական համայնքն ունի սփյուռքի թերևս ամենաբազմազան ու հագեցած էթնիկ մեդիա⁴ դաշտը: Հայկական լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, ավելի շատ են սպառվում, քան հիմնական կամ տեղա-

4 Էթնիկ մեդիա է համարվում լրատվամիջոցը, որն արտադրվում է տարբեր երկրներում բնակվող ներգաղթյալների, ռասայական, էթնիկ և լեզվական փոքրամասնությունների, ինչպես նաև տեղաբնիկների համար և նրանց կողմից (Matsaganis, M.D., Katz, V.S., Ball-Rokeach, S.J., *Understanding Ethnic Media: Producers, Consumers, and Societies*, SAGE Publications, Inc., 2011, էջ 10):


կան ՋԼՄ-ները: Սակայն, կախված մեղիայի տեսակից, հայկական և հիմնական լրատվամիջոցներից օգտվելու հաճախականությունը փոխվում է: Այսպես, համայնքի անդամները հեռուստատեսությունից օգտվելիս ավելի շատ նախընտրում են հիմնականը, իսկ ռադիոյի և մամուլի պարագայում՝ հայկականը:

Գծապարկեր 25.
Էթնիկ և հիմնական մեղիայի սպասման հաճախականությունը
(1-3 միավոր, որտեղ 1-ը նշանակում է երբեք, 2-ը՝ երբեմն, 3-ը՝ հաճախ)



Հետաքրքիր է դիտարկել ՋԼՄ-ներից հաճախ օգտվողների նախընտրությունները, ովքեր ներկայացնում են առավել կայուն լսարան:

Գծապարկեր 26.
ՋԼՄ-ներից հաճախ օգտվող հարցվածների
ընտելյակարվության աղբյուրները (% հարցվածներից)



Աղյուսակ 5.
Հայկական լրատվամիջոցների տեղեկարկության մեջ
հեղափոխությունների շրջանակները (% հարցվածներից)

Հայաստանի մասին	
Մշակույթ, պատմություն, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի	16,1
Քաղաքական, անվտանգություն	12,5
Սոցիալական (ներառյալ՝ միգրացիա)	4,2
Տնտեսական	3,6
Ազգային (հայապահպանություն, հայ դատ)	1,2
Երկրի վիճակը	0,6
Ամեն ինչ՝ կապված ՀՀ հետ	8,9
Սփյուռքի այլ համայնքների մասին	
Մշակույթ, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի	7,1
Քաղաքական, անվտանգություն	3,9
Ազգային (հայապահպանություն, հայ դատ)	3,9
Սոցիալական (ներառյալ՝ միգրացիա)	2,6
Տնտեսական	0,6
Միայն իր համայնքի մասին	1,3
Ամեն ինչ՝ կապված սփյուռքի հետ	11,0
Լիբանանի հայ համայնքի մասին	
Մշակույթ, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի	6,5
Զեռնարկ, հանդիսություն, տոնակատարություն, անցու-դարձ	3,3
Քաղաքական, անվտանգություն	2,0
Տնտեսական	1,3
Ազգային (հայապահպանություն, հայ դատ)	1,3
Սոցիալական (ներառյալ՝ միգրացիա)	0,7
Ամեն ինչ՝ կապված համայնքի հետ	16,3

Ըստ հետազոտության տվյալների, Լիբանանի հայ համայնքում ԶԼՄ ակտիվ լսարանը կրկնակի քիչ օգտվում է տեղական հեռուստատեսությունից և նույնքան շատ էթնիկ մամուլից: Հաշվի առ-

նելով մամուլի բովանդակությունը, ակնհայտ է, որ հայկական համայնքի անդամներն ունեն ազգային բնույթի տեղեկատվության պահանջ, ապրում են համայնքային կյանքով, կապ են պահում հայրենիքի հետ, ինչպես նաև փորձում են պահպանել իրենց ինքնությունը, պատմական հիշողությունն ու էթնոմշակութային արժեքները, որոնք տարածվում են մամուլի միջոցով:

Հայկական մեդիայում ազգային թեմաներով տեղեկատվությունը բավականին բազմազան է և կարող է վերաբերել ինչպես Լիբանանի հայկական համայնքին, այնպես էլ սփյուռքի այլ համայնքներին և Հայաստանին:

Հատկանշական է, որ հարցվածներն առաջին հերթին հետաքրքրված են հայկական մշակույթով, պատմությամբ, գիտակրթական ու սպորտային նվաճումներով: Հայաստանի վերաբերյալ տեղեկատվական հոսքում, որը կազմում է տեղեկատվական դաշտի գրեթե կեսը (47%), լիբանանահայերն ավելի շատ հետաքրքրվում են հայրենիքի քաղաքական և անվտանգության հարցերով: ՀՀ սոցիալ-տնտեսական հարցերը նրանց քիչ է մտահոգում: Հայկական սփյուռքի կամ առանձին համայնքների վերաբերյալ տեղեկատվության մեջ, որը հետաքրքրում է ամեն երրորդ լիբանանահային, նույնպես մշակույթին հաջորդում է քաղաքական և անվտանգության հարցերը: Լիբանանի հայ համայնքի մասին լուրերին հետևում է յուրաքանչյուր հարցված: Մակայն իրենց համայնքի վերաբերյալ լիբանանահայերն ավելի շատ ամենօրյա տեղեկատվության կարիք ունեն: Նրանք ավելի շատ հետևում են համայնքում տիրող անցուդարձին, կազմակերպվող միջոցառումների տեղեկատվությանը և այլ նման լուրերին: Բոլոր կտրվածքներով՝ հայրենիք, սփյուռք, համայնք, ազգային հարցերը նույնպես մնում են մտահոգիչ:

Հարկ է դիտարկել հայկական լրատվամիջոցների տեղեկատվության մեջ հետաքրքրությունների շրջանակներն ըստ սեռի և տարիքի: Ըստ հարցման տվյալների, պարզորոշ է կանանց և տղամարդկանց նախնորությունների տարբերությունները. կանայք առավել հակված են մշակույթ, պատմություն, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի թեմաներին, տղամարդիկ՝ քաղաքական, անվտանգություն,

սոցիալական: Մնացած թեմաների նկատմամբ երկու սեռերը միանման վերաբերմունք են ցուցաբերում (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6.
Հայկական լրատվամիջոցների տեղեկատվության մեջ հետաքրքրությունների շրջանակները ըստ սեռի
(% հարցվածներից)

	Արական	Իգական
Մշակույթ, պատմություն, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի	16.1	24.6
Քաղաքական, անվտանգություն	19.4	13.0
Սոցիալական (ներառյալ՝ միգրացիա)	8.1	3.0
Տնտեսական	4.8	4.3
Ազգային (հայապահպանություն, հայ դատ)՝ կապված սփյուռքի հետ	16.1	17.4
Ամեն ինչ՝ կապված ՀՀ հետ	11.3	13.0
Ամեն ինչ՝ կապված իր համայնքի հետ	21.0	20.4
Ձեռնարկ, հանդիսություն, տոնակատարություն, անցուղարձ	3.2	4.3

Տարբեր սեռատարիքային խմբերի մոտ թեմաների նախընտրությունների նմանություն կա, միայն միջին սերնդի մոտ նկատվում է ավելի շատ հետաքրքրություն քաղաքական և անվտանգության հարցերի նկատմամբ: Նաև նկատելի է երիտասարդների հետաքրքրվածությունը հայ դատի, հայկական մշակույթի և համայնքի, իսկ մեծահասակներինը՝ մշակույթի և քաղաքականության մասին տեղեկատվության հանդեպ (տե՛ս աղյուսակ 7):

Բավականին հետքրքրական է լրատվամիջոցների նկատմամբ սեռային տարբերությունները. ի համեմատ տղամարդկանց՝ կանայք ավելի հաճախ են օգտվում լրատվամիջոցներից: Այսպես օրինակ, ամենամեծ տարբերությունը գրանցվում է Համացանցից և հեռուստատեսությունից (17-18%), ռադիոյից և առցանց մամուլից (10%) օգտվողների շրջանում (տե՛ս՝ աղյուսակ 8):

Աղյուսակ 7.
Հայկական լրատվամիջոցների տեղեկատվության մեջ
հեղափոխությունների շրջանակները ըստ տարիքային խմբերի
(% հարցվածներից)

	18-30	31-50	51>
Մշակույթ, պատմություն, կրթություն, գիտություն, սպորտ, եկեղեցի	21.4	16.7	28.2
Քաղաքական, անվտանգություն	16.7	21.4	15.4
Սոցիալական (ներառյալ՝ միգրացիա)	4.8	4.8	7.7
Տնտեսական	4.8	4.8	5.1
Ազգային (հայապահպանություն, հայ դատ)	21.4	11.9	17.9
Ամեն ինչ՝ կապված ՀՀ հետ	4.8	14.2	12.8
Ամեն ինչ՝ կապված իր համայնքի հետ	19.0	21.4	12.9
Ձեռնարկ, հանդիսություն, տոնակատարություն, անցողաբձ	7.1	4.8	

Աղյուսակ 8.
Լրատվամիջոցի նախընտրությունն ըստ սեռի

Մեդիա	Արական	Իգական
Հեռուստատեսություն	63.6	80.0
Ռադիո	54.5	64.4
Տպագիր մամուլ	60.0	65.6
Առցանց մամուլ	45.5	55.6
Համացանց	53.4	71.1

Չնայած լիբանանահայերի կողմից լրատվամիջոցների ինտենսիվ սպառմանը, ինչպես և ակնկալվում էր, տարիքի աճին զուգընթաց գրանցվում է հետաքրքրության անկում լրատվամիջոցների, ինչպես նաև Համացանցի նկատմամբ (տե՛ս աղյուսակ 9): Լրատվամիջոցի ընտրությունը և սպառման հաճախականությունը պայմանավորված է հարցվածների զբաղվածության, կրթամակարդակի, տարիքի, սեռի և այլ հատկանիշներով:

Աղյուսակ 9.

Լրատվամիջոցի նախընտրությունն ըստ տարիքային խմբերի

Մեդիա	18-29	30-49	50 >
Հեռուստատեսություն	66.7	73.3	60.5
Ռադիո	62.2	55.0	55.8
Տպագիր մամուլ	60.1	58.3	53.5
Առցանց մամուլ	62.2	53.3	25.6
Համացանց	63.4	66.7	41.9

Ազգային սյուժեները, որոնք մեր հարցման մեջ խմբավորված են Հայաստանի, ընդհանուր սփյուռքի և կոնկրետ լիբանանյան համայնքի մասին տեղեկատվության սեռատարիքային գործոնը մեծ ազդեցություն չունի (տե՛ս աղյուսակ 8. և 9), տարբերությունները վիճակագրական վրիպման սահմանագծին են: Սա վկայում է տեղեկատվական նախընտրությունների հարցում համայնքի միատարրության մասին:

Այսպիսով, դիտարկելով էթնիկ մեդիայի դերը Լիբանանի հայ համայնքի կյանքում, կարելի է արձանագրել հետևյալը. Բեյրութում ու այլ բնակավայրերում կենտրոնացած հոծ հայկական զանգվածը ոչ միայն ունակ եղավ պահպանել իր էթնիկ դիմագիծը, ստեղծել իր էթնոսոցիալական կառուցվածքին համահունչ ազգային կենտրոններ, այլև ձևավորել ազգային լրատվամիջոցներ: Դրա վկայությունն է համայնքի տեղեկատվական դաշտի խիստ հագեցվածությունը, բազմազանությունը, լիբանանահայերի կողմից տարբեր տեսակի լրատվամիջոցների և դրանց միջոցով տարածվող տեղեկատվության և էթնոմշակութային արժեքների սպառման մշակույթը:

Ազգային հոգևոր դիմագծի արտացոլումը գիտակցության և վարքագծի տարբերում: Ազգային դիմագծի ամենաարտահայտիչ դրսևորումները հոգևոր կյանքում են, որը, լինելով բավականին բարդ համակարգ, ներթափանցում է կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներ՝ տնտեսական, սոցիալական, հաղորդակցական, ծիսական և այլն: Հասկանալի է, որ ազգային դրսևորումներն իր բոլոր երանգներով արտացոլվում են անձի, խմբի գիտակցության ու վարքագծի, նրանց առօրեականության մեջ:

Այս առումով կարևոր էթնոմշակութային ցուցիչ են համարվում լեզուն, հոգևոր արժեքները, ծիսական կյանքը, պատմական հիշողու-

թյունը, մի խոսքով՝ ինքնության այնպիսի արտահայտություններ, որոնց միջոցով կարելի է պատկերացում ստանալ տվյալ խմբի հոգևոր կենսակերպի տարբեր կողմերում էթնիկ առանձնահատուկ տարրերի առկայության աստիճանի մասին: Ելնելով վերոնշյալից դիտարկենք հոգևոր կյանքի մի քանի այնպիսի հատկանիշներ, որոնցում ամենացայտուն ձևով է արտահայտվում ազգային յուրահատկությունը: Դրանց մեջ ընդգրկվել են ազգապահպան այնպիսի կարևոր տարրեր, ինչպիսիք են լեզուն ու կրթությունը, կրոնատարությունը և եկեղեցին, տոնական համակարգը, ազգային ակնաավոր գործիչների նախընտրությունը, արժեքային կոմսորոշումները և այլն:

Արժեքային կոմսորոշումներ: Հարցված լիբանանահայերի արժեքային կողմնորոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց համար առաջին տեղում ընտանիքն է, որին հաջորդում է անհոգ ու բարեկեցիկ կյանքը: Հաշվի առնելով նրանց վարած համայնքային կյանքը, մարդկանց հարգանքը վայելելը արժեքների համակարգում կարևոր տեղ է զբաղեցնում: Աշխատանքի և ստեղծագործելու պահանջմունքը, սակայն, ավելի քիչ տեղ է զբաղեցնում համայնքի անդամների մոտ:


Աղյուսակ 10.

Ինչ է նշանակում «լավ ապրել», ինչ է պետք երջանիկ զգալու համար

Արժեքներ	% հարցվածներից
Լավ ընտանիք ունենալ	31,6
Առանց հոգսերի և անհանգստությունների ապրել	19,6
Բարեկեցիկ, ապահով ապրել	18,1
Մարդկանց հարգանքը վայելել	10,2
Լավ, հեռանկարային աշխատանք ունենալ	9,1
Ստեղծագործելու պայմաններ ունենալ	4,7
Առողջ լինել	1,2
Հայաստանում ապրել	0,9
Արժանապատիվ ապրել	0,6
Խաղաղ երկրում ապրել	0,6
Այլ	1,6
Դժվարացել է պատասխանել	1,8

Ակնհայտ է, որ լավ ընտանիքը, անհոգ ու բարեկեցիկ կյանքն ավելի մեծ տեղ ունի իգական սեռի, իսկ լավ աշխատանքը, ստեղծագործելու հնարավորությունները և շրջապատի հարգանքը վայելելը՝ արական սեռի ներկայացուցիչների արժեքային համակարգում:

Գծապատկեր 27.
Արժեքներն ըստ սեռերի (% ըստ հարցվածների սեռի)




Հատկանշական է նաև այն, որ տարբեր սերունդների մոտ արժեքները տարբեր կարևորություն են ստանում: Այսպես, լավ ընտանիքի, աշխատանքի ու հարգանքի արժեքն ավելի է կարևորվում երիտասարդների և մեծահասակների շրջանում, քան միջին սերնդի, որն ավելի կարևորում է անհոգ կյանքը:

Հետաքրքրական է նաև, որ սերնդների մեջ ամենաարտահայտված տարբերությունները նկատվել է ստեղծագործելու հնարավորությունների վերաբերյալ. Այս արժեքային կոմսորոշման մեջ բավականին ճշգրիտ ձևով արտահայտված է տարիքային գործոնը: Այսպես օրինակ՝ ինչքան երիտասարդ է հարցվողը, այնքան մեծ է նման պատասխանների թիվը:

Լեզու և կրթություն: Լեզվի, մանավանդ դպրոցական լեզվի հարցը կախված է նրա գործածման հնարավորություններից՝ որքանով կարող է կիրառվել հետագայում: Խոշորագույն գաղթօջախում

ազգային լեզուն չպետք է դիտարկել միայն որպես հաղորդակցման միջոց, այլ ներընտանեկան, հարևանական և համայնքային ազգային միջավայր ապահովող պայման, հետևաբար՝ որպես ազգապահպան կարևորագույն մեխանիզմ:


Գծապատկեր 28.
Արժեքներն ըստ տարիքային խմբերի
(% ըստ ամեն մի տարիքային խմբի)



Լիբանանահայերի շրջանում հարցվածների ճնշող մեծամասնության տան լեզուն հայերենն է (մոտ 93%), քչերի մոտ՝ արաբերենը: Կրկին, մեծամասնությունը հաճախել է հայկական դպրոց: Հայկական կրթության ավանդույթը շարունակում է գերիշխող մնալ, սակայն ցուցանիշը մեկ սերնդի կտրվածքով իջել է ինը տոկոսով:

Հայկական դպրոց հաճախած հարցվածների մոտ 80 տոկոսն իր երեխաներին նույնպես հայկական կրթության է տալիս: Այսպիսով, չնայած, հայկական կրթության հանդեպ նվազող հետաքրքրությանը, լիբանանահայերը շարունակում են ազգային կրթության և հայոց լեզվի հանդեպ պահպանողական մոտեցումը:

Գծապատկեր 29.
Գարրոցական կրթությունն ըստ երկու սեռունդների
(% հարցվածներից)



Հայ ազգի ականավոր գործիչների ընկալումները: Ազգային կրթությունը, ավանդական կուսակցությունները և նրանց շուրջ ստեղծված կազմակերպությունները, ինքնուրոյան պահպանմանն ուղղված հանրակարգային և անճնական ջանքերը լիբանանահայերի շրջանում ձևավորել են էթնունշակության արժեքների համակարգ, որի դրսևորումներից մեկը նրանց պատկերացումն է ականառու գործիչների վերաբերյալ: Որպես անցյալի ու ներկայի գործիչներ, որոնց հանդեպ նրանք հարգանք են տածում, ճնշող մեծամասնությունը (հարցվածների մոտ 95 տոկոսը) նշել է հայազգի անհատներին:

Աղյուսակ 11.
Անցյալի և ներկայի ականավոր գործիչները
(% հարցվածներից)

Հայ գործիչներ	94,5
Հասարակական-քաղաքական, պետական, կուսակցական, բարերար	38,4
Մշակութային, գիտակրթական	31,5
Ազգային հերոսներ	13,7
Հոգևոր	9,6
Համայնքային	1,4
Այլազգի/համաշխարհային գործիչներ	5,5

Հայազգի ականավոր գործիչները խմբավորվել են ըստ նրանց գործունեության տեսակի: Ամենահաճախը նշվել են հասարակական-քաղաքական, պետական, կուսակցական գործիչներն ու բարերարները: Մշակութային և գիտակրթական գործունեությամբ զբաղված անհատները նույնպես շատ կարևորվել են՝ զբաղեցնելով երկրորդ տեղը: Ապա հաջորդում են ազգային հերոսները և հոգևոր գործիչները: Համայնքային գործիչները համեմատաբար քիչ են նշվել:

Հետաքրքրական է այն փաստը, որ տղամարդկանց և կանանց մոտ միանման մոտեցում կա ազգային գործիչների նկատմամբ, սակայն մի տարբերությամբ, որ կանայք մոտ երկու անգամ քիչ են նշում ազգային հերոսներ:

Աղյուսակ 12.
Հայ ականավոր գործիչներն ըստ հարցվածների սեռի
(% հարցվածներից)

Գործիչներ	Արական	Իգական
Հասարակական-քաղաքական, պետական, կուսակցական, բարերար	37.5	42.2
Մշակութային, գիտակրթական	33.3	33.3
Ազգային հերոսներ	20.8	11.1
Հոգևոր	8.4	11.1
Համայնքային		2.3

Ինչ վերաբերում է տարիքային խմբերին, ապա նրանց մոտ առկա են լուրջ տարբերություններ, որոնք ամենաարտահայտիչն են երիտասարդների և մեծահասակների միջև: Եթե ազգային հերոսների վերաբերյալ նրանց միջև տարակարծություններ չեն նկատվում, ապա երիտասարդները երկրորդ և երրորդ սերունդների հետ համեմատած հասարակական և կուսակցական գործիչներին երկու անգամ ավելի են ցույց տալիս որպես ականավոր: Իսկ միջին և մեծահասակ տարիքային խմբերը երիտասարդներից երկու անգամ ավելի են նախընտրում մշակութային և գիտակրթական գործիչներին:


Աղյուսակ 13.
Հայ ականավոր գործիչներն ըստ տարիքային խմբերի
(% հարցվածներից)

Գործիչներ	18-30	31-50	51>
Հասարակական-քաղաքական, պետական, կուսակցական, բարերար	64.7	29.2	30.0
Մշակութային, գիտակրթական	18.0	41.7	40.0
Ազգային հերոսներ	17.3	8.3	15.0
Հոգևոր		20.8	10.0
Համայնքային			5.0

Հետաքրքրական է այն, որ ազգային հերոսների նկատմամբ նույնանման վերաբերմունք են ցուցաբերում երկու բնեռային տարիքային խմբերը 18-29 և 50 բարձր տարիք ունեցողները: Այս երևույթը մեկ անգամ ևս փաստում է այն իրողությունը, որ երրորդ սերունդը վերհիշում է այն ինչ որ "մոռացել են" ծնողները և դրանով իսկ մոռենում իրենց պապերին:


Կրոնը և եկեղեցին համայնքային կյանքում: Հարցված լիբանանահայերի շրջանում կրոնատաժ մարդիկ կազմում են ճշող մեծամասնություն: Նրանց մեջ խորապես հավատացյալները կեսից ավելին են: Շատ քչերն են նշել, որ անտարբեր են կամ չեն հավատում Աստծուն:

Գծապարկեր 30.
Կրոնի նկատմամբ վերաբերմունքը (% հարցվածներից)



Հարցվածների շրջանում հավատացյալների մեծամասնությունը հայ առաքելական եկեղեցու հետևորդ է: Հայ կաթողիկե եկեղեցին երկրորդ կրոնական համայնքն է, ապա՝ հայ ավետարանչականը:

Գծապատկեր 31.
Կրոնական համայնքների փնտասկարար կշիռը ըստ հարցումների
(% հարցվածներից)



Կրոնատաճ լիբանանահայերի եկեղեցու հետևորդ լինելու դրսևորումներից է եկեղեցի հաճախելը, ինչը ոչ միայն հավատքի արտահայտումն է, այլև համայնքային կյանքում ներգրավվելու և սոցիալական նշանակություն ունեցող վարքի: Հարցվածների գրեթե մեկ երրորդն ամեն շաբաթ եկեղեցի է հաճախում: Եկեղեցի չհաճախելը եզակի հանդիպող դեպք է: Լիբանանահայերի երկու երրորդը ամսվա ընթացքում մեկից ավելի անգամ հաճախում է եկեղեցի, իսկ քիչ հաճախողները կազմում են համայնքի անդամների ընդամենը մեկ երրորդը:


Աղյուսակ 14.
Եկեղեցի գնալու հաճախականությունը

Հաճախականություն	% հավատացյալ հարցվածներից
Շաբաթը մեկ և ավելի անգամ	26,8
Ամսվա մեջ 1-2 անգամ	24,6
Ամսվա մեջ 1 անգամ	17,4
Տարվա մեջ մի քանի անգամ	27,5
Չի հաճախում	3,6

Հարկ է նշել, որ եկեղեցի գնալու հաճախականությունը տարբեր է երեք հայկական կրոնական համայնքների ներկայացուցիչների համար: Այսպես, առաքելական եկեղեցու հետևորդների՝ եկեղեցի


գնալու հաճախականությունն ավելի նվազ է, քան ավետարանչական և կաթողիկե: Դա, հավանաբար, պայմանավորված է այդ համայնքների փոքր լինելով և շփման հաճախականությամբ:

Գծապատկեր 32.
Եկեղեցի գնալու հաճախականությունն ըստ տարրեր եկեղեցիների հերոտրոդների (% հարցվածներից)




Եկեղեցի գնալու ավանադույթ ավելի շատ կրում են իգական սեռի ներկայացուցիչները. նրանք ավելի շատ են հաճախում եկեղեցի, քան տղամարդիկ:

Գծապատկեր 33.
Եկեղեցի գնալու հաճախականությունն ըստ սեռի (% ըստ սեռերի համամասնության)



Երիտասարդների և մեծահասակների շրջանում եկեղեցի գնալու հաճախականությունն ավելի ցածր է, քան միջին սերնդի մոտ: Սակայն ավագ սերնդի մեծամասնությունը, հետևելով սովորույթանքը, հաճախում է ամեն շաբաթ, իսկ միջին ու երիտասարդ սերունդը՝ ավելի քիչ հաճախականությամբ:



Տոնական համակարգը: Սկիզբի, մասնավորապես լիբանանահայերի տոնական համակարգը կարևորվում է մի քանի կարևոր հանգամանքներով: Առաջին հերթին անհրաժեշտ է պարզաբանել տոնածիսական համակարգի դերը էթնիկ փոքրամասնության հոգևոր կենսակերպի պահպանման և միջավայրին ինտեգրման գործընթացներում: Այս դեպքում, մի կողմից, կարելի է հետևել սովորյալ խմբի սոցիալ-մշակութային ինտեգրման գործընթացին, մյուս կողմից՝ բացահայտել նրա առանձնահատկությունների վերարտադրմանը նպաստող գործոնները:

Երկրորդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ օտարագրի միջավայրում էթնիկ խումբը կտրվում է իր արմատներից՝ էթնիկ տարածքից, ստեղծված ավանդական կառույցներից և հոգևոր կյանքից: Վերջիններս նա ժառանգում և իր հետ բերում է (եթե դա հաջողվում է) նոր միջավայր, որն ըստ էության տարբերվում է նախորդից

քաղաքական, տնտեսական իրավիճակով, էթնիկ միջավայրով և բազում այլ պայմաններով: Այս պարագայում կարևոր խնդիր է դառնում այն հարցը, թե որքանով են այդ պայմանները թույլ տալիս խմբին՝ տեղափոխել իր նախորդ հոգևոր կյանքի տարրերը, մասնավորապես տոնա-ծիսական համակարգը կամ դրա մի մասը: Եթե դա հաջողվում է, ապա կարևոր է պարզել, թե համակարգի որ տարրն է արդիականանում նոր միջավայրում, իսկ որը՝ ոչ, կամ էլ՝ որ տարրն է դուրս մղվում համակարգից և, վերջապես, ազգային երանգավորում ունեցող ինչ նոր տոներ կամ հիշատակին նվիրված միջոցառումներ են ստեղծվում:

Երրորդ՝ տոնական համակարգը նպատակ ունի սպասարկել կոնկրետ խմբի կենսակերպի հուզական պահանջմունքները: Վերջիններս բխում են ստեղծված պայմաններից և խմբի էթնիկ ու սոցիալ-ժողովրդագրական (քանակ, սեռա-տարիքային և սոցիալական կառուցվածք, տնտեսական գործունեություն և այլ) առանձնահատկությունների փոխկապվածությունից: Մա, մի կողմից, տվյալ խմբին հեռացնում է իր արմատներից, մյուս կողմից՝ մոտեցում է շրջապատին, ինչը բերում է թնոսի ողջ զանգվածում ներէթնիկ խմբերի առաջացմանը, իսկ տվյալ երկրում, բնակավայրում ներմշակութային խմբի գոյատևմանը: Նման գործընթացներն ավելի պատկերավոր բնույթ են կրում տոնածիսական կյանքում: Ուստի սիյուռքի ուսումնասիրություններում տոնածիսական կյանքը զբաղեցնում է հատուկ տեղ: Այս կապակցությամբ ներկա ուսումնասիրության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում այն խնդրին, թե որ տոներն ու իրադարձություններն են կարևորվում սիյուռքում ապրող մեր հայրենակիցների կողմից:

Լիբանանահայերի տոնական նախասիրությունները այս առումով բավականին արտահայտիչ են՝ մի կողմից մեծ նմանություն կա Հայաստանի բնակչության տոնական նախընտրություններին, մյուս կողմից զատվում են իրենց որոշակի առանձնահատկություններով:

Աղյուսակ 15.
Լիբանանահայերի կողմից նշվող փոստերը

N	Տոներ	% հարցվածներից
1	Զատիկ	15.6
2	Սուրբ Ծնունդ	8.7
3	Նոր տարի	8.4
4	Տարեդարձ	7.5
5	Վարդանանց	5.5
6	Հայաստանի առաջին հանրապետության անկախության օր (մայիսի 28)	4.3
7	Սուրբ Աստվածածին	3.8
8	Սուրբ խաչ	2.0
9	Տրնդեզ	1.7
10	Ծաղկազարդ	1.2
11	Լիբանանի անկախություն	0.9
12	Մայրերի տոն	0.6
13	Տեղական տոներ	0.6
14	Մուսա լեռան տոն	0.6
15	Բրբարան (արաբական բարեկենդան)	0.3
16	Ռամադան	0.3
17	Վարդավառ	0.3
18	Խաչվերաց	0.3
	Հայկական, ազգային տոներ	9.6
	Եկեղեցական տոներ	7.5

Ազգ և հայրենիք. գնահատականներ և կարծրատիպեր:

Ազգ և հայրենիք եզրույթներն ազգային ինքնության առանցքային տարրերն են: Այդ հասկացությունների վերաբերյալ անհատական և խմբային գնահատականները ցույց են տալիս տվյալ համայնքում տարածված կարծրատիպերը: Կարծրատիպերի շարքում առաջնա-
 յիններից մեկն է այն գնահատականը, որը վերաբերում է ազգամի-
 ջյան ամուսնություններին: Այն ինքնության առաջին հատկանիշնե-
 րից է, որը հիմնվում է «մենք-նրանք» հակադրության հոգեբանական

մեխանիզմի վրա: Վերջինիս դերը ավելի է հզորանում եթե ապահովվում է «մեկքի» առանձնացման և հաստատման այլ հոգեբանական տարրերով՝ նրա կերպարի առանձնահատկությունների ընդունման, այդ խմբին պատկանելության զգացումով և իր ընդհանուր կերպարի և արմատների յուրովի ընկալմամբ: Այդ իսկ պատճառով հետազոտության մեջ հատուկ ուշադրություն է դարձվել էնդոգամիայի պահպանմանը, որը ցայտուն արտահայտվում է ազգամիջյան ամուսնությունների նկատմամբ տվյալ խմբի անդամի վերաբերմունքով, ինչպես նաև էթնիկ ինքնակարծրատիպերի միջոցով ազգի կերպարի և հայրենիքի կերպարի նկարագրմամբ:

Ազգամիջյան ամուսնությունների հանդեպ լիբանանահայերի շրջանում նկատվում է բարձր անհանդուրժողականություն: Նրանք համարում են ներքին ամուսնությունները ազգապահպանման լուրջ գործոն: Այլ ազգի ներկայացուցչի հետ ամուսնության համաձայնության պարագայում նախընտրությունը տրվում է քրիստոնյային կամ լիբանանացուն:


Աղյուսակ 16.

Որ ազգի ներկայացուցիչների հետ է նախընտրելի ամուսնությունը

Նախընտրություն	% հարցվածներից
Միայն հայի	76.8
Այլ ազգի, որից՝	23.2
Ազգը մինևույն է	6.0
Լիբանանցի/արաբ	9.2
Քրիստոնյա	4.0
Ամերիկացի	2.0
Եվրոպացի	2.0


Հատկանշական է, որ ազգամիջյան ամուսնությունների հանդեպ հանդուրժողականությունն ավելի մեծ է իգական սեռի ներկայացուցիչների մոտ:

Գծապատկեր 35.
Ազգամիջյան ամուսնությունների հանդեպ հանդուրժողականությունն ըստ սեռի (% հարցվածներից)



Երիտասարդներն ավելի են հակված ամուսնանալ այլ ազգի ներկայացուցիչների հետ: Այդ հարցում ամենաձայրահեղը միջին սերնդի ներկայացուցիչներն են:

Գծապատկեր 36.
Ազգամիջյան ամուսնությունների հանդեպ հանդուրժողականությունն ըստ տարիքային խմբերի (% հարցվածներից)



Ընդհանուր առմամբ, լիբանանահայերը նախընտրում են ներթնիկ ամուսնությունները: Վերջինիս մասին է վկայում լիբանանահայերի մոտ բարձր կարծիքը իրենց ազգային պատկանելությանը վերաբերյալ:

Ազգի կերպար. Ինքնակարծրատիպեր: Լիբանանահայ հարցվածների ճնշող մեծամասնությունը (90 տոկոսից ավելին) հայերին վերագրել են դրական գծեր: Տրված ինքնագնահատականներում առանձնացվել են 157 պատասխաններ՝ կարծրատիպ: Գրեթե նույնանման բառեր և քանակ արձանագրվել է Երևանում 1980, 1993 և 2005 թթ. անցկացված հարցման ընթացքում տրված նույն հարցի պատասխաններում⁵: Դա շատ կարևոր փաստ է, որը վկայում է մեր ազգի երկու հատվածի՝ հայաստանցի և լիբանանցի հայերի միանման էթնոհոգեբանական դիմագծի մասին, մեր հոգևոր մշակույթի միասնականության և հազեցվածության մասին: Այսպիսով այդ պատասխաններից 33-ը բացասական երանգ ունեն (21%), իսկ մնացած 124 բառը՝ դրական երանգ (79%)⁶: Բացի ներկայացված ընդհանուր պատկերից, ինքնակարծրատիպերը (իր ազգի մասին գնահատականները) բաղդատված են 11 դրական և 7 բացասական խմբերի:

Աղյուսակ 17.

Հայերին բնորոշ բնավորության գծերը (ինքնակարծրատիպեր) ըստ լիբանանահայերի

N	Դրական կարծրատիպեր	% հարցվածներից
1	Աշխատասեր, ձեռներեց, հաջողակ, ստեղծող, ուսումնասուն	30.5
2	Հպարտ, սկզբունքային, համառ, ազատամիտ, ազատ, պահանջկոտ, առաջադեմ, պայքարող, ինքնավստահ, տոկոն, ստոնասիրտ, քաջ, ուժեղ	11.5
3	Խելոք, օժտված, տաղանդավոր, շնորհալի, նպատակաուղղված, ինքնուրույն, մրցունակ, լավ մասնագետ, առաջադեմ	8.2
4	Ազգասեր, ազգայնական, ազգանվեր, հայրենասեր	5.1

5 Оганджян П. С., *Некоторые черты национальной психологии*, в: Население Еревана. Этносоциологические исследования, Из-во АН АрмССР, Ереван 1986, էջ 205:

6 Համեմատության համար նշենք, որ Երևանի բնակչության պարագայում այն կազմել է 80%: Տե՛ս նույն տեղում, էջ 206:

5	Ջոհարերոդդ, անձնուրաց, հոգատար, կարեկցող, աջակցող, ընտանիքի մարդ, հավատարիմ, վստահելի, բարոյական, նամուտվ, ավանդապահ, հավատացյալ	3.9
6	Բարի, առատաձեռն, բարյացկամ, լավատես, կամեցող, մեծահոգի, ընկերասեր, հարգալից, պատվախնդիր	3.4
7	Հյուրասեր	3.0
8	Զգայուն, տաքարյուն, ծայրահեղ, եռանդուն, հետաքրքիր	2.1
9	Ազնիվ, ճշմարիտ, խղճով, պարկեշտ, գաղտնապահ, համբերատար	1.7
10	Ուղղամիտ, հասարակ, պարզ, համեստ, ներողամիտ, դյուրահավատ, միամիտ, ժմանտիկ	1.3
12	Պատասխանատու, հետևողական, զուսպ, կարգապահ, օրինապահ, կազմակերպված, բժախնդիր	1.2
11	Կենսուրախ, անհոգ, ուտող-խմող	0.4
	Դժվարացել է պատասխանել	16.3

N	Բացասական կարծրատիպեր	% հարցվածներից
1	Դավաճան, վախկոտ, թուլամորթ, կեղծ, օտարամոլ, իրար չսիրող, ոչ միասնական	3.0
2	Նախանձ, դեմագոգ, դժգոհ, գանգատվող, «զոհի» հոգեբանությամբ	2.1
3	Գոռոգ, ինքնահավան, մեծամիտ, կովարար, հանդուգն, ցուցամոլ	1.7
4	Խորամանկ, ժլատ, շահախնդիր, անշնորհակալ, սուտասան, շողոքոթ, նյութապաշտ, կաշառված/կաշառող, փող սաքքող, բանասարկու/որքի տակ փորող	1.7
5	Եսասեր, անտարբեր, սառը, անկարգ /օրենք խախտող, կոպիտ, անքաղաքավարի	1.3
6	Հարմարվող, ճկուն, «ոչ քաղաքացի»	0.9

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակներից, հարցվածների մեջ հայերին բնորոշող ամենատարածված դրական հատկանիշներն են *աշխատասիրությունը, ձեռներեցությունը, հաջողակությունը, սրեղծարարությունը և ուսումնասիրենչությունը*: Հարցված լիբանահայերի

յուրաքանչյուր երրորդը նշում է այս հատկանիշների խումբը: Ի դեպ, 1980, 1993 և 2005 թթ. Երևանում անցկացրած նույնանման հարցման ժամանակ մենք ստացել էին պատասխանների նմանատիպ կառուցվածք⁷: Երկրորդ տեղում գտնվում են այնպիսի հատկություններ, ինչպիսին են՝ *հպարտություն, սկզբունքայնություն, համառություն, ազատամտություն, պահանջկոտություն, առաջադիմություն, պայքարող, ուժեղ, ինքնավարահոտություն, փոկունություն, սատնասարություն, քաջություն*: Այս պատասխանների խումբը նշել է յուրաքանչյուր իններորդ հարցված:

Վերջին տարածված դրական կարծրատիպերից են *խելոք, օժտված, փառանդավոր, շնորհալի, նպատակատողված, ինքնուրույն, մրցունակ, լավ մասնագետ, առաջադեմ* բնորոշումները, որոնք նշել է հարցված յուրաքանչյուր տասներկուերրորդ լիբանահայ:

Դրական հատկանիշների մեջ կան նաև ոչ հաճախ հանդիպող պատասխաններ, ինչպիսիք են *կենսուրախ, անհոգ, ապա՝ պատասխանատու, հերևողական, զուսպ, կարգապահ, օրինապահ, կազմակերպված, բժախնդիր, և վերջում՝ ուղղամիտ, հասարակ, պարզ, համեստ, ներողամիտ, դյուրահավատ, միամիտ, ռոմանտիկ*: Կարելի է ենթադրել, որ պատասխանների այս խմբերը կարծես ունեն երկակի գնահատականներ: Մի կողմից, նրանք դրական են համամարդկային առումով, մյուս կողմից, կարող են երանգավորվել որպես բացասական գնահատականներ սփյուռքյան համատեքստում:

Ի թիվս վերոնշյալ դրական հատկանիշների, հետազոտության մեջ արձանագրվեցին բավականին հետաքրքիր, այսպես կոչված, բացասական ինքնակարծրատիպեր: Այսպես օրինակ, եթե դրական կարծրատիպերի ճնշող մեծամասնությունն վերաբերվում են անձին՝ *աշխատասեր, բարի* և այլն, ապա արտահայտված բացասական հատկանիշներում արտացոլվում են և անձին և խմբին վերաբերվող հետևյալ արտահայտություններում՝ *դավաճան, վախկոտ, թուլամորթ, կեղծ, օտարամոլ, իրար չսիրող, ոչ միասնական, ժլատ, շահախնդիր, անշնորհակալ, խորամանկ, սուտասան, շողորորթ, նյութա-*

7 Карапетян А., *Автопортрет армян: этничность в самооценках*, из-во «Гитутюн» НАН РА, Ереван 2011, էջ 99:

պաշտ, կաշառված/կաշառող, փող սարքող, բանասարկու/ուրքի տակ փորող:

Ստացված տվյալները ցույց են տալիս այն անհերքելի փաստը, որ գոյություն ունի ազգին նույնացման մեխանիզմի երկու հակադիր կողմ. դրականը մեծամասամբ հիմնվում է սեփական անձնային, իսկ բացասականը՝ խմբի անդամների հատկանիշների վրա: Կարելի է ընդհանրացնել այսպես. ազգի դրական գծերն իմ բնույթից են, իսկ բացասականը՝ նրա այլ անդամների: Միաժամանակ, ստացված տվյալները ցույց են տալիս համայնքի մշակութային «ազդեցությունն» ազգի ընդհանուր կերպարի ձևավորման մեջ:

Հայրենիքի կերպար: Հայկական սփյուռքին բնորոշ առանձնահատկություններից է ընդհանուր ծագումնաբանության և հայրենիքի հետ կապի ընկալումը: Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, չհանդիսանալով լիբանանահայերի ծագման երկիրը, նրանց համար հանդես է գալիս որպես ազգային հայրենիքի խորհրդանիշ, որը նրանք ընտրում են տարբեր շարժառիթներով: Հարցվածների կեսից ավելին իր հայրենիքն է համարել Հայաստանը: Շատերը սակայն շարունակում են հայրենիք համարել իրենց նախնիների ծննդավայրը՝ Արևմտյան Հայաստանը: Լիբանանը որպես հայրենիք ընտրողների թիվը հարցվածների մեջ բավականին քիչ է:

Աղյուսակ 18.

Լիբանանահայերի պարկերացումները հայրենիքի մասին

Պատկերացումները հայրենիքի մասին	% հարցվածներից
Հայաստան	53,4
Ծողղների/նախահայրերի ծննդավայր	18,2
Որտեղ ապրում է	8,1
Որտեղից եկել է	6,1
Որտեղ անվտանգ ու արժանապատիվ կյանք կա	2,7
Ծննդավայր	2,0
Հայրենիքի գաղափար չկա	0,7
Դժվարացել է պատասխանել	6,7

Աղյուսակում ներկայացված հայրենիքի մասին պատկերացումները խմբավորվել են հետևյալ երեք պայմանական խմբերում.

1. Հայաստանի Հանրապետություն,
2. պատմական հայրենիք (ծնողների/նախահայրերի հայրենիքը)
3. որտեղ ապրում է, որտեղից եկել է, ծննդավայր:

Հայաստանի հետ անմիջական կապը մեծապես նպաստում է այն որպես հայրենիք ընկալմանը: ՀՀ այցելած հարցվածների մեջ Հայաստանը որպես հայրենիք ընկալողների տեսակարար կշիռը նկատելիորեն ավելի մեծ է: Չնայած ՀՀ երբեք չայցելած հարցվածների խմբում Հայաստանը կրկին առաջնային է, սակայն առավել մեծ է պատմական հայրենիքի ընկալումը:


Աղյուսակ 19.

*Հայաստանի հետ կապի ազդեցությունը հայրենիքի ընկալման վրա
(% ըստ մեկնելու հաճախականության)*

ՀՀ մեկնելու հաճախականությունը	Հայրենիքի ընկալումը		
	Հայաստան	Պատմական հայրենիք	Իրական հայրենիք
Չի մեկնել	49	29	19
2-3 տարին մեկ	60	11	17
Ամեն տարի կամ ավելի հաճախ	60	15	10

Բացի հայրենիքի հետ անմիջական կապից, գոյություն ունեն նաև հայրենիքի ընկալման միջսերնդային տարբերություններ: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, բոլոր սերունդների մոտ Հայաստանի՝ որպես հայրենիքի զգացումը գրեթե հավասար է, սակայն երիտասարդները (18-29տ.) և միջին սերունդը (30-49տ.) ավելի շատ պատմական հայրենիքի ընկալում ունի, իսկ ավագ սերունդը (50. և ավելի տ.)՝ իրական հայրենիքի:

Գծապատկեր 37.
Հայրենիքի ընկալման միջատերության պարբերությունները
(% տվյալ տարիքային խմբի հարցվածներից)



Այսպիսով, էթնոմշակութային միջավայրը Լիբանանում բավականին արտահայտիչ ազգային բնութագիր ունի: Հայերը այս երկրի պայմաններին ինտեգրվել են յուրովի՝ իրենց բոլոր էթնիկական հատկանիշներով և առանձնահատուկ ազգային, համայնքային դրսևորումներով: Ազգային ինքնությունը վատ արտահայտված է ինչպես անհատների վարքագծում ու պատկերացումներում՝ անկախ սեռից և տարիքից, սոցիալական և կրթական ցուցանիշներից, այնպես էլ ողջ համայնքի մակարդակով: Լիբանանահայերի նման միատարրությունը դրսևորվում է իրենց առօրյա կյանքում, կենսակերպում, ազգային կառույցների հետ հարաբերություններում, ազգային պատկանելիության հանդեպ վերաբերմունքում և մշակութային տարբերում: Միաժամանակ, ըստ ստացված նյութերի, ակներև են սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններ, որոնց մեջ արտահայտված են լիբանանահայերի ազգային դիմագծի հետագա զարգացման ուղիները դեպի նորոգում, նրան նոր դիմագծեր հաղորդելու որոշակի միտումներ:

Դոկտ. Ռուբեն Կարապետյան

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ

Լուսինե Տանաջյան, Սոնա Ներսիսյան,

Կարինե Նալբանդյան, Սյուզաննա Բարսեղյան

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատողներ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփում

Լիբանանի հայ համայնքի էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքները ներկայացվեցին երկու տեսանկյունով՝ էթնոսոցիալական և էթնոմշակութային: Առաջինը լիբանանահայերի սոցիալական ներուժի գնահատումն է: Այն բնութագրվում է լիբանանահայերի սոցիալական բարդ կազմով, որը ձևավորվել է ինտենսիվ սոցիալական շարժընթացներով, սոցիալական միջավայրի և հարաբերությունների դրսևորումներով, մարտահրավերների գիտակցությամբ և միգրացիոն տրամադրություններով: Սոցիալական միջավայրը բնորոշվում է ամուր սոցիալական կապերով և ազգային կառույցներով, որոնք առաջացնում են միանման սոցիալական արժեքներ, մասնավորապես, սոցիալ-ժողովրդագրական գործընթացների նման միտումներով և մարտահրավերների ընդհանուր զգացումներով:

Հետազոտության երկրորդ տեսանկյունը՝ Լիբանանի հայերի էթնիկ պատկերի արտացոլումն է: Լիբանանահայերի էթնոմշակութային միջավայրը բնորոշվում է հոգևոր կյանքի այն ոլորտներով, որտեղ արտահայտվում է էթնիկ բաղադրիչը: Այն արտահայտվում է արժեքային կոմսորոշումներում, լեզվի ու կրթության, կրոնատաճության, ազգամիջյան ամուսնությունների, ազգային ակնապարհ գործիչների և պատմական իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքում, ազգի ու հայրենիքի ընկալումներում: Հետազոտության ընթացքում պարզվեց այդ հատկանիշների էթնիկ երանգավորումը: Դրանց փոխկապակցվածությունը սոցիալ-ժողովրդագրական ցուցիչների հետ արտահայտում է լիբանանահայերի ազգային դիմագծի հետագա զարգացման ուղիները:

Докт.Рубен Карапетян

Заведующий отделом исследований диаспоры ИАЭ НАН РА

Лусине Танаджян, Сона Нерсисян,

Карине Налбандян, Сюзанна Барсегян

Научные сотрудники отдела исследований диаспоры ИАЭ НАН РА

РЕЗУЛЬТАТЫ ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ЛИВАНСКИХ АРМЯН

Резюме

Результаты этносоциологических исследований ливанских армян представлены в двух аспектах – этносоциальном и этнокультурном. Первый из них содержит оценку социального ресурса армян Ливана. Он включает социальный состав и динамику социальных перемещений, социальную среду и отношения ливанских армян, осознание ими вызовов и миграционные намерения. Они обуславливаются сложным социальным составом, который сложился в результате интенсивных социальных перемещений. Социальная среда определена сильными социальными связями и институтами, порождающими клише социальных ценностей, в частности близкими тенденциями социальных и демографических процессов, общими ощущениями вызовов.

Второй аспект исследования призван отразить этнический образ армян Ливана. Этнокультурная среда ливанских армян определяется теми сферами духовной жизни, в которых отражается этническая составляющая. Она проявляется в ценностных ориентациях, языковой компетенции и поведении, образовании, религиозности, отношении выдающимся к национальным деятелям и историческим событиям, в оценочных суждениях о межнациональных браках, образе этноса и родины. В ходе исследования выявилась этническая общность этих признаков. А их взаимосвязи с социально-демографическим параметрами указывают пути последующего развития духовно-го облика ливанских армян, приданию ему новых черт.

Dr. Ruben Karapetyan

Head of Department of Diaspora Studies
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Lusine Tanajyan, Sona Nersisyan,
Karine Nalbandyan, Syuzanna Barseghyan

Researchers at the Department of Diaspora Studies
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

THE RESULTS OF THE ETHNOSOCIOLOGICAL STUDY CONDUCTED AMONG THE LEBANESE ARMENIANS

Summary

The results of the ethno-sociological study of the Lebanese Armenians were presented from two perspectives: ethno-social and ethno-cultural. The first dealt with the assessment of Lebanese Armenian potential. This is characterized by a complicated social structure, which was shaped through intensive motivators, expressions and relations of the social milieu, challenging perceptions and migratory intentions. The social milieu is characterized by strong social bonds and national institutions, which generate similar social values, specifically in areas of challenging socio-popular processes, which include general emotions.

The second aspect of the research is the ethnic portrayal of the Lebanese Armenians. The ethno-cultural milieu of the Lebanese Armenians is characterized by aspects of spiritual life where the ethnic component is expressed. This ethnic component is observed in value orientations, language and education, religiosity, mixed marriages, attitude towards renowned national figures and historical events, perceptions of nation and fatherland. During research diverse connotations were observed in the ethnic features of the community. Their correlation with socio-demographic indicators hints at the future tracks of the national features of the Lebanese Armenians and their transformations.

ՎԵՐՋԱԲԱՆ

Լիբանանահայերի հետազոտությունը, որպես «Մեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրի մաս, ունի բացառիկ նշանակություն՝ հասկանալու ժամանակակից հայկական սփյուռքում տեղի ունեցող գործընթացները: Լիբանանի հայերի՝ ազգային ինքնության պահպանման փորձի իմաստավորումը չափազանց կարևոր է հետագա հետազոտական նախագծերի գիտական մշակումների համար: Այն առանձնահատուկ է նրանով, որ լիբանանահայերն այդ բազմազգ պետության այլ էթնոսոցիալական հանրությունների հետ դարավոր գոյակցության ընթացքում ձևավորել են ազգային ինստիտուտների արդյունավետ գործող համակարգ, այստեղ մշակվել են ազգամիջյան համաձայնության և համերաշխության հմտություններ: Լիբանանի ժողովրդի բազմամշակույթ և բազմալեզու ինքնության, Լիբանանի բազմադարյա պատմության և առանձնահատուկ աշխարհաքաղաքական պայմաններում հայերը ոչ միայն հաջողությամբ ինտեգրվել են բազմազգ պետության մեջ, այլև կարողացել են դառնալ նրա ողջ բազմազանության բաղկացուցիչ մասը:

Առաջին բաժնի հեղինակները համակարծիք են, որ լիբանանահայերը մշտապես եղել են Մերձավոր Արևելքում և հենց Լիբանանում հաջորդաբար կրկնվող իրադարձությունների ազդեցության ներքո, որոնք պահանջել են դրանց հակազդելու մեծ ջանքեր: Լիբանանի հայերը կարողացել են ոչ միայն պահպանել և զարգացնել իրենց ազգային կառույցները, այլև ապահովել նրանց գործառնության բարձր որակը: Նրանք ապահովել են իրենց բավականաչափ կարևոր և ամուր դիրքերը լիբանանյան հասարակության մեջ և երկրի պետական ինստիտուտներում: Լիբանանի հայկական համայնքն

այսօր շահեկանորեն տարբերվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում իր նախկին վիճակից և սփյուռքի այլ համայնքներից: Չնայած գլոբալացման հետևանքներին, որոնք հանգեցնում են ժամանակակից հասարակությունների ապաեթնիկացման, լիբանանահայերը պահպանում են իրենց ազգային ինքնությունը: Թեև հուսադրող է լիբանանահայերի իրավիճակը, սակայն հարկ է որոշակի զգուշավորությամբ մոտենալ նրանց էթնիկ հատկանիշների պահպանման և զարգացման հեռանկարները գնահատելիս:

Այսօր լիբանանահայերի շրջանում տեղի ունեցող գործընթացները մեծապես կարող են ցուցադրական լինել այլէթնիկ միջավայրում ապրող էթնոսի այլ խմբերի համար: Նրանց մեծամասնության համար այլազգի միջավայրում էթնոսոցիալական փոխակերպումները կարող են ունենալ մեկ ուղղվածություն, սակայն, կախված որոշակի իրադրությունից, յուրաքանչյուր խումբ կարող է ոչ միայն դա ապրել առանձնակի, այլև լինել զարգացման տարբեր փուլերում: Նշվածը հաստատվում է Լիբանանի հայերի շրջանում տեղի ունեցող ինտեգրման գործընթացների վերլուծությամբ: Այն ընթանում է երկուձևով՝ հայհամայնքի տեղային և համահայկական մակարդակներում: Առաջին մակարդակում տեղի է ունենում ժողովրդագրական (սեռատարիքային, միգրացիոն և այլն), սոցիալական և որոշակիորեն ազգագրական ցուցանիշներով տարբերվող էթնոսի տարբեր խմբերի համախմբում: Դրա արդյունքում ձևավորվում է ինտեգրված ենթամշակութային ամբողջություն՝ իր ազգային ինստիտուտներով և կենտրոններով: Այդ գործընթացը հիմնականում ոչ միանշանակ էր, եղել են և՛ վերելքներ, և՛ վայրէջքներ. Լիբանանի հայկական համայնքն ապրել է իր մեկդարյա պատմության պայմանական չորս շրջան. 1920-1950թթ.՝ պասիվ, 1950-1975թթ.՝ փոխազդեցության, 1975-1990թթ.՝ հետընթացի, իսկ 1990 թվականից առ այսօր՝ վերաստեղծման:

Լիբանանի հայկական համայնքի բազմագործոն վերլուծությունը ցույց տվեց տեղային և տարածաշրջանային իրադարձությունների փոխկապվածությունը, որոնք պայմանավորում են նրա պետա-

իրավական վիճակը և դերը համազգային գործընթացներում և մշակութային կյանքի առանձնահատկությունը: Նյութական մշակույթի հիմնարար տարրերում լիբանանահայերը պահպանել են իրենց ազգային բնութագրերը: Լիբանանահայերի ժամանակակից հոգևոր կյանքը հարկ է դիտարկել պատմական համատեքստում, քանի որ հենց հետահայաց համեմատության մեջ է հնարավոր, առաջին հերթին, հետևելու այս կամ այն մշակութային երևույթի զարգացման տրամաբանությանը, երկրորդ՝ պարզելու հոգևոր կյանքի կառուցվածքային փոփոխությունները, երրորդ՝ վերլուծելու այդ փոփոխությունների բովանդակությունը: Այդ իսկ պատճառով հատուկ նշանակություն են ստանում այն պայմանները, որոնք ներգործում են ազգային մշակույթի տարրերի զարգացման և գործառնության վրա: Դա առաջին հերթին վերաբերում է էթնոսոցիալական միջավայրին, որը ձևավորվում է ազգային միավորումների, մշակութային ու լուսավորական կենտրոնների և այլ համայնքային կառույցների արդյունավետ գործառնության շնորհիվ: Հատուկ տեղ է զբաղեցնում ընդհանուր սոցիալ-քաղաքական և էթնոդավան համատեքստը, որում առանձնացվում է Լիբանանում քաղաքացիական պատերազմի և դրա հետևանքով արտագաղթի դերը: Դա իրականորեն արտացոլվում է համայնքի ներքին և արտաքին էթնոմշակութային իրավիճակի բնույթի վրա: Այսպիսով, լիբանանահայ հեղինակների ներկայացրած հայեցակարգային դրույթները և նկարագրական ու վերլուծական նյութերը ստեղծում են սփյուռքի հայկական համայնքում ձևավորված իրավիճակի բավականաչափ ամբողջական պատկեր:

Երկրորդ բաժնում ներկայացված տեսական նախադրույթները և էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալների վերլուծությունը առաջին բաժնի տրամաբանական շարունակությունն են: Այդտեղ ներկայացված հոդվածները պարունակում են հայկական սփյուռքի հետազոտություններում բավականաչափ առանձնահատուկ նյութ՝ հիմնված էմպիրիկ հետազոտությունների տվյալների վրա: Վերջիններս հնարավորություն են տալիս լիբանանահայերի սոցիալական և էթնոմշակութային կյանքի մասին ստանալու որակապես նոր գիտելիքներ:

Առաջին՝ սոցիալական կողմը գնահատում է լիբանանահայերի սոցիալական ռեսուրսը, ներառյալ՝ սոցիալական կազմը և սոցիալական փոխակերպումների շարժընթացը, սոցիալական միջավայրը և հարաբերությունները, ինչպես նաև միգրացիոն մտադրությունները: Էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալները ցույց տվեցին, որ լիբանանահայերը բնութագրվում են ինտենսիվ սոցիալական տեղաշարժերի շնորհիվ ձևավորված բարդ սոցիալական կազմով: Լիբանանի հայերի սոցիալական միջավայրը արտահայտված է ուժեղ սոցիալական կապերով և ինստիտուտներով, որոնք ծնում են միանման սոցիալական արժեքներ, սոցիալական և ժողովրդագրական գործընթացների նմանատիպ միտումներ:

Երկրորդ՝ էթնոմշակութային կողմն արտահայտում է լիբանահայերի կյանքի երեք ոլորտ: Առաջինը լիբանանահայերի էթնոմշակութային միջավայրն է՝ էթնիկ բաղադրիչը արտացոլող հոգևոր կյանքի ոլորտներով: Այն արտահայտվում է համայնքային և եկեղեցական կյանքում մասնակցությամբ, լեզվական իմացությամբ, վարքով, կրթությամբ: Երկրորդը կապված է գնահատող դատողությունների հետ, որն արտահայտում է արժեքային կողմնորոշիչների համակարգը, ակնավոր ազգային ու մշակութային գործիչների, ինչպես նաև ազգամիջյան ամուսնությունների հանդեպ վերաբերմունքը: Երրորդը էթնոհոգեբանական բաղադրիչն է, որը ներառում է կարծրատիպերը (հիմնականում ավտոկարծրատիպեր՝ իր էթնոսի կերպարը) և պատկերացումները հայրենիքի մասին: Այն վեր է հանում լիբանանահայերի մշակութային կերպարի հոմոգենությունը:

Վերջում հարկ է նշել, որ հայկական գործող գաղթօջախներից մեկի մենագրական հետազոտության երկու մոտեցումների համադրության ներկայացված փորձը կարելի է համարել ժամանակակից հայկական սփյուռքի ճանաչման երկար ուղու փուլերից մեկը: Ակնհայտ է, որ նման հետազոտական փնտրտուքի մշակումը և իրագործումը ունեն թեևտեսական, թե՛ գործնական նշանակություն: Տեսական դիտանկյունից կարևոր է էթնիկ խմբում տեղի ունեցող տարբեր գործընթացների (ժողովրդագրական, սոցիալական, հոգևոր) փոխազդեցության օրինաչափության հայտնաբերումը, որը հնարավորու-

թյուն է տալիս մշակելու ընդհանուր հիմնահարցը և օգտագործելու ոչ միայն միջգիտակարգային մոտեցումները, այլև ձևավորելու հետազոտական գործիքակազմ, որոնք անհրաժեշտ են այնպիսի բարդ երևույթի ուսումնասիրման համար, ինչպիսին հայկական սփյուռքն է: Գործնական տեսանկյունից նման հետազոտական փնտրտուքը ներդաշնակորեն տեղավորվում է թե՛ տեղական նշանակության, թե՛ միջպետական մակարդակի և թե՛ համազգային նպատակադրումներով անհրաժեշտ ծրագրերի և նախագծերի շրջանակների մեջ:

ЗАКЛЮЧЕНИЕ

Исследование ливанских армян как составное звено программы «Основные направления сравнительного исследования армян в своей и инонациональной среде: задачи и перспективы исследования» занимает исключительное место в исследованиях современной армянской диаспоры. Оно примечательно тем, что у ливанских армян, в процессе векового сосуществования с другими этносоциальными общностями этого полиэтнического государства, сложилась эффективно работающая система национальных институтов, выработались навыки достижения межнационального согласия и солидарности. В условиях многокультурной и многоязычной идентичности ливанского народа, с его многовековой историей и особых геополитических условий, армяне не только успешно интегрировались в общую канву полиэтнического государства, но и смогли стать составной частью всей палитры его многообразия.

Авторы первого раздела сошлись на мысли, что ливанские армяне, всегда находились под воздействием повторяющихся и чередующихся событий на Ближнем Востоке и в самом Ливане, и что последнее требовало от них больших усилий в противодействии этим событиям. Армяне Ливана смогли не только сохранить и развить свои национальные структуры и высокое качество их функционирования, но и обеспечили себе прочные позиции, как в ливанском обществе, так и в государственных институтах страны.

Современное положение ливанской армянской общины в политическом, экономическом, социальном и культурном планах выгодно отличается от прошлого и, что очень важно, от положения многих других армянских общин. Несмотря на последствия глобализационных процессов, приводящих к деэтнизации современных обществ, ар-

мяне Ливана смогли сохранить свою национальную идентичность. Однако, невзирая на обнадеживающие послылы в данной ситуации, следует несколько осторожно подходить к оценке перспектив сохранения их этнических параметров. Происходящие сегодня процессы в среде ливанских армян во многом могут быть показательны для многих других групп этноса, проживающих в своей и инациональной среде. Для большинства из них этносоциальные трансформации в инациональном окружении могут иметь одинаковый вектор, хотя, в зависимости от конкретных обстоятельств каждая группа может не только по-разному их переживать, но и находиться на разных стадиях развития.

Это подтверждается анализом интеграционных процессов, происходящих среди ливанских армян. Они проистекают в двух ипостасях: на локальном внутриливанском уровне армянского контингента и на общеармянском уровне. На первом уровне происходит консолидация отличающихся по демографическим (половозрастным, миграционным и т.п.), социальным и в определенной мере этнографическим параметрам разных групп этноса. Ее итогом становится формирование интегрированного субкультурного целого с национальными институтами и центрами. Однако, этот процесс становления был неоднозначен и характеризовался как взлетами так и падениями. Условно армянская община Ливана пережила четыре периода своей вековой истории: 1920-1950гг. – пассивная ; 1950-1975гг. взаимодействия; 1975-1990гг. – отступления и 1990 по с/д – воссоздания.

Многофакторный анализ армянской общности Ливана показал взаимосвязанность локальных, региональных, событий, обуславливающих ее государственно-правовое положение, роль в общенациональных процессах и особенностях культурной жизни. В основополагающих элементах материальной культуры, ливанские армяне сохранили свои национальные маркировки. Современную духовную жизнь армян Ливана следует рассматривать на историческом фоне, так как именно в ретроспективном сравнении можно, во первых, проследить логику развития того или иного культурного явления, во вторых -

прояснить ее структурные изменения, в третьих - анализировать содержание этих изменений. Поэтому особое значение приобретают обстоятельства, которые воздействуют на функционирование и развитие элементов национальной культуры. В первую очередь это относится к этносоциальной среде, формирующейся в результате эффективного функционирования национальных объединений, культурных и просветительских центров и других общинных структур. Отдельное место занимают общий социально-политический и этноконфессиональный контексты, в которых выделяется роль гражданской войны в Ливане и тенденции эмиграции. Они реально отражаются на характере этнокультурной обстановки вне и внутри общины. Таким образом, представленные учеными из армянской общины Ливана, концептуальные положения и последующие описательные и аналитические материалы создают весьма цельную картину сложившейся ситуации в данной диаспоральной общности армян.

Представленные во втором разделе теоретические посылы, выкладки этносоциологических материалов являются логическим продолжением первого раздела. Предложенные в нем статьи содержат особый в исследованиях армянской диаспоры материал, основанный на конкретных данных эмпирического исследования, и обеспечивают получение качественно новых знаний по двум взаимосвязанным составным аспектам жизнедеятельности армян Ливана – социальной и этнокультурной.

Первый из них содержит оценку социального ресурса армян Ливана, включающий социальный состав и динамику социальных перемещений, социальные среду и отношения, а также, отображает миграционные намерения. Материалы этносоциологического исследования показали, что ливанские армяне характеризуются сложным социальным составом, который сложился в результате интенсивных социальных перемещений. Социальная среда армян Ливана выражена сильными социальными связями и институтами, порождающими сходные социальные ценности, близкие тенденции социальных и демографических процессов.

Второй аспект исследования – этнокультурный, он отразил три стороны жизни ливанских армян. Первая из них – этнокультурная среда ливанских армян, которая определяется теми сферами духовной жизни, в которых отражается этническая составляющая. Она проявляется в участии в общинной и религиозной жизни, в языковой компетенции и поведении, образовании. Вторая сторона связана с оценочными суждениями, отражающими систему ценностных ориентаций, отношение к выдающимся национальным деятелям, а также к межнациональным бракам. Отличительной чертой третьей стороны является этнопсихологическая компонента, включающая стереотипы, в основном – автостереотипы (образ своего этноса) и представления о родине. Она указывает на гомогенность культурного облика ливанских армян.

В заключение следует указать, что представленный опыт совмещения двух подходов в тематике монографического исследования одного из действующих армянских переселенческих очагов, можно считать одним из этапов длинного пути познания состояния современной армянской диаспоры. Очевидно, что разработка и реализация такого рода исследовательского поиска имеет как теоретическое, так и практическое значение. С теоретической точки зрения важно прослеживание закономерности взаимодействия разных процессов, (демографических, социальных, духовных), происходящих в этнической группе, что, в итоге, делает вероятным разработку общей проблематики и использование не только междисциплинарных подходов, но и формирует набор исследовательского инструментария, необходимого в исследовании такого сложного явления как современная армянская диаспора. С практической точки зрения, значение подобного рода исследовательского поиска гармонично укладывается в рамки необходимых программ и проектов, как местного значения, так и уровня межгосударственных отношений и общенациональных целеполаганий.

CONCLUSION

The study of the Lebanese Armenians as a part of the basic trajectories, problems and prospects in the project “*The Armenians in Their Own and Foreign Environment: Comparative Ethno-sociological Studies*” has its peculiar value in understanding current trends of the Armenian Diaspora. The account of the experience of the Lebanese Armenians in preserving their identity is very important for the development of similar future scientific research projects. It is unique in the sense that the almost one-century-long coexistence of the Lebanese Armenians with other communities in the Lebanese multiethnic and multisociological state has shaped a system of effective communal-national institutions, and developed skills of interethnic agreement and cohabitation. The Armenians have successfully integrated in the multicultural and multilingual Lebanese milieu in the context of Lebanon’s unique, centuries-old history and peculiar geographic factors. Furthermore the Lebanese Armenians have been able to become a constituent part of the Lebanese multiethnic weave.

The authors of the first section are unanimous in stating that being under the constant influence of recurring developments in the Middle East and Lebanon, the Lebanese Armenians have continuously made huge efforts to counteract those pressures. The Lebanese Armenians have been able not only to preserve and develop their communal institutions, but to maintain their high productivity. They have maintained their active status and strong presence in the Lebanese polity as well as in the state apparatus. The political, economic, social and cultural features of the current Lebanese Armenian community differ significantly from those of its past as well as from those of other Armenian Diaspora communities.

Notwithstanding the globalization, which leads to de-ethnicizing communities, the Lebanese Armenians maintain their national identity.

Nonetheless, one has to be careful regarding the promising conditions of the Lebanese Armenians when assessing the prospects for the preservation and development of their ethnic features.

The current processes in the Lebanese Armenian community might be very indicative and useful for other Diaspora Armenian groups living in their own and foreign milieus. Generally, for Armenian Diaspora communities living in their own and foreign milieus, ethno-sociological transformations have a single direction. However, due to specific conditions and stage of development, each Diaspora community may face these challenges differently. This is validated through analyzing the integrative process within the Lebanese Armenian community. This integration has been moving on two tracks: a) within the local milieu, and b) within the pan-Armenian milieu.

Within the local milieu one may observe a trend of diverse demographic (age-group as well as gender-oriented) shifts into different groups with specific social and ethnographic features. This leads to the formation of an integrated subculture within national institutions and centers. The process, however, does not have a single direction. It has had times of acceleration as well as times of slow progress. The Lebanese Armenian community has undergone four stages of integration within the period of its 100-year existence: the passive decades between 1920 and 1950, the cross-fertilization period between 1950 and 1975, the decline era of 1975 to 1990, and the re-production stage since the 1990s.

A multifactorial analysis of the Lebanese Armenian community showed the interconnection of local and regional developments, which condition the community's legitimacy and status in the state and role and place in pan-national processes as well as features of its cultural life. The Lebanese Armenians have preserved the basic national character of their material culture. One needs to observe the contemporary spiritual aspect of the Lebanese Armenians in its historical context, because a retrospective comparison makes it possible to follow the logic of the development of a given phenomenon. Furthermore, it enables one to discern the structural changes in spiritual life and to analyze the content of these changes.

This is why the study of the conditions and factors which impact the development and functioning of the constituent elements of the national culture bears specific importance. This refers first to the ethno-social milieu, which has been shaped as the result of the effective functioning of communal structures and national subgroups as well as cultural and enlightenment centers. The ethno-sectarian and socio-political context play an important role, as experienced during the Lebanese civil war, which led to emigration. This is directly reflected in the interior and exterior nature of the ethno-cultural status of the community. Accordingly, both the framework and the descriptive as well as the analytical material presented in the papers of the Lebanese authors depict a relatively complete picture of the conditions of a diasporic Armenian community.

In the Part Two the analysis of the theoretical hypotheses and the data of the ethno-sociological research constitute the logical continuation of Part One. The papers presented carry a significant amount of material on Diaspora research based on empirical studies. They enable the production of a new set of qualitative knowledge on the social and ethno-cultural life of the Lebanese Armenian community.

The study assesses the social resources of the Lebanese Armenians, including the social forms and the mode of social transformations, the social milieu and relations as well as migratory trends. The study of the ethno-sociological data demonstrates that the Lebanese Armenians are characterized by a complex social format that has been developed due to intensive social mobility. Indeed, the Lebanese Armenian social milieu reflects strong social connections and institutions, which produce similar social values as well as similar social and demographic trends.

The ethno-cultural aspect of the study reflects three areas of Lebanese Armenian life: a) the Lebanese Armenian ethno-cultural milieu, with its spiritual life facets. This is expressed through participation in church life, lifestyle, knowledge of language and education, b) the Lebanese Armenian value system. It is expressed through the attitude towards renowned cultural and national figures as well as endogamy, c) the ethno-psychological constituent of the Lebanese Armenians, which includes

the stereotypes (basically the self- or auto-stereotypes of the ethnos character) and the depiction of the fatherland. It signifies the homogeneity of the cultural character of the Lebanese Armenians.

In conclusion, one must say that conducting monographic research on an active Armenian Diaspora community through the combination of two approaches may be considered a step in the long road of understanding the Armenian Diaspora. Evidently, developing and implementing such a research experience has both theoretical and practical importance. From the theoretical perspective it is important to dig out the features of the cross- (or mutual) influence of diverse demographic, spiritual, and social processes within the ethnic group. This enables one to develop the broad basic question, use interdisciplinary approaches and develop a research toolbox, all of which are essential in studying such a complex phenomenon as the Armenian Diaspora. On the other hand, in practical terms, such a research experiment is harmoniously situated within the research designs of local, intra-state and pan-national studies.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցարանի բովանդակությունը

1. Բնակության տևողությունը
2. Տեղափոխվածների ելքի երկիրը և բնակավայրը
3. Զբաղմունքը, աշխատանքի բնույթը, աշխատանքային գործունեության բնագավառը և պաշտոնը տեղափոխվելուց անմիջապես հետո
4. Հոր ծննդավայրը
5. Կրթությունը
6. Կրթության վայրը
7. Առաջին աշխատանքի բնույթը, աշխատանքային գործունեության բնագավառը և պաշտոնը
8. Հոր զբաղմունքը հարցվողի աշխատանքային գործունեության սկզբին
9. Հոր աշխատանքի բնույթը, աշխատանքային գործունեության բնագավառը և պաշտոնը
10. Հարցվողի ներկայիս զբաղմունքը, աշխատանքային գործունեության բնագավառը և պաշտոնը
11. Մեփական գործ հիմնելու ցանկությունը
12. Անձիք, ում օգնության են դիմում խնդիրների դեպքում
13. Նույն բնակավայրում ապրող մտերիմներին այցելելու հաճախականությունը
14. Դրացիների ազգային պատկանելիությունը
15. Սոցիալական կապերի խտությունը
16. Պատկերացումները «լավ ապրել» հասկացության մասին
17. Կյանքում ունեցած ձեռքբերումները
18. Ներգրավվածությունը համայնքային կառույցներում
19. Անձնային, համայնքային և այլ մտահոգությունները
20. Ընտանիքի կազմը
21. Հաճախած դպրոցը
22. Երեխաների հաճախած դպրոցը
23. Ընտանիքի և ազգականների տարածական ցրվածությունը
24. Հայերին բնորոշ բնավորության գծերը

25. Խառնամուսնությունների հանդեպ վերաբերմունքն ու նախընտրելի ազգերը
26. Նշվող տոները
27. Վերաբերմունքը կրոնի նկատմամբ
28. Եկեղեցու պատկանելիությունը
29. Եկեղեցի գնալու հաճախականությունը
30. Տան խոսակցական լեզուն
31. Տեղեկատվություն ստանալու աղբյուրը և օգտվելու հաճախականությունը
32. Հայկական լրատվամիջոցների տեղեկատվության բովանդակությունը
33. Անցյալի ու ներկայի գործիչները, որոնց հանդեպ հարգանք են տաճում
34. Պատկերացումը հայրենիքի մասին
35. Հայաստան մեկնելու հաճախականությունը և հիմնական պատճառները
36. Արտագաղթի մտադրությունները
37. Ծննդյան տարեթիվը
38. Սեռը
39. Ընտանեկան կարգավիճակը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ
ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
11

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅԵՐՆ
ԱՅՍՕՐ

ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը
Արթուր Հարությունյանի

ISBN 978-9939-9208-0-1



9 789939 920801